

Հ. Խ. ԴԻԼԱՆՅԱՆ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի
Ծ Ի Ր Ա Ն Ջ Ե Ր Ը

Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ 1943

634:21

4957

№-47

Государственный архив

Записки

Исторический отдел

52.

634.21

7-47

Հ. Խ. ԴԻԼԱՆՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱՄ Է 1961

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԾԻՐԱՆՆԵՐԸ

~~4957~~

A ¹¹ 18637

ԵՄՐԱՆՐԱԿԱՆ ԿՈՒՆԳԻՍ.

Ն. Ն. ՊՐՈՍՏՈՍԵՐՄԻ—բիրոզ. գիս. դոկտոր

Մ. Հ. ՄԱՂՍԱՍՅԱՆ—Գյուղատնտ. գիս. թեկ. դոցենտ

Վ. Ա. ՍԱՅԱԿՅԱՆ—Ավագ գիս. աշխատող

Ընդհանուր խմբագրութեամբ—Գյուղատնտ. գիս. դոկտոր պրոֆ.

Մ. Գ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

Ձեռք խմբագիր—Գյուղատնտ. գիս. թեկ. դոցենտ Մ. Հ. ՄԱՂՍԱՍՅԱՆ

ՀՆՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

«Հայաստանի ծիրանները» վերնագիրը կրող ներկա աշխատությունը դրված է ծիրանի տեղական սորտերի ու այլատեսակների ութնամյա ուսումնասիրության հետևանքով:

Ծիրանը, ինչպես և դեղձը, առաջնակարգ պտղատու տեսակ է Հայաստանում: Այն աչքի է ընկնում իր բազմատրտությամբ և հանդիսանում է հիանալի, բարձրորակ պտուղ:

Հայկական ծիրանի մի քանի սորտերն իրենց քաղցրությամբ ու համեղությամբ աշխարհում առաջնակարգ տեղ են ըննում: Դրանց թվին են պատկանում «Հալախ», «Խոսրովշահի», «Տամբան» և այլ սորտերը: Չնայելով դրան, Հայաստանի ծիրանները մինչև այժմ դեռ քիչ են ուսումնասիրված: Ծիշտ է, գրականության մեջ հանդիպում են պոմոլոգիական բնութքի կցկուտը ավայրներ, որոնք վերաբերում են Հայաստանում տարածված ծիրանի որոշ սորտերին, սակայն այդ ավայրները քննվ լիակատար չեն: Հայաստանի ծիրանները նկարագրած առանձին հեղինակներից կարելի է հիշատակել Կ. Յ. Կոստինային և Ա. Խ. Ռոլլոֆին: Հայաստանի պտղատու կուլտուրաների, այդ թվում նաև ծիրանենիների սորտերի մասնաբանում ուսումնասիրությունը կատարել է Հայկական ՄԱՍ-ի Սննդարդյունաբերության ժողովմասի Այդեպտղաբուծական Սեկիցիոն կայանը, սկսած 1930 թ. մինչև 1938 թ.:

Սկզբում հետազոտությունները մենք կատարել ենք էքսպեդիցիոն ճանապարհով, նպատակ ունենալով հայտարարել Ռեսպուբլիկայի պտղատու կուլտուրաների ընդհանուր ֆոնդը, ծիրանի արժեքավոր սորտերն ու այլատեսակները, Դրանից հետո կատարվել է նրանց բիոլոգիական և անտեսական-տեխնոլոգիական հասկացությունների ստացմանը ուսումնասիրությունը: Հիմնականում ուսումնասիրությունը ընդգրկել է ծիրանի արդյունաբերական մշակության ապրանքները: Սորտերի բազմատեսակությամբ առավելագույն հարուստ են Արարատյան դաշտի ապրանքները և նրան կից նախախնային շրջանները, ինչպես նաև Միկոյանի ու Մեղրու շրջանները:

Սորտերի բնութագրերը կազմված է տարբեր ուսումնասիրում մի շարք տարիների ընթացքում նրանց ուսումնասիրելու հիման վրա, ըստ որում պոմոլոգիական նկարագրությունը տրվում էր յուրաքանչյուր սորտի առնվազն 100 պտղի ուսումնասիրության հիման վրա:

Մի բանի՝ զարգացման ֆենոֆազերի ուսումնասիրութիւնը կատարվել է Հայաստանի տարրեր գոտիներում (աշխ. ղեկավար՝ Մ. Բ. Մանաղյան)։

Ստանդարտ սորտերի ծաղկման բիոլոգիան ուսումնասիրված է դաշտային պայմաններում (աշխ. ղեկավար՝ Հ. Ս. Դիլանյան)։ Եզրակացութիւնները հաստատված են լաբորատորական հետազոտութիւններով (կատարված Մ. Ա. Համբարձումյանի կողմից)։ Երեք տարվա ընթացքում կոլխոզներում ու սովխոզներում յուրաքանչյուր առանձին սորտի բերքը հաշվի առնելու համար հատուկ աշխատանքներ են կատարված (ղեկավ. Հ. Ս. Դիլանյան)։

Սորտերի մորֆոլոգիական ու բիոլոգիական ուսումնասիրութեան աշխատանքներին մեծ մասնակցութիւն է ունեցել րաժնի աշխատակցուհի Մ. Բ. Մանաղյանը, որի համար նրան խորին շնորհակալութիւն են հայտնում։

Առանձին սորտերի քիմիական բաղադրութեան ուսումնասիրութիւնը և վերամշակվող արտադրանքի զանազան տեսակների հետազոտումը կատարված են համապատասխան լաբորատորիաներում (լաբորատորիայի վարիչ՝ Բ. Աֆրիկյան, տեխնոլոգ՝ Մ. Մաղմանյան)։

Թե թարմ և թե վերամշակված վիճակում գտնվող պտուղների որակի գնահատականը տվել են Կայանի և Հայկոններվարեստի զեզուստացիոն հանձնաժողովները, իսկ որոշ սորտերի գնահատականը՝ տվել են նաև Գրավկոնսերվի նուշնպիսի հանձնաժողովները։



Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ծ Ի Ր Ա Ն Ի Տ Ա Ր Ա Ծ Մ Ա Ն Գ Ո Տ Ի Ն Ե Ր Ը Ե Վ Ն Ր Ա Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն
Ն Խ Ա Ն Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

Ամենահին ժամանակներից սկսած՝ ծիրանենին եղել է Ասիայի արևելյան երկրներում մշակվող տարածված պողպատու կուլտուրաներից մեկը: Արևմտյան Եվրոպա նա մուտք է գործել Հայաստանի վրայով, մեր թվարկության սկզբում, և այնտեղ երկար ժամանակ մնացել է միայն իրբև վանքերի ու պղնձականներին սեփականություն: Այնպիսի ուշ ժամանակներում այն տարածվել և Հասարատուն տեղ է գրավել հարավ-եվրոպական սրբաբեկոր-ծության մեջ, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Հարավային Աֆրիկայում և Այստրալիայում:

Կուլտուրական ծիրանենու տարածման արևայլ բավական լայն է ըստ Կոստինայի տվյալների, այն տարածվում է 50° հյուսիսային ու 35° հարավային լայնությունների միջև, իսկ մի քանի տեղերում, օրինակ, Նորվեգիայում, հասնում է մինչև 61° հյուսիսային լայնություն:

Սառնամանիքին զգալի չափով դիմանալու շնորհիվ (ձմռանը դիմանում է 31—32° ցրտին ըստ Յ.) կուլտուրական ծիրանենին լայն չափով տարածված է նաև բարձրադիր վայրերում. լավ է աճում, թե համեմատաբար ցածրադիր սելյեֆ ունեցող (ծովի մակերևույթից 340 և ավելի մետր բարձրությամբ) ուսյուններում և թե լեռնային բարձրուրդներում, մանավանդ չող կլիմա ունեցող տեղերում (մինչև 2000 մ. ծովի մակերևույթից բարձր):

Չնայելով, որ ծիրանենին լայն չափով տարածված է թե ցածրադիր և թե բարձրադիր վայրերում, սակայն ծիրանենու

արդյունաբերական մշակույթի ուսյոնները համեմատաբար սահմանափակ են և ոչ մեծ տարածություններով կենտրոնացված են՝ Միջին, Կենտրոնական և Մերձավոր Ասիայում ու Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի, Այստրալիայի և Հարավային Ամերիկայի որոշ ուսյոններում :

Ծիրանի արդյունաբերական կուլտուրայի ուսյոնների այդ սահմանափակության պատճառը նրա բիոլոգիական առանձնահատկություններն են, այն է՝

1) Ծիրանի ծառը չափազանց վաղ է ծաղկում, որի հետևանքով անկայուն դարուն ունեցող ուսյոններում հաճախ վնասվում է դարնանային ցրտերից :

2) Սոնայի կլիմա ունեցող վայրերում, մանավանդ դարնանը, հեշտությամբ է ենթարկվում անկային հիվանդություններին :

3) Պտուղները միաժամանակ և շատ արագ են հասունանում և քիչ դիմացկուն են, որը պահանջում է բերքը սեպտեմբերի և օկտոբերի խիստ կարճ ժամկետներում :

Իսկ ծիրանենու արագ տարածմանը և նրա մշակման ուսյոններում նրա ունեցած բախական մեծ տեսակարար կշռն նպաստում են այդ կուլտուրայի արժեքավոր առանձնահատկությունները — արագ աճը և ստղարերության շրջանի վաղ սկսվելը, պտուղների շուտ հասունանալն ու կանոնավոր բերքատվությունը :

Ծիրանը հասունանում է կեռասի ու բալի հասունացման վերջից մինչև սալորի, դեղձի և հնդավոր պտուղների վաղահաս սորտերի հասունացման սկիզբը, այդ կերպ սղահասակով թարմ պտուղների անընդհատ մատակարարումը բնակչության : Ծիրանենու պտուղները մեծ նշանակություն ունեն մարդու սնույի համար, որովհետև նրանք պարունակում են ղղալի քանակությամբ չաքարներ, A և C վիտամինները, մեծ քանակությամբ ճարպանյութեր իրենց սեբներում (մոտ 51%) և մի շարք ուրիշ էլեմենտներ :

Սովորաբար ծիրանը ղործ է անվում չորացած (գլխավորապես արևելյան երկրներում և Կարլիֆորնիայում), թարմ և վերամշակված վիճակում (արևմտյան երկրներ, Կարլիֆորնիա, Ավստրալիա) . որոշ երկրներում (Չինաստանում) ծիրանը նաև աղ և թթու է ղրվում : Առանձնահատուկ նշանակություն ունի չորացրած ծիրանը, որովհետև չորացնելու ղեկքում պահպանվում է վիտամինների որոշ մասը և բացի դրանից, այն միշտ էլ կարելի է մատակարարել ամենահեռավոր ուսյոնների աշխատավորությանը :

Ծիրանն արժեքավոր է նաև այն պատճառով, որ պիտանի է ամեն տեսակ տեխնիկական վերամշակման համար. նրանից պատրաստում են կոմպոտ, քաղցրավենիք, ջլամ, պյուրե, պափլոց, ժելե, մարմեղազ, պաստեղ և այլն: Ծիրանի սերմերը հանդիսանում են միակ պրոդուկտը, որը փոխադրվում է նշին, բացի այդ, նրանցից ստացվում է յուղ, որն օգտագործվում է թե սննդի և թե տեխնիկական նպատակներով համար: Սերմերի կեղևը լայն չափով օգտագործվում է քիմիական արդյունաբերության մեջ. ծիրանենու բնափայտն էլ, շնորհիվ իր ամբուխյանը, օգտագործվում է աղացի տուրբիններ և զանազան աստղապարծական իրեր արտադրելու համար:

ԾԻՐԱՆԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Թե երբ և որտեղ է սկսվել ծիրանի մշակութունը, այդ ճիշտ հայտնի չէ: Ինչպես գրում է Կոստինյան, ծիրանն առաջին անգամ հիշատակված է մեր թվադրությունից 2000 տարի առաջ, որպես կենտրոնական Չինաստանում սիրված պտուղ: Արժանահավատ տեղեկություններ չկան նաև այն մասին, թե այն՝ ի՞նչ ճանապարհներով է տարածվել արևմտյան Ասիայում: Կոստինյանի ենթադրությամբ ծիրանը Միջին Ասիայի վրայով տարածվել է Իրանում, Փոքր Ասիայում ու Անդրկովկասում և միայն մեր թվադրության սկզբում Հայաստանից անցել է Հունաստան՝ հայկական խնձոր անվան տակ: Քանի որ ծիրանը Հայաստանի վրայով է անցել Նվրոդա, երկար ժամանակ նրա հայրենիքը համարել են Հայաստանը և նրան այժմ էլ անվանում են կամ *Prunus Armeniaca* (բոս Լիննեյի), կամ դրանում են իբրև առանձին տեսակ — *Armeniaca* (բոս Տուռնեֆորի): Ներկայումս արդեն պարզված է համարվում, որ ծիրանենու հայրենիքը Չինաստանն է, ուր մինչև այժմ էլ վայրի ծիրանենու մայրաուտաներ կան:

ԾԻՐԱՆԵՆՈՒ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍՍՈՒՄ-ՈՒՄ

Ծիրանենու մշակությամբ ՍՍՈՒՄ-ում առաջին տեղն են բռնում միջին-ասիական սեպուրբիկաները — Ուզբեկստանը և Տաջիկստանը և մասամբ Կիրգիզական սեպուրբիկան (հարավային մասը). այստեղ է կենտրոնացված Միության մեջ եղած ծիրանենու անկարկների կեսից ավելին, իսկ նրանցից ստացվող ընդհանուր արտադրանքը՝ գերազանցում է Միության բոլոր սեպուրբիկաներինը միասին վերցրած: Այստեղ ծիրանը մեծ

մասամբ չորացվում է («ուռյուք») : Չորացրած ծիրանի արտահանութեամբ այդ սեսորւորքիկաները Միութեան մեջ առաջին տեղն են բռնում, տարեկան տարւով մոտ 30000 տոննա չորացրած ծիրան և մինչև 450 տոննա ծիրանի մաքրված կորիզ (Կոստինայի տվյալներով) :

Թուրքմենական և Ղազախստանի ՍՍՌ-ում ծիրանի մշակութեանը տեղական, սարսուղական բնույթ է կրում :

Տեղում վերամշակվող ծիրանի արտադրութեամբ երկրորդ տեղն է բռնում Դաղստանը և Անդրկովկասյան սեպուրքիկաները, որոնցից Հայաստանը առաջին տեղն է գրավում թե արտագրանքի որակի և թե քանակի տեսակետից :

Ծիրանի կուլտուրայի մնացած ուայոնները, այն է՝ ՈւՍՍՌ, Օրջոնիկիձևի երկրամասը, Ռոստովի մարզը, Կրասնոդարի երկրամասը, Ղրթվի ԱՍՍՌ, Ստալինգրադի մարզը և Հեռավոր-արևելյան երկրամասը, — ծիրանի մշակութեան դարդացման գործում ուշագրութեան են գրավում միայն նրանով, որ նպատակ ունեն բնակչութեանը հայթայթել վաղահաս թարմ մրդեր, քանի որ նրանք ափելի մտալի են ՍՍՌ-ի հիմնական արդյունաբերական ու սպասողական կենտրոններին :

ԾԻՐԱՆԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ինչպես ասված է վերևում, Հայաստանում ծիրանը մշակվում է հնադարյան ժամանակներից — նրա մշակումը սկսվել է մեր թվագրութեանից դեռ 2000 տարի առաջ : Ծիրաններն ճնշող մեծամասնութեանը սրտեանում է սովորական տեսակին — *Armeniaca vulgaris* (Lam.) և շատ հազվադեպ դեպքում են հանդիպում *Armeniaca Dasicarpa* (Ehrh.) տեսակի ծառեր (սեպուրք ծիրանների, ծիրան-սալոր) :

Ներկայումս սովորական ծիրանի արդյունաբերական մշակութեանը կենտրոնացված է Հայաստանի հարավային մասում, Արարատյան դաշտում և դրան կից նախալեռնային ու լեռնային որոշ շրջաններում, Հոկտեմբերյանի, Ղամարլուի, Վաղարշապատի, Վեդու, Չանդերասարի, Աշտարակի, Կոտայքի, Երևան քաղաքի Բերիայի քաղաքամերձ շրջանում, ինչպես նաև Դարբասդյաղում, Միխայանի, Մեղրու և Աղիգորեկովի շրջաններում : Վերջին տարիներում, ծիրանն անկեցվում է նաև 2100 մ. ափելի բարձրադիր լեռնային շրջաններում :

Ստորև բերվում է Հայաստանում ծիրաննուս անկախներն տարածութեան աղյուսակը .

ԾԻՐԱՆՆՈՒ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-ՈՒՄ

(Ըստ Հայկական ՍՍՌ Հողգործումատի ալյակների)

ПЛОЩАДИ АБРИКОСОВЫХ НАСАЖДЕНИЙ ПО РАЙОНАМ АРМ. ССР
По данным НКЗема Арм ССР

| Շրջանները Районы | Ծիրանեռ տնկարկերի տարածությունը մինչև 1937 թ. (քառ քառաբնակի) Площади абрикосовых насаждений до 1937 г. (в корнях) | Ն ր ա ն ց ի ց И з н и х | | Նոր տնկարկների տարածությունը՝ հեկտարներով (1937—40 թ. կախողներով) Площадь молодых абрик. насаждений в гектарах (1937—40 г. — в колахзах) | Ծիրանեռ տնկարկների բնդանուց տարածությունը՝ մինչև 1940 թ. Общая площадь абрик. насаждений до 1940 г. | Ծիրանեռ տնկարկների տարածությունը ալյակներով (հեկտարներով) Площадь абр. насажд. в совхозах (в гект.) |
|------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------|--------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------|
| | | Բեղաբույս (քառաբնակի) Плодоносящих (в корнях) | Ոչ բեղաբույս (քառաբնակի) Не плодоносящих (в корнях) | | | |
| 1. Ազիզբեկով Азизбеков | 24.028 | 13.0518 | 10.510 | 123 հեկ. | 207 հեկ. | |
| 2. Ալավերդի Алаверды | 3.009 | 1.319 | 1.590 | 19 հեկ. | 30 հեկ. | |
| 3. Ապարանի Абаран | 375 | — | 375 | 2 հեկ. | 3.3 » | |
| 4. Արթիկ Артик | 13 | 7 | 6 | — | 0,05 » | |
| 5. Ախտա Ахта | 8.230 | 4.250 | 3.953 | 27 հեկ. | 56 » | |
| 6. Բասարգեչար Басаргечар | 3.396 | 125 | 3.271 | 10 հեկ. | 22 » | |
| 7. Աշտարակ Аштарак | 63.635 | 42.646 | 20.989 | 30 հեկ. | 251 » | |
| 8. Վաղարշապատ Վաղարշապատ | 61.756 | 31.377 | 30.379 | 96 հեկ. | 311 » | 196,93=507,9 |
| 9. Վեդի Веди | 11.286 | 4.187 | 7.099 | 118 հեկ. | 157,2 » | 22 հ=179,2 |
| 10. Գորիս Горис | 5.977 | 4.114 | 1.863 | 14 » | 35 » | |
| 11. Դալինյան Далижан | 126 | 65 | 61 | — | 0,53 » | |
| 12. Զանգիբասար Զանգիբասար | 68.28 | 1.054 | 5.766 | 58 » | 82 » | |
| 13. Իջևան Иджеван | 3.008 | 395 | 2.613 | — | 11 » | |
| 14. Կալինինո Калининно | 204 | 56 | 148 | — | 0,7 » | |
| 15. Կամարլու Камарлу | 40.447 | 19.714 | 20.733 | 201 » | 347 » | |

Շրջաններ
Районы

Մերջանների անկարգիների տարածությունը
մինչև 1937 թ. (ըստ ծառայության)
Площади абрикосовых насаждений до
1937 г. (в корнях)

Ն ր ա ն ց ի ց
И з н и х

Բերրի տու. (ծառայության)
Плодоносящих (в корнях)

Ոչ բերրի տու. (ծառայության)
Не плодоносящих (в корнях)

Նոր անկարգիների տարածությունը՝ հեկտարներով (1937—40 թ. կողմնորոշում)
Площадь молодых абрик. насаждений в
гектарах (1937—40 г. в колхозах)

Մերջանների անկարգիների ընդհանուր տարածությունը մինչև 1940 թ.
Общая площадь абрик. насаждений до
1940 г.

Մերջանների անկարգիների տարածությունը
ավանդներով (հեկտարներով)
Площадь абр. насажд. в совхозах (в
гект.)

| | | | | | |
|--------------------------------|----------------------|----------------------|------------------|-----------|---------|
| 16. Դարարաղար Карабахлар | 1 2008 | 5 582 | 6426 | 110 » | 152 » |
| 17. Դափան Кафан | 1 266 | 142 | 1 124 | — | 43 » |
| 18. Կիրովական Кировакан | 594 | 204 | 390 | 2 » | 4.0 » |
| 19. Կոտայք Котайк | 35.786 | 18.534 | 17252 | 63 » | 187.2 » |
| 20. Կրասնոսելի Красносельск | 29 | 4 | 25 | — | 0.1 » |
| 21. Մարտունի Мартуни | 1 114 | 14 | 11 00 | — | 4.0 » |
| 22. Մեղրի Мегри | 25.156 | 13.629 | 11 527 | 7 | 88 » |
| 23. Միկոյան Микоян | 62 359 | 32 708 | 29 651 | 42 | 220 » |
| 24. Նոյեմբերյան Ноемберян | 941 | 752 | 189 | — | 3.3 » |
| 25. Հոկտեմբերյան Октемберян | 102.454 | 20 515 | 81.939 | 75 | 485 » |
| 26. Սևան Севан | 11 | — | 11 | — | — |
| 27. Սիսիան Сисиан | 899 | 389 | 510 | — | 2.12 » |
| 28. Սպիտակ Спитак | 352 | 68 | 254 | — | 1.2 » |
| 29. Ստեփանավան Степанаван | 39 | 28 | 11 | — | 0.2 » |
| 30. Թալին Талин | 18.539 | 4 081 | 14 458 | 40,5 | 104.9 » |
| 31. Շամշადին Шамшадин | 951 | 246 | 705 | 3 | 7 » |
| 32. Երևան Ереван | 86.445 | 35.373 | 51.072 | 139 | 438.2 » |
| 33. Լենինական Ленинакан | 72 | — | 72 | — | 0.25 » |
| Ընդամենը Итого | 583517 = =2030 Կ. | 358648 = =8895 Կ. | 32868 1145 Կ. | 1144 հեկ. | 3174 Կ. |

1074 Կ.

176 Կ.

Ըստ պրոֆ. Մ. Գ. Թումանյանի, Հայաստանում ծիրանենու
և ընկույնենու մշակության ամենարարձր դոնան դառնում է ծովի
մակերևույթից զլարի բարձրության վրա (Սևան լճի Գյունեյի
ափերը) :

Մերանենին, որպես հիմնական պողատու կուլտուրաներից
մեկը, բավական մեծ տեսակարար կշիռ ունի Հայկական ՍՍՌ-
պողարուծության մեջ: 1937 թ. պատարտիզացիայի ալյալներ
համաձայն, Հայաստանում կային ընդամենը 11-335 հեկտար
պողարուծական տնկարկներ, որոնցից ծիրանենու — 2030 հեկ-
տար, որը կազմում է բոլոր պողատու տնկարկների 17.9%-ը:
Հետագա տարիներում պողարուծության արագ զարգացման կա-
պակցությամբ ընդարձակվեցին նաև ծիրանենու տնկարկների
տարածությունները, մասնավոր Հայկ. ՍՍՌ ցածրադիր գոտու
չրջաններում: Այսպես, արդեն 1940 թ. բոլոր պողարուծական
տնկարկների տարածությունը հասավ 19-500 հեկտարի, իսկ ծի-
րանենու տնկարկների տարածությունը—3174 հեկտարի, որը կազ-
մում է պողատու տնկարկների ամբողջ տարածության 16%-ը:
Համ Կ(բ)Պ Կենտկոմի և ՍՍՌԺ ժողկոմսովետի 1940 թ. սեպ-
տեմբերի 6-ի որոշման համաձայն, Հայաստանի պողարուծական
տնկարկների տարածությունները 1944 թ. պետք է հասցվի մին-
չև 39-500 հեկտարի, այսինքն ավելանա 20000 հեկտարով, իսկ
Մերանենու տնկարկների տարածությունները պետք է ավելանա
2-400 հեկտարով:

Հայկական ՍՍՌ չրջաններում ծիրանենու տնկարկների բրո-
նած տարածությանը վերարևող վերք բերված ալյուտակից
երևում է, որ ցածրադիր գոտում ծիրանի բուսած տարածության
չտիրում առաջին տեղը պատկանում է Հսկանմերջան չրջանին,
որ դառնում են Հայկոնտրոլարեստի և «Արարատ» արևոտի
պողարուծական խոչըր սովյոթները, պողարուծական տնկարկ-
ների 2-692 հեկտար տարածությամբ, որտեղ ծիրանը բուսում է
1074 հեկտար կամ մոտ 40% :

Երկրորդ տեղը բնում են՝ վաղարչապատի չրջանը (507.9 հ.)
և Երևան քաղաքի Բերիայի ռայոնը (615,9 հ.): Մերանի սոր-
ույնի կազմի հարստությամբ և պտուղների որակով առաջին
տեղը պետք է տալ Արարատյան դաշտավայրի չրջաններին, մա-
նավորապես Երևան քաղաքի և Բերիայի ռայոնին:

Մերանի արտադրանքի հիմնական դառնությամբ վերամշակվում
է Հայկոնտրոլարեստի Երևանի և Մեղրու գործարաններում, իսկ
չնչին մասը սրևի տակ չորացվում է Միկոյանում և Մեղրիում:

Վերջին տարիներում, տնկարկների տարածության ավելաց-

ման կասրակցութեամբ, ծիրանի մի մասը թարմ վիճակում արտածվում է միութենական կենտրոնները — Մոսկվա, Լենինգրադ և այլն :

Հայկական ՍՍՌ կոնսերվի դործարաններում 1939 և 1940 թվականներին ծիրանի վերամշակումը բնորոշվում է հետևյալ աղյուցներով (տոննաներով) .

| | 1939 թ. | 1940 թ. |
|--------------------------|---------|---------|
| Երևանի կոնսերվի դործարան | 660.3 | 660.5 |
| Մեղրու » » | 48.0 | 96.2 |
| Այրումի » » | — | 28.5 |
| Միկոյանի չորանոց | 210 | 167 |
| | 918.3 | 952.2 |
| Ընդամենը | | |

ՄԻ ՔԱՆԻ ՏՎՅԱԼՆԵՐ ԾԻՐԱՆԻ ԲԻՈԼՈԳԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծիրանենին հողի նկատմամբ բնա՛լ պահանջկոտ է. նա աճում է քարքարոտ, կրային և տակիրային հողերում, ուր չեն աճում կամ դժվարութեամբ են աճում մյուս պտղատու բույսերը : Մակայն ծիրանենին վատ է աճում ծանր կալիային հողերում :

Հայաստանում ծիրանենու անկարկների մեծ մասը դա՛նվում է քարքարոտ բանջերում, աճելով դիպրի բարձրութեան, հասնող վայրերում, քան թե դեղձը, օրինակ, Միկոյանի շրջանում, Մեղրիում և Արաղածի հարավային լանջերում :

Չնայելով ծիրանենու տարածման վերահիշյալ դժվարին պայմաններին, այնուամենայնիվ Հայաստանում բնականուր առմամբ ծիրանենին ուժեղ աճման ու զարգացման է հասնում . միջին հասակի ծառերն ունենում են 7-ից մինչև 10 մետր բարձրութեան և բալականաչափ սաղարթախիտ գաղաթ՝ մինչև 10—11 մետր արամագծով :

Ծիրանենին դիմանում է ուժեղ սառնամանիքներին : Այդպեպողարուծական կայանի Փիզխողդիական լաբորատորիայի (Մ. Համբարձումյան) աղյուցներով հաստատված է, որ ձմեռային նորմալ պայմաններում ծիրանենին առանց վնասվելու դիմանում է ըստ Յելսիուսի 27° ցրտին :

Յաճրագիր դոտու պայմաններում, ուր զարուհն ու աշունը հաճախ անկայուն են, ծիրանենին դիպրի են ալելի շատ է վնասվում վաղ աշնանային և ուշ զարնանային ցրտերից : Ծիրանենու ծաղիկները դիմանում են ըստ Յելսիուսի մինչև 4° ցածր ջերմութեան :

Հյուսիս-արևելյան շրջաններում (Ալալերդի և այլն) ծիրանենու ծաղկման շրջանում նրան բավական մեծ վնաս են հասցնում մթնոլորտային տեղումները:

Ծիրանենու վեղետացիան շատ վաղ է սկսվում. նա սլառկանում է այն ծառերի թվին, որոնք նշենուց հետո առաջինն են ծաղկում: Հայկական ՍՍՌ հարավային մասի ցածրադիր գոտում ծաղկումը տեղի է ունենում մարտի վերջին կամ ապրիլի սկզբին:

Ծաղկման տևողությունը խիստ կարճ է (3-ից մինչև 10 օր). ծաղկման սկզբի փոխանցումը մասսայական ծաղկման տեղի է ունենում մեկ օրվա կամ նույնիսկ մի քանի ժամվա ընթացքում, նայած օդի ջերմաստիճանին:

Չանաղան շրջաններում կատարված բազմամյա դիտողությունները պարզել են, որ ծաղկման փուլն անցնելու համար ծիրանենին պահանջում է 209°-ից մինչև 412° ջերմություն:

Հայկական ՍՍՌ ծիրանենիների պտուղների հասունացման շրջանը՝ մյուս ուսյունների ծիրանենիների համեմատությամբ բավական երկարատև է: Այն տևում է համարյա 2 ամիս, մինչդեռ մյուս վայրերում հասունացումը տեղի է ունենում մեկ կամ ամենաշատը մեկ ու կես ամսում: Ցածրադիր գոտում վաղահաս սորտերը (սպիտակ նոյրաստ և այլն) ձիտում են հասունանալ հունիսի 10-ից, իսկ ուշ հասնող սորտերի (համբան, դեռնդի) հասունացումը տևում է մինչև օգոստոսի 5-10-ը: Սորտերի հիմնական մասան հասունանում է հուլիսի ընթացքում:

Պտուղների հասունացման համար, նայած սորտին և ուսյունին, պահանջվում է 1193°-ից մինչև 2709° ջերմություն*), իսկ ամբողջ վեղետացիոն շրջանում— 3959°-ից մինչև 4719°: Վեղետացիոն շրջանի երկարատևության (257-ից մինչև 314 օր) և վեղետացիայի ընթացքում եղած բարձր ջերմաստիճանի շնորհիվ ցածրադիր գոտում ծիրանը միշտ աճում է երկրորդ անգամ, իսկ որոշ տարիներում— նույնիսկ երրորդ անգամ:

Որոշ տարիներում, երբ աշունը ձգձգվում է և երկարատև առաք և զանազից հետո ջերմաստիճանը մի անգամից խջում, ծիրանենին անցնում է լատենտ փուլի, առանց տերևաթափի:

Նախաբևեռային գոտում ծիրանը 12-14 օրով ալեյի ուշ է սկսում վեղետացիան, քան ցածրադիր գոտում: Իսկ ծաղկումը և պտուղների հասունացումը տեղի է ունենում համարյա միաժամանակ. երբեմն ծաղկումն սկսվում է 2-5 օրով, իսկ մասսայական ծաղկումը՝ 2-3 օրով ալեյի ուշ:

Ծաղկման ամբողջ փուլը սկզբից մինչև վերջ տևում է 7-12 օր: Նախաբևեռային գոտում ծիրանենին իր վեղետացիան ալալը-

*) Հասունացման շրջանը հաշվվում է պտուղների կազմավորումից մինչև նրան լրիակատար հասունացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱԾՐԱԿԻՐ ԴՈՏՈՒՄ ԾԻՐԱՆՆՈՒ ՏԱՐԲԵՐ ՍՈՐՏԵՐԻ
ԳՏՈՒՂՆԵՐԻ ՀԱՍՈՒՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՑՆԵՐԸ ԸՍՏ ԲԱԶՄԱՍՅԱՆ ՏԻՅԱԼՆԵՐԻ
(ՀԱՇՎԱԾ ՀՆԳՕՐԾԱԿՆԵՐՈՎ)

СРОКИ СОЗРЕВАНИЯ РАЗЛИЧНЫХ СОРТОВ АБРИКОСА В
НИЗМЕННОЙ ЗОНЕ АРМЕНИИ ПО МНОГОЛЕТНИМ ДАННЫМ

| ՀՈՒՆԻՍ | | | ՀՈՒԼԻՍ | | | ՕԳՈՍՏՈՍ | | | | | | | | | | | | | |
|--------|---|----|--------|----|----|---------|---|----|----|----|----|----|---|----|----|----|----|----|---------------------------------------|
| 1 | 5 | 10 | 15 | 20 | 25 | 30 | 5 | 10 | 15 | 20 | 25 | 30 | 5 | 10 | 15 | 20 | 25 | 30 | |
| | | | — | — | | | | | | | | | | | | | | | Նոյրաւառ սւյ. ՈՉՐԱՍՏ ԲԵԼ. |
| | | | — | — | — | | | | | | | | | | | | | | Նոյրաւառ ԿՐԱՍ. ՈՉՐԱՍՏ ԿՐԱՍԻ. |
| | | | | | — | — | — | — | — | — | — | — | | | | | | | Խաթրի. ՔԱՐԶՅԻ. |
| | | | | | — | — | — | — | — | — | — | — | | | | | | | Բաղաւարիկ ԲԱԴԱՄԱՐԻԿ |
| | | | | | — | — | — | — | — | — | — | — | | | | | | | Նախիճեւանի ԿՐԱՍ. ՆԱՒԻՇՎԱՆԻ ԿՐԱՍ. |
| | | | | | — | — | — | — | — | — | — | — | | | | | | | Նոյրաւառ Խոսրօւանի ՈՉՐԱՍՏ ԽՈՏՐՈՎԱՆ |
| | | | | | — | — | — | — | — | — | — | — | | | | | | | ԸՄԴԱՄԻ ԲԱԴԱՄԻ |
| | | | | | — | — | — | — | — | — | — | — | | | | | | | Շալախ ՇԱԼԱՒ |
| | | | | | — | — | — | — | — | — | — | — | | | | | | | Աղջեւաւառ ԱԳՃԱՆԱԲԱԴ |
| | | | | | | | — | — | — | — | — | — | | | | | | | Գլառ-Գլառ ԳՐԳՐ |
| | | | | | | | — | — | — | — | — | — | | | | | | | Խոսրօւանի ՔՈՏՐՈՎԱՆ |
| | | | | | | | — | — | — | — | — | — | | | | | | | Թարաղաւ ՏԱԲԱՐՅԱ |
| | | | | | | | — | — | — | — | — | — | | | | | | | Նախիճեւանի սւյրի. ՆԱՒԻՇՎԱՆԻ ԲԵԼ. |
| | | | | | | | — | — | — | — | — | — | | | | | | | Սարի Թարաղաւ ՏԱՐԻ ՏԱԲԱՐՅԱ |
| | | | | | | | | | — | — | — | — | | | | | | | Գլոյ-Բաղաւ ԳԵՂ-ԲԱԴԱՄ |
| | | | | | | | | | | — | — | — | | | | | | | Չալախ ՔԱՏԻ |
| | | | | | | | | | | | — | — | | | | | | | Խիարկեւանի ՔԻԱՐԿԵՆԻ |
| | | | | | | | | | | | | — | | | | | | | Արթուրի ԱԵՄԱԼԻՅԻ |
| | | | | | | | | | | | | | — | | | | | | Գլոյ-Չալաղաւ ԳԵՂՃԱՆԱԲԱԴ |
| | | | | | | | | | | | | | — | | | | | | Հաւրաւ ԱՄԲԱՆ |
| | | | | | | | | | | | | | — | | | | | | Չեւոնի ՇԵՎՈՆԻ |
| | | | | | | | | | | | | | — | | | | | | Որդուրաղի ՕՐԴՅԱԴԻ |
| | | | | | | | | | | | | | — | | | | | | Սարի-Բաղաւ ՏԱՐԻ-ԲԱԴԱՄ |

ԾԻՐԱՆՆՆՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼՆԵՐՆ ՍԿՍԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱՃԵՏ ՋԵՐՄԱՍՏԻՆՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ (0°-ԵՅ ԲԱՐՃԵՐ)

| Ռայոն | Տեսակ | Գարնանը՝ վերետա- ցիայի սկզբից մինչև մասնայական ծաղ- կումը | | Գարնանը՝ վերետա- ցիայի սկզբից մին- չև աճման վերջը | | Գարնանը՝ վերե- տացիայի սկզբից մինչև սլուսուղներէ մասնայական հատու- նացումը | | Գարնանը՝ վերետա- ցիայի սկզբից մինչև տերևաթափը | |
|--------------------|-------|--------------------------------------------------------------------|-----------------|---------------------------------------------------------|-----------------|----------------------------------------------------------------------------------------|-----------------|-----------------------------------------------------|-----------------|
| | | Ջերմաստ. գումարը | Օրերի քանակը | Ջերմաստ. գումարը | Օրերի քանակը | Ջերմաստ. գումարը | Օրերի քանակը | Ջերմաստ. գումարը | Օրերի քանակը |
| Երևան Ереван | Ծիրան | 352,4° | 63 | 1283,1° | 114 | 2709,4° | 172 | 4718,9° | 294 |
| Աշտարակ Аштарак | „ | 384,6° | 61 | 985,2° | 105 | 1907,8° | 152 | — | 288 |
| Միկոյան Микоян | „ | 216,9° | 53 | 400,7° | 105 | 1192,6° | 145 | 3959° | 238 |
| Մեղրի Мегри | „ | 421,6° | 70 | 1152,8° | 128 | 2663,9° | 191 | — | 314 |
| Կոտայք Котайк | „ | 209,3° | 26 | 778,4° | 66 | 1533,5° | 107 | — | 257 |

ՏԱԲԼԻՑԱ ՀԱՆՐԱՅԻՆ ՈՒՆՈՒՄՆԵՐԻ ՕՓԻԼԱՏԵԼԵՅ ԱՅՐԻԿՈՏԱ

18637

2—ՏՈՒՆՆԵՐԻ ՓՈՅՈՒՆՆԵՐԻ

| Փոշոնի օպիլատել | Շալի | Խոբովան | Թաթազ | Արտաշատ | Գեղամազ | Նախիչևանի կր. | Համան | Լեռնա | Սարի-բազմ |
|--------------------------------|------|---------|-------|---------|---------|---------------|-------|-------|-----------|
| 1. Շալի Շալախ | - | + | + | + | + | - | - | - | - |
| 2. Խոբովան Խոբովան | + | - | - | + | - | - | - | - | - |
| 3. Թաթազ Տաթազ | + | + | - | - | - | - | + | + | - |
| 4. Արտաշատ Արտաշատ | + | - | - | - | - | - | - | + | - |
| 5. Գեղամազ Գեղամազ | + | - | - | + | - | - | - | - | - |
| 6. Նախիչևանի կր. Նախիչևանի կր. | - | - | + | + | - | - | - | - | - |
| 7. Համան Աման | + | - | - | + | - | - | - | - | - |
| 8. Սարի-բազմ Սարի-բազմ | + | - | + | - | - | - | - | - | - |

++ նշանն էն ամենից փոշոնիցնը
 +- օճանաչու անուշիկ օպիլատել

տում է մոտավորապես 10 օրով ավելի շուտ, քան ցածրագիբ դոտում (տես ծիրանի զարդացման Փետրվարի աղյուսակը) : Այս պատճառով, բերքն ապահովելու համար, նրանք պահանջում են համապատասխան փոշոտիչներ (տես փոշոտիչների աղյուսակը) :

Այդպիսի պայմաններում մեր կատարած դիտողությունների համաձայն, Հարկահան ՍՍՄԻ ծիրանների բնորոշ առանձնահատկությունն է հանդիսանում նրանց պրակտիկ ինքնատերելու թյունը. նույնպիսի պատկեր նկատվում է նաև միջին-ասիական սորաների մոտ :

Տեղական սորաների ծաղկավույնը ծլունակութունը (լարբատորային պայմաններում, 10% չաքարային լուծույթում)՝ բազմաբար է : Այդպիսի պայմաններում կայանի Փիլիտրոլիական լարբատորիայի ավյախների համաձայն, 1933—1935 թ. թ. ծաղկավույնը ծլունակութունը հետևյալ միջին %-ն է կազմում .

| | |
|--------------------|-------|
| 1. Արուիթայերի | 46.49 |
| 2. Համբան | 42.27 |
| 3. Թարարգա | 37.39 |
| 4. Խոսրովշահի | 37.70 |
| 5. Նախիջևանի կարմ. | 33.81 |
| 6. Ղեփնդի | 32.98 |
| 7. Գյոզլանարագ | 31.39 |
| 8. Շարխ | 22.14 |

Ծիրաններին բերք է տալիս պողատու կարճեցրած ճյուղերի՝ «խիստների» և միամյա ուժեղ չվերի վրա : Պատույններն առաջանում են հիմքին ավելի մոտիկ գտնվող միամյա ուժեղ չվերի կողմից բողբոջներից : Կարճեցրած ճյուղերի բերքիության տեսչությունը շատ մեծ է, ընդամենը 4—5 տարի է, որից հետո նրանք մահացման են ենթարկվում և նրանց փոխարեն առաջանում են նորերը, մանավանդ լավ լուսավորվող ճյուղերի վրա :

Ծիրաններին վաղ է սկսում պտուղներ տալ, 4—5-րդ տարում, իսկ 10 տարեկան հասակից արդեն դառնի բերք է տալիս :

Ըստ մեր դիտողությունների, նրա բերքիութունը բարձրանում է մինչև 20 տարեկան հասակը, որից հետո նրա բերքը շատ թե քիչ ստարիլ է լինում, և միայն 40 տարուց հետո բերքատվությունն սկսում է ընկնել. 60—70 տարեկան հասակում այն դեռ դառնի բերք է տալիս : Լիակատար պտղաբերության շրջանում, նայած սորանին, մեկ ծառի բերքը հասնում է 100-ից մինչև 400 կգ. -ի :



Նկ. Ա 1. Ծիրանի պտղաբերող ճյուղ

«ՇԱԼԱԽ» ՍՈՐՏԻ ԲԵՐԲԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԸՍՏ ԾԱՌԻ ՀԱՍՍԿԻ

(Եռամյա ավյախեր՝ 414 ոմ)

УЧЕТ УРОЖАЯ «ШАЛАХ» ПО ВОЗРАСТУ (3-х летние данные в кг.)

| Ծառի հասակը Возраст дерева | 1934 թ. 1934 г. | | 1935 թ. 1935 г. | | 1936 թ. 1936 г. | |
|-------------------------------|--------------------|-------------|--------------------|-----------------|--------------------|-----------------|
| | ձիջին средний | բերք ур. | ձիջին средний | բարձր высший | ձիջին средн. | բարձր высший |
| ձիջին 10 տարի до 10-ти лет | 52 | | 55 | 85 | 16,5 | |
| 11-20 տար. | 79 | 188 | 69 | 135 | 48 | 88 |
| 21-30 տար. | 105 | 453 | 75 | 147 | 142 | 312 |
| 31-40 տար. | 152 | 384 | 88 | 168 | 95 | 362 |
| 41-60 տար. | 107 | 293 | 35 | 158 | 78 | 202 |

20-30 ՏԱՐԵԿԱՆ ԾԻՐԱՆԻ ՏԱՐԲԵՐ ՍՈՐՏԵՐԻ ԲԵՐԲԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ (419-114)

УЧЕТ УРОЖАЯ РАЗЛИЧНЫХ СОРТОВ АБРИКОСА В ВОЗРАСТЕ

20-30 лет

| Սորտի անունը Наименов. сорта | 1934 թ. 1934 г. | | 1935 թ. 1935 г. | | 1936 թ. 1936 г. | | Ծանոթություններ Примечание |
|---------------------------------|--------------------|-----------------|----------------------|--------------------|---------------------|--------------------|-------------------------------|
| | ձիջին средний | բարձր высший | ձիջին ср. ан. ур. | բարձր высш. ур. | ձիջին средн. ур. | բարձր высш. ур. | |
| 1. Շալախ Шалах | 110 | 453 | 68 | 168 | 168 | 362 | |
| 2. Խոսրովա Хосровшан | 90 | — | 95 | 269 | 100 | 162 | |
| 3. Թարազ Табарза | 78 | 110 | 80 | 140 | 57 | 110 | |
| 4. Աբու-Ալի Абу-Алиби | — | — | 25 | — | 48 | — | 10 տ. 10 лет |
| 5. Խալազի Халдзи | — | — | 38 | 185 | 105 | 309 | |

Բերքի հաշվառումը՝ երեք տարվա ընթացքում կատարված է յուրաքանչյուր սորտի 25-ական ծառի վրա (Երևան քաղաքի հին ալդիններում), որտեղ չի եղել կանոնավոր կտու պարարտացում, որի պատճառով բերքի համեմատաբար ցածր ցուցանիշներ են ստացվել. իսկ երկտասարդ անկարկների պաղարերուծյունը նոր է տեսվում:

№ 7 աղյուսակում նկատվող համեմատաբար ցածր բերքատվությունը բացատրվում է անկարկի խոտցվածությամբ և ագրոտեխնիկական պատշաճ ինտամքի բացակայությամբ:

ԾԻՐԱՆՆՆՈՒ ԱԳՐՈՏԵՆՆԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ


Մինչև սևույուցիան՝ Հայկ. ՄՍՌ-ում զուտ ծիրանենու տընկարկ չի եղել: Ծիրանենիները սովորաբար անկվում էին խաղողի ալդինների շուրջը, բլրալանջերին և առհասարակ այն տեղերում, որոնք սակավ սխտանի են ու բիշ կույրուբանների համար: Չնայելով ծիրանենիների ուժեղ սնմանը, սովորաբար նրանց շատ փոքր սնման մակերևութ էին հասկացնում: Հաճախ կարելի էր հանդիպել իրարից ընդամենը 3—5 մ. հեռավորության վրա



Նկ. 2. Ծիրանենու ծեր (խաղ) ալդի

զանազան ծիրաններ: Խիտ տնկման հետևանքով ստորին ճյուղերը, որոնք զանվում էին լուսավորման աննպաստ պայմաններում, հետզհետե ժահացման էին ենթարկվում, իսկ ծառերը երկարաձգվում էին, ունենալով շատ փոքր սաղարթ ու դրա հետևանքով էլ ունենում էին աննշան բերքատուլթյուն: Դժվարանում էր նաև պտուղների հավաքելը և ծառերի խնամքը, այն է՝ կտր, բուժումը և այլն:

Այդպիսի ծառերի պտուղների հավաքը կատարվում էր դրվափորսպես նրանց թափ սալու կամ ձողով ճյուղերին հարվածելու միջոցով, որի հետևանքով խիտ ընկնում էր պտուղների որակը: Այդ ամենի պատճառով այնպիսի բարձրորակ ստրաբեր, ինչպիսիք են՝ շալախը, խոսրովչահին և այլն, — օդաազդածվում էին միայն սյուրե և պավիլոն պատրաստելու համար կամ թե սրբմիտիվ եղանակով չորացվում էին արևի տակ: Հին այգիներում ծիրանի ծառերի շուրջը կղամ ամբողջ տարածութունը բռնվում էր բանջարեղենով—տոմատներով, բաղբիջանով, վա-



Նկ. 3. Միրանենու երիտասարդ այգի

բունդով, կաղամբով և այլն: Ավելի հաճախ շէր փորվում ու թողնվում էր խոտհնձի համար:

Թե սովխոզները և թե կոլխոզները նոր աշխիններում— ծիրանենին տնկվում է 10 մ. × 10 մ. կամ 9 մ. × 9 մ. հեռավորութեան վրա, իսկ շարքամեջերում առվույտ է ցանվում՝ հողի սարուկտուրան բարելավելու համար, որովհետև ծիրանենուն հատկացվում են մեծ մասամբ անսարուկուր, որոշ չափով աղաչին, կրաչին և տակիրաչին հողերը: 1935 և 1936 թ. թ. սկսած՝ ծիրանենու տնկումը կատարվում է խոտն սորաերով, փոշոտումն ավելի լավ ապահովելու համար (համաձայն մեր մշակած սխեմաների): Ծառերի ստեղծումը կատարվում էր բաժաններով, որի հետևանքով ջուրը լճանում էր փոշխացած հողերում և դա մեծ չափի չորացման պատճառ էր դառնում, երբեմն այդ չորացումը 80—70% էր հասնում: Միայն 1938 թվից որոշ սովխոզներ, օբինակ, Հարկոսերվարեպոլի III և IV սովխոզները, անցան օղակաձև, ինֆլուորացիոն եղանակով ջրելուն, որը նպաստեց ծառերի կոչողականութեան տոկոսի բարձրացմանը, ինչպես նաև նրանց ավելի լավ աճմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԻՐԱՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Հայաստանի ծիրաններն աչքի են ընկնում ձևերի ու սորաերի բացառիկ մեծ բազմազանությամբ: Ըստ ամենահիմնական հատկանիշների՝ նրանց կարելի է բաժանել բազմաթիվ խմբերի, որոնք արժեքավոր են այս կամ այն տեսեսա-տեխնոլոգիական ցուցանիշներով ու հատկություններով: Իսկ այդ խմբերի սահմաններում գոյություն ունեն բազմաթիվ վարիացիաներ ու կլոններ՝ այս կամ այն բնորոշ հատկություններով:

Հիմնականում աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ պտուղները: Գոյություն ունեն ահազին թվով վարիացիաներ ըստ պտուղների ձևի, մեծութեան, դույնի, քլմիական բաղադրութեան, համի և տեխնոլոգիական հատկությունների: Ոչ պակաս բազմազանություն ունեն նաև կորիզները: Գոյություն ունեն դրանց բազմաթիվ ձևերը, որոնք տարբերվում են այս կամ այն բիոլոգիական հատկանիշներով և այլն:

Իսկ Հայաստանում՝ սերմերով բազմացվող շատ սորաերի ստեղծությունն էլ ավելի է հարստացնում վերոհիշյալ բազմազանությունները:

Կանգ առնենք այդ կարևորագույն հատկանիշների վրա՝ ծիրանների սորտերը բնորոշելու համար:

Ըստ սերմի համի տեղական ծիրանները բաժանվում են երկու խմբի. քաղցրակտրից ծիրաններ, որոնց պատկանում է տեղական ծիրանների (բոլորը պատվաստված) մեծ մասը՝ ներառյալ սերմնարույսերից ստացված որոշ փոփոխակները (խարջի), և դառնակտրից ծիրաններ, որոնց թվին է պատկանում «խարջի» փոփոխակների հիմնական մասան:

Հստատանում հանդիպում են սպիտակ դույնից մինչև բացնարնջագույն ծիրաններ՝ համարյա մուգ կարմրությամբ:

Տեղական սորտերի ճնշող մեծամասնությանն ունի պողամասից լավ անջատող կտրից, բայց պտասհում են նաև սորտեր, որոնց կտրիցը բոլորովին չի անջատվում:

Տեղական բոլոր սորտերի պտուղները թափառ են լինում, բայց թափառության աստիճանը տատանվում է՝ միջակից մինչև գրեթե լերկ պտուղները (թարարյա):

Պտուղները լինում են տարբեր մեծության, — 20 գր. քաշ ունեցողներից՝ մինչև շատ խոշորները, որոնք 100 գր. քաշ են ունենում, իսկ պտուղների մեծ մասն ունի միջին մեծության — 40—60 գրամ:

Պտուղների ձևն ևս տատանվում է՝ հարթ-կլորավուններից մինչև երկարավուն-ձվաձևները:

Ծիրանի տեղական սորտերն իրենց քիմիական բաղադրությամբ բավական հարուստ են շաքարներով և չոր նյութերով, բայց թթվությամբ ազքատ են: Այդ նրանց մի առանձին արժևք է տալիս:



Ստորև բերում ենք ծիրաններու մի շարք սորտերի պտուղների կազմի բաղմամբ միջին տվյալները՝ տոկոսներով (կայանի քիմ. լաբ.— ԱՖրիկյան):

Աղյուսակ № 8

| Չոր | Չոր նյութի մեծ. | Շաքարներ | Սեղանիցիլոզ | Ստիպոլ | Գլյուկոզ | Պտածրամուտ | Տրամբոլ թթվաւ. | Քաղցր նյութ | Մոխիր |
|-----------|-----------------|----------|-------------|-----------|-----------|------------|----------------|-------------|----------|
| 85,9—73,3 | 14,06—26,7 | 7,9—15,8 | 2,69—7,9 | 5,05—9,17 | 2,04—5,68 | 0,58—1,60 | 1,68—0,23 | 0,72—1,03 | 0,45—0,8 |
| 80,53 | 19,47 | 12,24 | 4,38 | 8,45 | 3,44 | 0,98 | 0,60 | 0,84 | 0—80 |

ԸՍՏ ԿՈՐԻԶԻ ՁԵՎԻ ՈՒ ՄԵԾՈՒԹՅԱՆ

Շիրանների համար խիստ բնորոշ սորտային հատկանիշ է հանդիսանում կորիզի ձևը: Համախոս արտաքին տեսքով իրար նման պտուղներ սնեցող սորտերը հեշտաթիվամբ են սաքրեր վում կորիզներով:



Նկ. 4 ա և 4 բ Կորիզների վարիացիան ըստ ձևի և մեծության

Ծիրանի հարկական սորտերի կորեզներն ունենում են կլորավունից մինչև երկարավուն ձև, հարթ մակերեսից սկսած մինչև խիստ անհարթ, համարյա ծակոտկեն մակերես: Որտևյա- նակարի կողերը լինում են երբեմն խիստ արտահայտված սուր, երբեմն էլ հարթի նկատելի չափով կամ երբեմն նրանք ակասիկ- ների նման են արտահայտված:

Թխկնակարի վրա ակասիկը, որով անցնում է անոթաթելա- յին խճիկը լինում է բաց կամ բոլորովին փակված: Սերմը (մի- ջուկը), նալած սորտին, կաղծում է կորեզի ընդհանուր բաշի 20%-ից մինչև 60%-ը (սեռ աղ. № 9):

Սորտերի մեծ մասի կորեզները միջին չափի են, բայց վր- նում են նաև թեև մանր և թեև խոշոր կորեզներ, որոնք պատ- վաստված սորտերի մոտ կաղծում են պաղի ընդհանուր բաշի 2,5%-ից մինչև 7%-ը, թեև սերմնարույսերի մոտ — 4%-ից մինչև 25%: Ծիրանի առանձին կուլտուրական սորտերի պտուղ- ների մեխանիկական կաղծը բնորոշվում է հետևյալ աղյուսակով:

Աղ. № 9
Տաբլ. № 9.

| Սորտերի անունները Название сортов | Պայր միջին քաշը գր-ով (средний вес пло- да в гр. | Կորեզի միջին քաշը գր-ով Средний вес косточки в граммах | Սերմերի միջին քաշը գր-ով Средний вес семян в гр-ах | Կորեզի 0/0-ը պարի համեմատ. % косточки в отношении плода | Սերմերի 0/0-ը կորեզի համեմատ % семян в отно- шении косточки. |
|-----------------------------------------|-----------------------------------------------------------|-----------------------------------------------------------------|-------------------------------------------------------------|------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------|
| 1. Շալախ Шалах | 51—65 | 1.9—2.5 | 0.6 | 2.5—3 | 31 |
| 2. Խոսրովաչահի Хосровшани | 27,5 | 1.2 | 0.49 | 4 | 40 |
| 3. Աբուտադիբի Абутадиби | 23 | 1.49 | 0.32 | 6 | 21 |
| 4. Օրդուբադի Ордубади | 29 | — | — | — | — |
| 5. Գեոդանաբադ Геодканабад | 27 | 1.06 | 0.1—0.65 | 3 | 44 |
| 6. Թաբառա Табарза | 24 | 1.6 | 0.2—0.7 | 7 | 33 |
| 7. Բադամի Бадамя | 30.2 | — | — | — | — |
| 8. Սարի-Թաբառա Сари-табарза | 43 | 2.4 | 1.1 | 5.6 | 45 |
| 9. Բադամ-արիկ Бадам-арик | 30 | 1.8—3 | — | 6 | 30—40 |
| 10. Գեյ-բադամ Гей-бадам | 34 | 1 | 0.6 | 3 | 60 |
| 11. Սարի-բադամ Сари-бадам | 30—45 | 1.8—2.3 | — | 6 | — |
| 12. Համբան Амбан | 52 | 1.9 | — | 3—4 | — |

| Սորտերի անունները Название сортов | Պտոր միջին քաշը գր-ով Средний вес плода в гр. | Կորիզի միջին քաշը գր-ով Средний вес косточки в граммах | Սերմերի միջին քաշը գր-ով Средний вес семени в гр-ах | Կորիզի 0/0-ը պտորի համեմատ. 0/0 косточки в отношении плода | Սերմերի 0/0-ը կորիզի համեմատ. 0/0 семени в отно- шении косточки. |
|---------------------------------------------|--------------------------------------------------------|-----------------------------------------------------------------|--------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------|
| 13. Ղեռնդի Гевонди | 44 | 1,8 | — | 4 | — |
| 14. Նախիջևանի կարմ. Нахичевани кр. | 36 | 2 | — | 6 | 14 |
| 15. Նախիջևանի սպ. Нахичевани бел. | 35 | 1,9 | — | 5,4 | 42 |
| 16. Աղջանարազ Агджанабад | 21 | 1,3 | — | 5 | 39 |
| 17. Նովրաստ սպ. Новраст бел. | 27 | 1,6 | — | 6 | 43 |
| 18. Նովրաստ կարմ. Новраст красн. | 34 | 1—3 | — | 6 | 25 |
| 19. Գյարգյար Гяргяр | 42 | 1,8 | — | 4—3 | 33 |
| 20. Խիարքենի Хиаркени | 42 | 3,2 | — | 7,6 | 19 |
| 21. Կայսի Кайси | 18 | 1,0 | — | 5,5 | 40 |
| 22. Համրան զանաւորիկ Амбан с горким ядр. | 38,6 | 1,7 | — | 4 | 32 |
| 23. Խարձի № 13 Харджи № 13 | 38 | 1,8 | — | 4,7 | — |
| 24. Խարձի № 4 Харджи № 4 | 34 | 2,6 | 1,0—1,5 | 7,6 | 50 |
| 25. Խարձի № 6 Харджи № 6 | 24 | 1,5 | — | 6 | — |
| 26. Խարձի № 1 Харджи № 1 | 32 | 8,0 | — | 25 | — |
| 27. Խարձի № 8 Харджи № 8 | 15,5 | 1,5—2 | — | 11 | 35 |
| 28. Խարձի № 9 Харджи № 9 | 22 | 1,8 | — | 8 | 40 |
| 29. Խարձի № x Харджи № x | 10—15 | — | — | 20 | — |

Ծաղիկները մեծ մասամբ խոշոր են, սպիտակ գույնի, բայց հանդիպում են նաև վարդագույն ծաղիկներով (նովրաստ նախիջևանի, սարի-բաղամ, խարջի)։ Իրենց ձևով պսակաթևերթիկները 1խում են կլորափուն, արեձև, այս կամ այն չափով ամբողջական ելրերով։ Առեչքների քանակը տատանվում է 20-ից 30-ի միջև։ Վարսանդը թափում է, առեչքներից երկար կամ կարճ։

Տերևեքի երկնց մեծությամբ լինում են՝ 5 սմ. X 3, 7 սմ. և 11, 5 սմ. X 9, 3 սմ. :

Տերևաթիթեղը լինում է տափակ-կլորափուն, սրտաձև, երկարափուն-ձվաձև : Առանձին սորտերի տերևներն առնելով են ստամոսափուր եղերը — մանր, սուր ստամոսաձև կամ սղոցանման և կամ խոշոր-երկակի-կլորափուն-ստամոսաձև : Մորեերի ճնշույ մեծամասնության տերևաթիթեղի կեսերը սիմետրիկ են և քիչ ծալված են դեպի վեր :

Մասերի սաղարթի ձևը պայմանավորվում է նրանց աճման բնույթով :

Տեղական սորտերի մեծամասնության սաղարթը դնդաձև է, բայց հանդիպում են նաև հասած գնդի ձևի սաղարթով, օրինակ, ղեփոնդի, արաթալիբի, ինչպես նաև կորացած, — սարիբազամ, գյոյբազամ և խարջու մի քանի սորտերի սաղարթները :

ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ՆԻՐԱՆՆԵՆՆԵՐԻ ԳՍԱԿԱՐԳՄԱՆ ԱՌԹԻՎ

Պատշտղիական գրականության մեջ կան ծիրանները դասակարգելու որոշ փորձեր : Եղած բոլոր դասակարգումները, ինչպես մասնաճյուղ է նաև Կոստինան, շատ արհեստական են և հիմնվում են զլխավորապես կորիզի, պողի և որոշ ղեպքերում նաև ծաղկի մորֆոլոգիական հատկանիշների վրա :

Միայն ամենազերջին ժամանակներս Կ. Ֆ. Կոստինան իր բազմամյա աշխատանքները հիման վրա առանձնացրեց երեք խումբ :

I. «Միջին ասիական, որի մեջ մտնում են Միջին Ասիայի, Արևմտյան Չինաստանի, Ալգանստանի, Հյուսիսային Հնդկաստանի և նրանց կից լեռնային երկրների ծիրանները :

II. Իրանական-կովկասյան խումբ, որ տարածված է զլխավորապես Անդրկովկասում, Իրանում, Փոքր Ասիայում :

III. Եվրոպական խումբ, որի մեջ հիմնականում մտնում է եվրոպայի (այդ թվում նաև ՍՍՄԿ եվրոպական մասի), Ամերիկայի, Ալատրալիայի և Հարավային Աֆրիկայի ժամանակակից արգյունաբերական աստղաձևերը :

Այս դասակարգման համաձայն, Հայաստանի ծիրանները մտնում են երկրորդ—իրանական-կովկասյան խմբի մեջ, որը «միջանկյալ խումբ է հանդիսանում միջին-ասիականի ու եվրոպականի միջև» : Հայկական ծիրաններին «իրենց ավելի հասարակական միջև», խոշոր տերևներով ու ծաղիկներով մտնելով են

Երբ որդ, Եվրոպական խմբին, ըստ պատուհների տիպի — 1, միջին-ասիական խմբին :

Չեկրի հարստությամբ և բազմազանությամբ զգալի հախով զիջում են միջին-ասիական խմբին, բայց այժիյի հարուստ են Եվրոպականից :

Կոստենանի սորտերն ուսումնասիրելու հիման վրա ըստ պատուհների ժառանգական փոփոխականության հատկանիշների նրանց բաժանում է 42 տիպի: Պատուհների ժառանգական փոփոխականության վերաբերյալ նրա սխեմայի համաձայն՝ Հայաստանում տարածված սորտերը կարելի է դասել հետևյալ տիպերի շարքը — № № 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 28, 29, 30, 31, 32 և 33 :

Նկատի ունենալով ծիրանի արդյունաբերական նշանակությունը Հայաստանում, մենք նպատակահարմար ենք դանում տեղական բոլոր սորտերը խմբավորել ըստ նրանց անտեսա-տեխնոլոգիական հատկութունների: Ծիրանի բոլոր սորտերն ըստ իրենց հատկանիշման ժամկետների կարելի է բաժանել 4 մեծ խմբի.

1. Հասունացման վաղ ժամկետի սորտեր :
2. Հասունացման վաղից միջին ժամկետի սորտեր :
3. Հասունացման միջին ժամկետի սորտեր :
4. Հասունացման ուշ ժամկետի սորտեր :

Այս խմբերից յուրաքանչյուրն իր հերթին կարելի է բաժանել ենթախմբերի, նույն թե դրանք որչափ պիտանի են վերամշակման այս կամ այն տեսակի համար :

1. Կոնսերվային (կոմպոտներ, քաղցրավենիք, պալիթղո) :
2. Չոր-մրդային :
3. Մեղանի :

Ստորև բերում ենք ծիրանի տեղական սորտերի խմբավորման մեր սխեման՝ ըստ անտեսա-տեխնոլոգիական հատկութունների :

Անցնենք ծիրանի սորտերի նկարագրության՝ ըստ առանձին խմբերի :

ՀԱՍՈՒՆԱՑՄԱՆ ՎՍՂ ԺԱՄԿԵՏԻ ՍՈՐՏԵՐ

Ծիրանի վաղահաս սորտերն Արարատյան դաշտի պայմաններում հասունանում են հունիսի 10—15-ից մինչև հուլիսի 1—2-ը :

Դրանց ապրտիմենտը խիստ սահմանափակ է, առայժմ հայտնի է ընդամենը երեք սորտ, — սպիտակ նովրաստ, կարմիր նովրաստ և նախիջևանի կարմիր :

Աւաջին երկու սորաները բացառապէս սեղանի են, իսկ նախնիքեանի կարմիրը պիտանի է սմբողջական սրտուղներով կոմպաներ պատրաստելու համար: Վաղահաս սորաների մեջ չորմրդային սորաներ բոլորովին չկան:

ՍԵՂԱՆԻ ՍՈՐՏԵՐ

Ինչպէս արդեն ասվեց, դրանց թիվն են պատկանում սղիտակ նոյրաստ և կարմիր նոյրաստ սորաները:

Այս սորանքն ամենալազ հասունացողներն են, հասունանում են հունիսի 10-ից մինչև 20-ը: Պատուղները բարձրորակ չեն, ունեն միջին մեծութիւն կամ մանր են:

Արժեքաւոր են միայն հասունացման վաղ ժամկետի չորհիվ:

ՍՊԻՏԱԿ ԵՌՎՐԱՏ

Այս սորաը բազմական տարածված է ցածրազիր սալոններում, ավելի հաճախ հանդիպում է Երևանի քաղաքամերձ սփյուռներում: Բացառապէս սեղանի սորա է և սեղանի սորաներից ամենալազ հասունացողը: Բերքատուլութիւնը միջակ է:

Պատուղներն ցածր սրակի պտտճառով չի մացլած ստանդարտ սորոյիմենարի մեջ:

Ծառն ունի միջակ մեծութիւն, մոտ 7,9 մետր բարձրութիւն, բնի տրամագիծը — 35 սմ, կեղևը գորշ-դարչնագույն է:

Սողարթը լուված է, կորացած, 10—11 մետր տրամագծով: Ճյուղերը դարչափուն են, շիւրը կարճ են և բարակ. միջհանգույցները կարճ են:

Ծաղիկները սպիտակ են, խոշոր: Բաժակաաերևիկները կոնաձև են, ոչ-թափոտ: Ամբողջ բաժակը դուռնափոր է: Պսակաթերթերը կլորափուն են, եղունգը՝ վարդագույն, ջղերը՝ պղտակ: Վարսանդը ծաղկած է, թույլ թափոտ, անկոքներից կարճ: Առեչքաթերթերը վարդագույն են:

Տերևները կլորաձև են: Տերևի դաղաթը հակված է դեպի ներքև:

Տերևաթիթեղը բարակ է, կոկիկ: Տերևի վերին մակերեսը բաց-կանաչափուն է, փայլուն: Գլխավոր ջղը թե վերին և թե ստորին մակերեսից, հիմքի մոտ գունաւորված է:

Տերևակոթը երկարափուն է: Տերևը լինում է միջին մեծութիւն կամ խոշոր, 55 սմ մինչև 116 սմ, միջին թիով 7,5 սմ: Լայնութիւնը — 40 սմ մինչև 87 սմ, միջին հաշիւով 60 սմ:

Պատուղները մանր են, հասունանում են ավելի վաղ, քան մնացած բոլոր սորաների պատուղները (հունիսի 10-ից մինչև

20-ը) : Գտուղները կշռում են 14 դր. մինչև 39 դր., միջինը — 27 դրամ :

Գտուղն ունի կերտալուծու ձև, տափակ կամ կլորավունը դա-
դաթով : Զաղարի փոսիկն ունի միջակ խորություն (5 մմ), մի-
ջակ լայնություն (5 մմ) և ուղիղ ձև :

Գտուղն իր կոթունին թույլ է կալած : Գաղի գույնը դեղնա-
վուն-սպիտակ է, երբեմն կարմիր երանդով, որ բռնում է սլա-
ղի մինչև 1/3 մասը . պտուղն ավելի հաճախ լինում է առանց
կարմրության : Մաշկը բարակ է, ոչ ամուր, չի անջատվում
պտղամսից, թափոտությունը թույլ է :

Պաղամիսը սպիտակ է, դերհասունացած պտուղների մի-
սը — սևեղսւյն-սպիտակ, կորեղից ոչ բոլորովին անջա-
տվող, խիստ հյութալի : Հյութն անգույն է : Հյութավածքը
խիստ թեղասառ է, ջրալի, պտուղն անհամ է, դրեթե անբույր :

Կորիզը համեմատաբար խոշոր է, միջին հաշվով — 23 մմ :
Քաշը — 1,2 դր. մինչև 2,3 դր., միջին հաշվով 1,6 դր. և
կազմում է պտղի ընդհանուր քաշի մինչև 6%-ը : Զված է,
հազիվ նկատելի վզիկով : Կորիզի մակերեսը համարյա կոկիկ է :
Թիլինակարը բացված է ամբողջ երկայնքով, սակայն հանդիպում
են նաև այնպիսի կորիզներ, որոնց կարը բացված է միայն հիմ-
քի ու ծայրի մոտ : Որովայնակարի վրա դուբս են ընկած բոլոր
կողերը, բայց որում հենց ծայրի մոտ կողերը չքանում են : Այս
սորտի համար բնորոշ է աչքի ակոսիկը, որն անցնում է կտորի
մոտից, որովայնի կարի լայնքով : Թարմ կորիզը բաց-դարձնա-
դույն է : Միջուկը քաղցր է և կարմում է կորեղի ընդհանուր
քաշի 43%-ը :

Սպիտակ նուրբատի պտուղներն աղքատ են շաքարներով և
չոր նյութերով :

Աղյուսակ № 40

ՍՊԻՏԱԿ ՆՈՎՐԱՍՏ ՍՈՐՏԻ ՊՏՈՒՂՆԵՐԻ ԲԻՄԻԱԿԱՆ ԲԱՆԱԲԻՐՈՒԹՅՈՒՆԸ (%)

| Զուր | Չոր նյութեր | Շաքարներ | Նեղուկիցիղ շաքարներ | Սպիտակուց | Գլյուկոզ | Պտղազանր | Թաղանթա- նյութ | Թթվություն | Սոխիլ |
|-------|-------------|----------|------------------------|-----------|----------|----------|-------------------|------------|-------|
| 86,94 | 14,06 | 7,94 | 2,62 | 5,05 | 2,04 | 0,58 | 0,72 | 1,68 | 0,45 |

Այս սորտը համեմատաբար քիչ է տարածված. լինում է դիտախորտակու երևանի բազալքամերձ ալգիներում: Նրա պտուղները պիտանի են միայն թարմ միճակում գործածելու համար:

Ծաղիտակեն բծախորտությունով (clasterosporium carpophilum) վարակելու տեսակետից տեղական սորտերի մեջ միջին տեղն է զանում:

Նրա հիմնական թերություններն են հանդիսանում ցրտերին քիչ դիմանալը և պտուղների ցածր սրակը. հենց այս պատճառով էլ, այն չի մտցված առանդարտ ասորտումնեռի մեջ:

Ծառը ուժեղ աճող է, կանգուն դիրքով, խիստ երկարաձուլված սաղարթով: Ճյուղերը երկար են, կանգուն, կարմրավունդարչնագույն, երկար միջհանդույցներով:

Ծաղիկներն ունեն միջին մեծութուն, սպիտակ են: Բաժակատերևները սրածայր են, կոկիկ, ջղերը կարմիր են, պսակաթերթերը կլորավուն ձև ունեն, կողնուր բացվարդապույն-սպիտակ է, ջղերը վարդապույն են, առեչքաթիկերը— կանաչավուն:

Տերևներին ունեն միջին մեծութուն՝ 75 մմ × 68 մմ: Սրտաձև են:

Տերևի վաղաթը երկարավուն է, ծարլած է դեպի ներքև: Տերևաթիթեղը հաստ է, մաշկանման, կոկիկ: Տերևի եզրերը սուր-բարակ-առամնախոր են: Վերին մակերեսը զեղնավուն-կանաչ է, առանց թափոտության: Չղերն անպույն են:

Պտուղները հասունանում են սպիտակ նոյրաստի պտուղներից մի քանի օր ուշ — հունիսի 10-ից մինչև 26-ը: Դրանք մեծ մասամբ մանր են, մեծութունը միջին հաշվով 37 մմ × 37 մմ × 35 մմ: Բաշը—21 գր. մինչև 47 գր. միջին հաշվով 34 գր.:

Պտուղները կլորավուն ձև ունեն, կողքերից խիստ տափահած: Պտղի վաղաթը սեղմ է: Զաղարն ունի միջին խորութուն (5—9 մմ), լայն է (5—8 մմ): Պտղի վրայով անցնում է խոր ալոսիկ, որը հասնում է մինչև դաղաթը: Պտղի պույնը ոսկե-դեղնավուն է, անբնական կարմրությամբ, որը տարածվում է համարյա ամբողջ պտղի վրա:

Մաշկն ունի միջին հաստութուն, մի քիչ թափու է, մսից չի անջատվում, ունի միջին ամրութուն:

Պողոմիսը նարնջագույն է, կսլած է կորիդին, քիչ հյութալի է, հյութը ուկեղույն է: Կաղմվածքը խիստ թեխտատ է: Ունի քաղցրաթիթու, սպյուրի համ և թույլ բուրմունք: Ավելի շատ չոր նյութեր և չաքարներ է պարունակում, քան սպիտակ նոյրաստ սորտը:

Կորիզը բավական խոշոր է. միջին հաշվով— 23 մմ×18 մմ×
 ×12 մմ. կշռում է 1 գր. մինչև 3 գր. և կազմում է պտղի ընդ-
 հանուր քաշի համարյա 6%-ը:

Միջուկը քաղցր է, կազմում է կորիզի ընդհանուր կշռի
 25%-ը: Կարմիր նույրաստի պտուղները նախպես աղքատ են շա-
 քարով և չոր նյութերով:

Աղյուսակ № 11

ԿԱՐՄԻՐ ՆՈՎՐԱՍՏ ՍՈՐՏԻ ՊՏՆԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԲԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ (% 0/0)

| | Չուր | Չուր նյութեք | Շաքար | Սեղանկիր զածր | Սախարոս | Չուր | Նոսոնուր | Քաղցր նյութ | Քիմիկալ | Մոխիր |
|----------|-------|--------------|-------|------------------|---------|-------|----------|----------------|---------|-------|
| Ցասանում | 83,7— | 13,96— | 7,21— | 1,62— | 5,31— | 1,19— | 0,31— | 0,72— | 1,36 | 0,46— |
| | —86,0 | 16,27 | —9,24 | —2,01 | 6,86 | 1,70 | 0,43 | —0,75 | —1,59 | 0,59 |
| Միջին | 84,88 | 15,11 | 8,22 | 1,81 | 6,08 | 1,44 | 0,37 | 0,73 | 1,47 | 0,52 |

ԿՈՆՍԵՐՎԱՅԻՆ ՍՈՐՏԵՐ

Այս խմբում ներառված է առնվում միայն մի սորտ, Նախիջևա-
 նի կարմիրը, որի նկարագրությունը արվում է ստորև:

ՆԱԿԵՉԵՎԱՆԻ ԿԱՐՄԻՐ

Այս սորտը համեմատաբար քիչ է տարածված. նա լինում է
 առավելապես Երևան քաղաքի այգիներում, գլխավորապես նախ-
 Կին մենատնտես աղբբեմնացիների այգիներում: Ներմուծված է
 Նախիջևանի ԱՍՍՄ-ից, որ ցույց է տալիս հենց սորտի առնուը:

Գնահատվում է որպես սեղանի վաղահաս և կոնսերվային
 սորտ: Ունի կոնսերվային դոտում տարածվելու մեծ հեռանկար-
 ներ, որովհետև տեղական հիմնական կոնսերվային սորտից, շա-
 լախից, 10 օրով ավելի շուտ է հասնում, որ մեծ նշանակություն
 ունի կոնսերվի դործարանի մրդային ցեխի դործունեությունը
 երկարացնելու տեսակետից:


Պտուղների հատկությունները բավազույնն է հանդիսանում տե-
 դական վաղահաս սորտերի մեջ: Մտցված է ստանդարտ ասոր-
 տիմենտի մեջ:

Սառնամանիքներին դիմանալու տեսակետից ծիրանի տեղա-
 կան սորտերի մեջ միջին տեղն է բռնում: Մակուսկեն-բծավորու-
 թյամբ վարակվելու իմաստով ևս միջին տեղն է բռնում տեղա-
 կան սորտերի մեջ:

Այս սորտն ինքնաստերիլ է: Նրա համար լավագույն փոշոտիչներ են հանդիսանում թարթարդան և արութալիբին:

Ծառն ունի միջին մեծութուն, 6,5 մետր բարձրութուն: Բնի տրամագիծը 25 սմ է: Կեղևը կարմրավուն-դարչնադույն է, սաղարթը — երկարավուն:

Ճյուղերը կարմրավուն-դարչնադույն են, փայլատ: Միջհուն-



Նկ. 5. Նախիջևանի կարմիր (պտուղները)

գույքներն ունեն միջին երկարութիւն կամ հարկադրուող դեպ-
քում կարճ են լինում :

Մաղիկներն ունեն միջին մեծութիւն, սպիտակ են : Բաժակա-
տերևները կոնաձև են, սպակաթերթերը— կլորավուն :

Տերևները երկարավուն-ձվաձև են : Տերևի դազաթը երկար
է, ծալված է դեպի ներքև, մի փոքր ոլորված :

Տերևաթիթեղը կոշտ-կետավոր է, հաստ (0,3 մմ), մաշկա-
նման, մի փոքր անհարթ : Տերևի եզրերը կլորավուն-խոշոր-ա-
տամոնավոր են : Վերին մակերեսը բաց-կանաչ է, սուլլատ,
մերկ : Զդերն անդույն են :

Տերևաթիթեղը կոթունին միացված է դրեթե ուղիղ : Տերևն
ունի միջին մեծութիւն — 59 մմ— 106 մմ×44—99 մմ. միջին
հաշվով— 85,6 մմ×70,4 մմ : Տերևակոթն ունի միջին երկարու-
թիւն— 25 մմ-ից մինչև 58 մմ, միջին հաշվով— 41 մմ :

Պտուղները հասունանում են վաղ ժամկետներում— Հունիսի
22-ից մինչև հուլիսի 2-ը, պտուղները փոքր են. միջին հաշվով—
36,8 մմ×38,5 մմ×37 մմ. կշռում են 19 գր. մինչև 47 գր., մի-
ջին հաշվով— 36 գր. :

Պտուղներն ունեն կլորավուն ձև, հիմքի մոտ տափակ են :
Գազաթը կլորավուն է, ձաղարը տափակ (6 մմ) և լայն (8 մմ),
ուղիղ :

Ակոսիկը սաղր է և խորացած է միայն հիմքի մոտ :

Պտուղն ունի կրեմի դույն՝ կարմիր երանգավորումով, որ
բնում է նրա 1/3-ից մինչև 1/2 մասը : Մաշկը հաստ է, թույլ,
միջակ թափուտութամբ, պողամսից չի անջատվում :

Պողամիսը ոսկեգույն է, կպած է կորիզին, թելավոր է,
հյութալի. հյութը սպիտակուց է, քաղցրահամ, կորիզի ու մաշկի
մոտ— թթվաչ, անուշաբույր. որոշ ալյուրահամ է զգացվում :

Կորիզը խոշոր է. միջին հաշվով— 21 մմ×17 մմ×11 մմ.
կշռում է 1,4 գր. մինչև 3 գր., որ կազմում է պողի համարյա
6%-ը : Զվաճե է, մակերեսը մի փոքր անհարթ :

Թիկնակարը բացված է միայն հիմքի մոտ կամ միայն ծայրի
մոտ : Որովայնակարի բոլոր կողերն ուռուցիկ են, սուր է միայն
միջին կողը :

Կորիզը ղեղնավուն-դարչնադույն է :

Միջուկը քաղցր է, կազմում է կորիզի քաշի 14%-ը :

Նախիջևանի կարմիրի պտուղները վաղահաս սորտերից ավե-
լի շատ հարուստ են շաքարով և չոր նյութերով (տես աղ. №12) :

| Զուր | Զուր հոսիվե | Շարժման | Ռեզերվիզիոն շարժման | Սակարկող | Գլխավոր | Պատահական | Թույլ տրված | Թթվային | Մոխիր |
|--------|-------------|---------|---------------------|----------|---------|-----------|-------------|---------|-------|
| 80,97 | 12,94- | 6,20- | 1,33- | 6,87- | 1,13- | 0,05- | 0,46- | 0,62- | 0,49- |
| -87,10 | -19,94 | -11,49 | -2,34 | -8,92 | -1,82 | -0,23 | -1,43 | -1,40 | -0,78 |
| 84,60 | 16,16 | 9,10 | 1,88 | 7,79 | 1,43 | 0,16 | 0,91 | 1,11 | 0,62 |

ՀԱՍՈՒՆԱՅՄԱՆ ՎԱՂԻՑ-ՄԻՋԻՆ ԺԱՄԿԵՏԻ ՍՈՐՏԵՐ

Այս խումբը հարուստ է սորտերի քանակությամբ: Դրանց պտուղները հասունանում են հունիս ամսի վերջից մինչև հուլիսի կեսն ընկնող ժամանակաշրջանում: Դրանց թվին են պատկանում բարձրորակ սորտերը, որոնց մեծ մասը մաղված է ստանդարտ ասորտիմենտի մեջ:

Այս խմբի մեջ է մտնում նաև աշխարհահռչակ «չալախ» սորտը:

Այս խմբում կան թե սեղանի և թե կոնսերվային ու չոր-մրդալին սորտեր: Ստորև տալիս ենք վերև հիշատակված ենթախմբերի սորտերի նկարագրությունը:

ՄԵՂԱՆԻ ՍՈՐՏԵՐ

Սեղանի սորտերն իրենց հատկություններով դերագանցում են հասունացման վաղ ժամկետի սորտի պտուղներին: Նրանք համարյա բոլորը լայն տարածված են Արարատյան դաշտում և նախաբևեռային դոտում ու բարձր բերք են տալիս: Նրանցից մի քանիսը համեմատաբար մեծ չափով են դիմանում սառնամանիքներին և մտել են Հայկ. ՍՍՌ-ի բևեռային շրջանների ասորտիմենտի մեջ:

Սեղանի սորտերի թվին են պատկանում հետևյալ սորտերը. չալախ, բաղամ-արիկ, դյառ-դյառ և մի շարք սերմնարույսեր: Անցնենք դրանց նկարագրությունը:

Շալախ (նշանակում է շահին վայել): Շալախ սորտն ամենատարածվածն է ծիրանի տեղական սորտերի մեջ: Այն հանդիպում է ծիրանի մշակության բոլոր ուսյուններում և հանդիսանում է հիմնական սորտը բոլոր արդյունաբերական այգիներում:

Ծառերը երկարակյաց են, խիտ բերքատու և ամեն տարի

բերք են տալիս: Մեկ ծառի միջին բերքը տատանում է 70—ից 110 կիլոգր. միջև, բարձր բերքը հասնում է 384—454 կիլոգր.—ի: Սկսում է պտուղներ տալ 3—4-րդ տարում և 10 տարեկան հասակից արդեն զգալի բերք է տալիս— 50—60 կիլոգր.: 60 տարեկան ծառը ևս լավ բերք է տալիս:

Ստանամանիքներին դիմանալու տեսակետից ծիրանի տեղական սորաների մեջ հանդիսանում է ամենակայուն սորաներից մեկը (ըստ հայանի ֆիլիոլոգիական լաբորատորիայի տվյալների):

Շալախը համեմատաբար քիչ է վարակվում նաև «ծակոտկեն բծափորությունից» (ըստ Հայկ. ՄՍՍ-ի Բույսերի պաշտպանության և Այգելոպարոսիական կաթանների տվյալների):

Ըստ պտուղների սրակի, թե թարմ վիճակում դորձածելու և թե վերամշակման համար՝ ճանաչված է իբրև լավագույն սորա: Նրա պտուղները պիտանի են նաև չորացման համար:

Շալախն ինքնաստերիլ սորա է. նրա համար լավագույն փոշախիչներ են՝ գյուլջանարաղ, արութալիբի, խտրովչահի և թարարպա սորաները:



Նկ 6. Շալախի ծառը

Ս.յն մտցված է Հայկ. ՍՍՈՒ-ի, Անդրկովկասյան և մյուս
ուրիշ սեպուրբիկաներից շատերի ատանդարտ ասորտիմենտի
մեջ:

Ծառը խիտ մեծ է, 30—40 տարեկան ծառերի բարձրու-
թյունը հասնում է միջին հաշվով 7 մետրի: Բունը սաստիկ խոր-
տուրորտ է, հաստ, մոտ 56 սմ. տրամագծով: Կեղևն ունի դորշ
գույն: Սաղարթը զնդաձև է, փուլած, 11;5—12 մետր տրամա-
գծով, պատած խիտ սերկնեքով:

Միամյա շվերը կարմիր-դարչնագույն են, միջհանգույց-
ներն ունեն միջին երկարութուն:

Ծաղիկները խոշոր են, սպիտակ: Բաժակատերևները կոնաձև
են, որոշ ծաղիկների բաժակատերևները — կլորավուն, ոչ թա-
վոտ: Սմբողջ բաժակը գունավորված է:

Պսակաթերթերը կլորավուն են, եղունգը՝ վարդադույն,
ջղերը՝ սիպտակ:

Տերևները խոշոր են, լայն-ձվաձև: Տերևի դաղաթը նեղա-
նում է միանդամից, ձգված է, երկարավուն:

Տերևաթիթեղը համեմատաբար բարակ է (0,18 մմ), մաշկա-
նման: Վերին մակերեսը մուգ-կանաչ է, փայլուն: Գլխավոր ջի-
ղը հիմքի մոտ կարմիր գույն ունի: Տերևաթիթեղի եղրերը խո-
շոր-երկակի-սուր-ատամնավոր են:


Տերևի միջին չափը՝ 89,9 մմ×78,5 մմ: Կոթին միանալու
տեղը երկարավուն է: Կոթն ունի 40 մմ երկարութուն, գունա-
վորված է միայն վերևի կողմից:

Պտուղները հասունանում են վաղից-միջին ժամկետներում,
հունիսի 25-ից մինչև հուլիսի 15-ը, ըստ որում, մասսայական
հասունացումը տեղի է ունենում հուլիսի 1-ից մինչև 10-ը:
Պտուղները խոշոր են — 50,8 մմ×44,7 մմ×42,5 մմ, և կշռում
են 51 գր. մինչև 65 գր.: Հաճախ հանդիպում են առանձնապես
խոշոր պտուղներ, որոնց քաշը հասնում է 95—100 գր., իսկ մե-
ծությունը — 66 մմ×52 մմ×51,4 մմ:

Պտուղները օլալ են, կողքերից մի փոքր տափակած և պլա-
զակոթի մոտ փոքրիկ, երկարավուն վլիկով: Պտղի դաղաթը
սեղմ է: Զաղարը խորն է, առանձին պտուղների ձաղարը — շատ
խորն է (11 մմ), լայն (6—10 մմ), անկանոն ձևի է, մի փոքր
ծալքավոր եղրերով:

Պաղպղուկը կանաչ է, երբեմն կարմիր երանգավորված, մի
քիչ թափոտ, շատ կարծ, ամուր չի կպած պտղին:

Պտուղը — ոսկեգույն դեղին է, արևի կողմում կարմրու-
թյուն ունի: Կաբմբությունն արմավամորու գույնի նման է և լավ



Նկ. 7 Շաղախի պտուղները

Դրանովորվող պտուղները վրա՝ բռնում է դրանց մակերեսի մինչև 1/2-ը:

Պողի մաշկը բարակ է, ունի մեջակ ամբուլիցուն, թափուված է միջին չափով, պողամսից չի անջատվում: Պողամսն ազատ է կորեղից, ոսկեդույն է, հյութալի, հյութն անդույն է: Պողամսի կազմվածքն ամուր է, մառտ:

Պաղի համը խիստ հաճելի է, քաղցրավուն, քնքույշ բուբ-
մունքով:

Կորիզը մանր է, — 30 մմ×19 մմ×11 մմ, և կշռում է 1,9 գր-
մինչև 2,5 գր., որ կազմում է պտղի քաշի միայն 2,5—3%-ը:
Կորիզը երկարավուն է, ունի վզիկ: Մակերեսը հարթ է, ճեղք-
վածքներով, հաղվադյուռ դեպքերում մի փոքր խորանարդ է:

Կորիզի մակերեսի վրայի ճեղքվածքներն այս սորտի բնորոշ
նշանն են հանդիսանում:

Որովայնախարի բոլոր կողերը պարզ նկատելի են, իսկ միջին
կողն առանձնապես շատ է դուրս ընկած: Բոլոր կողերն էլ սուբ
են:

Թարմ կորիզը բաց-դարչնագույն է:

Միջուկը քաղցր է, ամբողջովին լցնում է կամերան և կշռում
է մոտ 0,6 գրամ, որ կազմում է կորիզի քաշի 31%-ը:

Շալախի պտուղները շաքարի ու չոր նյութերի պարունակ-
ությունները հաստատանի ծիրանների մեջ միջին տեղն են բռնում:

Աղյուսակ № 28

ԾԻՐԱՆԻ «ՇԱՍԱՆ» ՍՈՐՏԻ ՊՏՈՒՂՆԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԸ (% 0/0)

| Ջուր | Չոր նյութեր | Շաքարներ | Սեղանցիկ շաքարներ | Սակարդա | Գլյուկոզ | Պտուղաբյուր նյութ | Քաղցր նյութ | Քիմիկալ նյութ | Մոխիր |
|------------------|------------------|-----------------|----------------------|----------------|----------------|----------------------|----------------|------------------|----------------|
| 80,26— —40,26 | 15,74— —19,60 | 9,91— —14,10 | 2,56— 4,59 | 5,49— —10,0 | 1,42— —3,04 | 0,32— —1,94 | 0,56— —1,03 | 0,22— —0,84 | 0,44— —0,08 |
| 82,70 | 17,45 | 10,67 | 3,55 | 6,68 | 2,35 | 1,42 | 0,94 | 0,53 | 0,56 |

ԲԱԿԱՆ-ԱՐԻՎ

Այս սորտը բավական լաճա չափով տարածված է ծիրանի
մշակութան բոլոր ուայոններում: Հիմնադրություններին և վնաս-
առուներին դիմանալու տեսակետից միջին տեղն է բռնում, բեր-
քատույնները նույնպես միջակ է:

Պտուղները գործ են ածվում բացառապես թարմ վիճակում,
իրենց արտաքին տեսքով հիշեցնում են շալախ սորտի պտուղնե-
րը, բայց որակով զգալիորեն զիջում են նրանց (պաղպակաբ
փերուն է, թունդ ալյուրահամ ունի):

Վերամշակման համար առանձնապես նշանակութուն չունի, որոշ չափով ուշադրութուն է դրախում իր խիստ համեղ սերմերով, դրա համար էլ կոչվում է բաղամ-արիկ, այսինքն նուշ-ծիրան:

Ծառն ունի միջին մեծութուն, 6,35 մետր բարձրութուն. բնի արամազիժը 32 սմ է. կեղևը գորշավուն-դարչնադույն է. սաղարթը փուլած է, դնդաձև, 9 մետր արամազմով:

Միամյա չվերը միջակ հաստութուն ունեն, կարճ միջահան-դույնյներով են, ճիւղն, դարչնադույն:

Ծաղիկներն ունեն միջակ մեծութուն: Բաժակատերևները կոնաձև են, լերկ: Սմբողջ բաժակը դունափորված է, ներսի կողմից կանաչ: Ջղերը կարմիր են, պակասթերթերը — կլորափուն: Եղունգը սպիտակ է, նրա ջղերը — նույնպես սպիտակ:

Տերևները կլորավուն-ձվաձև են: Տերևի դարձաթը ծալված է դեպի ներքև: Տերևի եզրերը երկակի—կլոր-խոշոր-ատամնափոր են: Կոթունին միանալու տեղը երկարավուն է:

Տերևաթիթեղն ունի միջին հաստութուն (0,2 մմ), մաշկանման է:

Տերևի վերին մակերեսը կանաչ դույն ունի: Գլխավոր և կող-վային ջղերը հիմքի մոտ դունափորված են: Ստորին մակերեսի կողմից ջղերը դունափորված չեն:

Տերևներն ունեն միջակ մեծութուն— 77 մմ×67 մմ: Տերև-վակոթը կարճ է — 22,7 մմ, դունափորված է ստորջնովին կամ միայն վերին մակերեսը:

Պտուղները հասունանում են վաղից—միջին ժամկետներում— հունիսի 20-ից մինչև հուլիսի 10-ը, ունեն միջին մեծութուն— 44,7 մմ×35,2 մմ×33 մմ, ու կշռում են 17,5 գր. —ից մինչև 54 գր., միջին հաշվով 30 գր.:

Պտուղները երկարավուն-ձվաձև են, կողքերից մի փոքր տափակացած, հիշեցնում են շալախի պտուղները, բայց վերջինից տարբերվում են նրանով, որ հիմքի մոտ ունեն ամելի երկարափուն, ծալքավոր վզիկ և սրածայր դադաթ: Պաղակոթի մոտ պողի ախտիկն զղալուրեն խորանում է:

Պաղակոթը սրտին թույլ է կնքած:

Ի տարբերություն շալախի պտուղների դույնից, բաղամ-արիկի պտղի դույնը կանաչավուն-դեղին է, սրևի կողմում ունենում է ազնվածորու կարմրութուն:

Մաշկը հաստ է, թույլ թափոտ, պտղամասից չի անջատվում:

Պողոմխըը նարնջադուլն-կանաչավուն է, կորիզից ազատ, չոր, որոշ պտուղների միսը միջակ հյութալիութուն ունի:

Հյութալածքը մի փոքր թեւափոր է, փխրուն: Պողոմխը քաղցր է, որոշ չափով ալյուրահամ է տալիս, անուշաբույր է:

Կրիզը բավական խոշոր է, — 30 մմ×16 մմ×10 մմ, և կըլուում է 1,8 դր. մինչև 3 դր., որ կազմում է պղի քաշի 6%-ը: Ունի երկարավուն ձև ու երկար վիզիկ: Ի տարբերութուն շալախի կորիզներից, բազամ-արիկի կորիզի մակերեսը խորտուբորա է, փոսիկներով:

Որովայնակարի բոլոր կողերը սուր են և լավ նկատելի:

Կորիզը մուգ-դարչնագույն է: Միջուկը խոշոր է, կազմում է կորիզի քաշի 30—40%-ը, խիստ համեղ է:

ԳՅԱՌ-ԳՅԱՌ

«Գյառ-դյառ» սորաը լայն տարածված է Աշտարակի շրջանում: Այն, ինչպես համբան ու ղեփոնգի սորաերը, սրլիտակաժիս է, նրա սրտուղներն ևս ղիմանում են երկարատև փոխադրության: Բերրի սորա է:

Ծառը խիստ մեծ է, կեղևը՝ դորշ, ճյուղերը դարչնագույն, բարակ:

Ծառի սաղարթը կըրտալուն է, փուլած, 8—9,75 մետր տրամագծով:

Տերևները ձյաձև են, դեպի ներքև դարձած դադաթով: Տերևաթիթեղն ունի միջին հաստութուն, մաշկանման է: Տերևի երկու կեսերը սիմմետրիկ չեն: Տերևի եզրերը սուր-ստամանավոր են, կոթին միանալու տեղը երկարավուն է:

Տերևն ունի միջին մեծութուն — 42 մմ—100 մմ×36 մմ××95 մմ: Հաճախ հանդիպում են 66 մմ×58 մմ ծաղալ ունեցող տերևներ:

Պտուղները հասունանում են վաղից-միջին ժամկետներում— հունիսի 5-ից մինչև 15-ը, ունեն միջին մեծութուն կամ մանր են, միջին հաշվով— 43 մմ×42 մմ×39 մմ, ու կշռում են 33 դր. մինչև 60 դր., միջին հաշվով— 42 դր.:

Պտուղները կըրտալուն են, կողքերից տախիակած, պողակոթի մոտ բշտիկավոր, մի բան, որը բնորոշում է այս սորաը: Պղի դադաթը սեղմ է:

Այլոսիկը՝ պտուղը բաժանում է անհավասար մասերի:

Պտուղն ունի կանաչավուն-դեղին գույն, հաղիվ նկատելի բաց կարմրությամբ:

Մաշկը հաստ է, ամուր:

Պտղամիսը սպիտակ է, կանաչավուն երանգավորումով, ա-
մուր է, քիչ հյութալի:

Պտուղը քաղցրահամ է, առանց բուրմունքի. ալյուրի համ
է զգացվում:

Կորիզը ձվաձև է: Հանդիսվում են նաև կլորավուն կորիզներ:
Կորիզի մակերեսը խորտուբորտ է: Որտոյանակարի բուրբ կողերը
դուրս են ընկած, բայց սուր է միայն միջին կողը:

Թիկնահարը բաց է միայն հիմքի մոտ կամ միաժամանակ
նաև դադաթի մոտ:

Կորիզն ունի միջին մեծություն. միջին հաշվով— 28 մմ×
×22 մմ×11 մմ, ու կշռում է 1,4 գր. մինչև 2,9 գր., միջին
հաշվով— 1,8 գր., որ կազմում է պտղի ամբողջ քաշի 4%-ը:

Կորիզը բաց-դարչնադուրս է, միջուկը քաղցր է և կազմում
է պտղի ընդհանուր քաշի 33%-ը:

Երևան քաղաքի աղբիներում «դյառ-դյառ» անվան տակ սբա-
տահում է մի բուրբովին ուրիշ ժորտ: Դրա պտուղները մանր են
կամ միջակ մեծություն ունեն, միջին հաշվով— 41,5 մմ×40 մմ
×39 մմ, ու կշռում են 25 գր. մինչև 52 գր., խոկ միջին հաշ-
վով— 34 գր.:

Պտուղները կլորավուն են, նարնջադուրս, արևի կողմում
ազնվամորու կաթմբությամբ: Պտղամիսը նարնջադուրս է, կորի-
զից ո՛չ բուրբովին ազատ, հյութալի է. հյութը ոսկեդուրս է:
Պտուղը քաղցրաթթու համ ունի և թույլ բուրմունք:

Կորիզը մանր է, կազմում է պտղի ամբողջ քաշի 3%-ը:

Սերմը քաղցր է, լիքը, կազմում է ամբողջ կորիզի 39%-ը:

ԿՈՆՍԵՐՎԱՑԻՆ ՍՈՐՏԵՐ

Վաղից-միջին ժամկետներում հատուկացող կոնսերվացին
սորտերի թվին են պատկանում արդյունաբերական ուսյունների
լավագույն սորտերը, որոնք աչքի են ընկնում իրենց համի բար-
ձրը հատկություններով և պտուղների խոշորությամբ:

Նրանց պտուղներից ստացվում են բարձրորակ կոմպոտներ և
միայն քչերն են սխտանի՝ պյուրե պատրաստելու համար:

Այս ենթախմբի մեջ մտնում են շալախ, ավթալիբի, բալ-
ասրիմի սորտերը և խարջու. մի քանի վարիացիաները:

Ստորև բերվում է այս ենթախմբի մեջ մտնող առանձին
սորտերի նկարագրությունը:

Շալախ: Այս սորտի նկարագրությունն արդեն սորված է սե-
ղանի սորտերի ենթախմբում:

Ըստ պատույնների հասկումից՝ այս սորաը տեղական պատվաստման սորաների մեջ մերջին տեղերից մեկն է բնուում, արժեքավոր է միայն պատույնների խոշորութեան պատճառով: Պատույնները պիտանի են կոնսերվի համար:

Այս սորաը միջին չափով տարածված է Մեղրու շրջանում: Հետագա տարածման հետանկարներ չունի:

Մտաը խիստ մեծ է, 5—7 մետր բարձրութեամբ, դնդան կամ փռված սաղարթով, որի արամալիծը 6—10 մետր է:

Տերևները կլորածն են, սրածայր դաղաթով: Տերևաթիթեղը մաշկանման է, կակիկ եղբերը նուրբ-ատամնալոր են, տերևները խոշոր են կամ միջին մեծութուն ունեն, —88 մմ—100 մմ×80 մմ—90 մմ:

Պտուղները հասունանում են մաղից-միջին ժամկետներում. Մեղրու պայմաններում պատույնները համարվում են միջին ժամկետներում— հունիսի 25-ից—հունիսի 5-ը հասունացողներ և ունեն միջին մեծութուն — 45 մմ—50 մմ×30 մմ—45 մմ×35 մմ—40 մմ, 30 գր. մինչև 50 գր. քաշով:

Պատույնները ձյան են, ոչ սխմեարիկ:

Պաղի դաղաթը կլորափուն է, մաշկը հաստ, միջակ թափուտութեամբ, պտղամսից չի անջատվում:

Պատույնը դեղնադույն է, առանց կարմրութեան:

Պտղամիսը դեղնափուն-սպիտակ է կորիզից հեշտ անջատվող, քիչ հյութալի, քիչ թեղալոր, մտալի, փխրուն:

Համը միջակ է, քաղցրաթիթու:

Կարիզն ունի երկարափուն-կլոր ձև ու խորտուբորտ մակերես: Որովայնակարի վրա բոլոր կողերը դուրս են բնկած, բաց սուր է միայն միջին կողը:

Թիկնակարը բարձրովին ծածկված է կարկի ամբողջ երկարութեամբ:

Կորիզն ունի միջին մեծութուն, 2—3 գր. քաշ, սր կաղնում է պտղի ամբողջ քաշի 6%-ը:

Կորիզը բաց-դարձնազույն է, միջուկը— քաղցր, կաղնում է ամբողջ կորիզի 40%-ը:

ԲԱՆ-ՅԱՐԻՄԻ

Այս սորաը խիստ բերրի է, դիմանում է սնկային հիվանդութուններին և մասսատուններին: Աճում է միայն Մեղրու շրջանում, ուր բավական քիչ է տարածված:

Մացված է Մեղրու ուայսնի ստանդարտ ասորախմենուի մեջ:
Արժանի է յայն տարածման:

Ծառք մեծ է, ուժեղ աճող, 5—7 մետր բարձրությամբ,
կորացած սողարթով, 6—10 մետր տրամագծով:

Կեղևը դուրչ է: Ճյուղերն ունեն միջին հաստությույն: Միա-
մյա շվերը երկար են, բարակ, դարձնազույն:

Տերևները սրտաձև են: Տերևի դազաթը կարճ է, դանդում
է գլխավոր ջղի հետ միեկնույն մակարդարկի վրա:

Տերևաթիթեղն ունի միջին հաստությույն, մաշկաման է,
կոկիկ:

Տերևի երբերը բարակ-սուր-ասամնածե են: Գույնը մուգ-
կանաչ է:

Տերևն ունի միջին մեծությույն, այն է՝ 36 մմ—90 մմ×
×72 մմ—88 մմ: Հաճախ հանդիպում են տերևներ, որոնց մե-
ծությույնը կազմում է 81 մմ×76 մմ-ով:

Տերևակոթը երկար է, 35-ից մինչև 48 մմ:

Պտուղները հասունանում են վաղից-միջին ժամկետներում—
հունիսի 2-ից մինչև 10-ը: Մեղրու շրջանի պայմաններում դրանք
ուշ հասունացողներ են:

Պտուղները մանր են կամ ունեն միջին մեծությույն, — 33 մմ—
—41 մմ×33 մմ—42 մմ×33 մմ—38 մմ: Հաճախ հանդիպում են
սրտաձևեր, որոնք ունեն 38 մմ×38 մմ×35 մմ մեծությույն, և
կշռում են 17 գր. մինչև 38 գր., միջին հաշվով— 31 գր.:

Պտուղները կլորավուն են, սիմմետրիկ, դազաթը կլորավուն:
Չազարե ունի միջին մեծությույն (5 մմ×9 մմ):

Մաշկը բարակ է, մի քիչ խավոտ, պտղամսից չի անջատ-
վում:

Պտղի գույնը կանաչավուն-սպիտակ է, արևի կողմում
կարմրությույն ունի:

Պտղամիսը ղեղնավուն-սպիտակ է, հյութալի, թույլ թեւա-
վորված, մսոտ: Համը շատ յուսվ է, քաղցր, ուժեղ բուրբուն-
քով:

Կորիզը սավակ-կլորավուն է, խորտաբորտ մակերեսով:
Որովայնակարի վրա խիստ դուրս է ընկած միջին կողը:

Թիկնակարը բացված է միայն հիմքի մոտ և ծածկված է
բազմաթիվ ծակոտիներով:

Կորիզը կպած է պտղամսին, ունի միջին մեծությույն, կըշ-
ռում է 1,7 գր., որ կազմում է ամբողջ պտղի քաշի 5,5%-ը:

Կորիզը մուգ-դարձնազույն է:

Միջուկը քաղցր է, լիքը:

Այս խմբի շարքը կարելի է դասել նաև խարջիներից մի քանիսը՝ № № 1 և 2-ը (Նորադյուղ), որոնք առանձնապես հետաքրքիր են նրանով, որ դիմանում են սառնամանիքների և սնկային հիվանդություններին :

ԶՈՐ ՄԻՐԳ ՏՎՈՂ ՍՈՐՏԵՐ

Այս ենթախմբի մեջ մտնող սորտերն աչքի են ընկնում շաքարների ու չոր նյութերի բարձր պարունակությամբ : Տալիս են տրտաղբանքի բարձր ելանք և բարձրորակ չոր միդդ :

Պտուղները մանր են կամ միջին մեծություներ ունեն :

Այս սորտերի թվին են պատկանում բաղամի, աղջանաբաղ, խարջի № 75 և խուրմեյի սորտերը :

Անցնենք դրանցից յուրաքանչյուրի նկարագրությունը :

ԲԱԴԱՄԻ

Այս սորտը հանդիպում է իբրև հատուկնա ծառեր հին այգիներում :

Նրա պտուղները տալիս են բարձրորակ չոր միդդ, որ իր հատուկություններով չի դիջում միջին-ասիականին : Տալիս է արտաղբանքի մեծ ելանքը : Փորձնական չորացման ավյալների համաձայն, նրանից ստացված է 32% չորացրած միդդ ելանք :

Կայանի կողմից այն հանձնարարվում է՝ չոր մրդերի պատրաստման ուսյուններում լաջն չափով տարածելու համար :

Ծառն ունի միջակ մեծություն, 5,5 մետր բարձրություն և բնի 31 սմ տրամագիծ :

Կեղևը դորչալուծ-կիլնամոնազույն է : Սաղարթը դնդաձև է, 7,5 մետր տրամագծով : Միամյա չվերը միջին երկարություն և միջին հաստություն ունեն :

Տերևները խոշոր են, սրտաձև : Տերևի դաղաթը մի փոքր հակված է դեպի ներքև : Տերևաթիթեղը բարակ է, մաշկանման : Տերևի վերին մակերեսը վառ-կանաչ է : Գլխավոր ջիղը հիմքի մոտ գունավորված է :

Տերևի եզրերը խոշոր-կլորալուծ-ստամնալոր են : Կոթունի միացման տեղը երկարալուծ է : Տերևի մեծությունը՝ միջին հաշվով — 81 սմ×79 սմ :

Կոթունը գունավորված է, ունի 22 սմ—55 սմ երկարություն, միջին հաշվով — 38,6 սմ :

Պտուղները հասունանում են վաղից-միջին ժամկետներում— հունիսի 25-ից մինչև հուլիսի 10-ը 9 Միջակից պակաս մեծու-

Թյուն ունեն. միջին հաշվով— 42 մմ×37,2 մմ×34,2 մմ: Կշռում են 24,7 գրամից մինչև 36,5 գր., միջին հաշվով— 30 գր.:

Պտուղները ձվածե են, կողքերից մի քիչ սեղմված: Պտղի դադաթը սեղմված է:

Ակոսիկը պտղակոթի մոտ խորն է:

Պտղի դույնը կանաչավուն-դեղին է, արևի կողմում աղնվա-մորու թույլ-կարմրությամբ:

Մաշկը հաստ է, մի փոքր թավոս:

Պտղամիսը բացնարնճադույն է՝ հյութալի, հյութն (անհ. դույն է: Պտղամսի կազմվածքը քիչ թելավոր է, քնքույշ, հալչող:

Պտուղը քաղցր է, յուրահասուել հաճելի համով, խիստ բուրավետ է:

Կորիզը երկարավուն է, հիմքի մոտ ունի վղիկ: Մակերեսը մի փոքր անհարթ է: Կորիզը խոշոր է, միջին հաշվով— 24 մմ×12 մմ×10,5 մմ:

Որովայնակարի կողերը դուրս են ընկած՝ միայն կատարի մոտ, և բոլորն էլ սուր են:

Թիկնակարը բացված է հիմքի և ծայրի մոտ:

Կորիզը բաց-դարչնադույն է: Կորիզի վրա նկատվում են սպիտակ բծեր, որ բնորոշ է տվյալ սորտի համար:

Միջուկը քաղցր է, լիքը, կշռում է մինչև 0,6 գրամ:

Վերևում մենք մատնանշել էինք, որ ձևերի բաղմադանությամբ առանձնապես հարուստ են այն ծիրանները, որոնք բաղմացվում են սերմերով և տեղական բնակչության մեջ հայտնի են «խարջի» կամ «ջրո» ընդհանուր անվամբ:

Քանի որ դրանք սերմերով են բաղմացվում, այս խումբն աչքի չի ընկնում միատեսակությամբ և նրա սահմաններում մեծ քանակությամբ վարիացիաներ են նկատվում:

Ծիրանների այս խմբի բնորոշ հատկությունն է հանդիսանում նրանց համեմատական դիմացկունությունը ցրտերի նկատմամբ, իմունիտետը մեկային հիվանդությունների հանդեպ ինչպես և երաշտին դիմանալը:

Խարջու ծառերն աչքի չեն ընկնում ուժեղ աճեցողությամբ և նրանց մեծամասնության համար բնորոշ է սաղարթի կորացած ձևը:

Պտղաբերությունն ուժեղ է, պտուղները համեմատաբար մանր են, աչքի են ընկնում այլուրահամով և բավական ուժեղ բուրմունքով: Նրանց պտուղների հասունացումը զուգադիպում է վաղից-միջին մինչև ուշ հասունացող սորտերի հասունացման փուլերին:

Դրանք օդապարծիւում են պովիզը, պլուրե պատրաստելու և չորացման համար :

Խարջու հիմնական մասան տարածված է Դարբաղայազում և Մեղրիում :

Ավելի քիչ քանակութեամբ դրանք հանդիպում են նաև ծխրանի մշակութեան մնացած բոլոր սոսոյններում :

ԽՆՐՁԻ № 75 (ԿԱՅԱՆԻ ԿՈՒՆԿՅՈՒՆ ԱՅԳԻ)

«Խարջի»-ի սերմնաբույսերի մեջ մենք հայտարարել ենք մի վարիացիա, որը պատուհների արտաքին տեսքով և նրանց համի արժանիքներով խիստ հիշեցնում է թաբաղա սորտը: Նրա պատուհներն ավելի խոշոր են, քան թաբաղայինը, պիտանի են չորացնելու և թարմ միճակում գործածելու համար: Այս վարիացիան կարող է մեծ հեռանկարներ ունենալ մրգերի չորացման սոսոյններում տարածվելու համար, որովհետև բավական դիմացկուն է՝ ծակոտկեն-բծախորութեան հիվանդութեան նկատմամբ:

Փառը խիստ մեծ է, գնդաձև, ընդարձակ սողարթով:

Տերևներն ունեն միջին մեծութուն, այն է՝ 81 մմ×76 մմ, ու երկար կոթ — մինչև 32 մմ:

Տերևաթիթեղը ձվաձև է, հաստ, կոկիկ: Տերևի երկու կետերը ծալված են դեպի վեր, սիմետրիկ են:

Տերևն ունի մուգ-կանաչ դույն, եղբերը կլոր-բարակ-ատամնաձև են:

Պտուղները հասունանում են վաղից-միջին ժամկետներում — հուլիսի 6-ից մինչև 10-ը, ունեն միջին մեծութուն, այն է՝ միջին հաշվով — 40 մմ×41 մմ×37 մմ. կշռում են 30 գր. մինչև 40 գր., միջին հաշվով — 35,6 գր.:

Պտուղները կլորաձև են, ծայրերից ու կողքերից մի փոքր տափակացած: Պտղի դադարին ևս տափակ է:

Պտուղն ունի կանաչավուն — դեղին դույն, վառ կարմրութեամբ, որ բնորո՞ւմ է պտղի 1/2-ը: Մաշկը հաստ է, ամուր, հաճախ մերկ:

Պտղամիսը նարնջավուն է, չոր, կորիզից ազատ: Կազմվածքը պինդ է, մսալի:

Պտուղը քաղցր է, յուրահասուկ համով ու բուրմունքով, հիշեցնում է թաբաղա սորտի համը:

Կորիզը խոշոր է, նրա քաշը կազմում է պտղի ամբողջ քաշի մոտ 7% -ը: Ունի կլորավուն ձև, խորտուբորտ մակերևույթ: Որովայնակարի վրա պարզ աչքի են ընկնում կողերը՝ խիստ դուրս

են ընկած, սուր են: Թիկնակարը բացված է ամբողջ երկարու-
թյամբ:

Կորիզը մուգ-դարչնագույն է, միջուկը—բաղբը, լիքը:

ԵՆԻՐՄԵՅԻ

Անունը «խուրմա» բառից է: Պտուղները ձևով ու քաղցրու-
թյամբ հիշեցնում է խուրման: Այս սորտը բարձր բերք է տա-
լիս: Համեմատաբար դիմացկուն է հիվանդությունների ու վնաս-
աստուների նկատմամբ: Պտուղները պիտանի են չորացնելու,
կոնսերվա պատրաստելու և թարմ միճակում դործածելու հա-
մար: Այս սորտը բավական տարածված է Մեղրու շրջանում:

Մացված է Մեղրու շրջանի պաշտոն կուլտուրաների ասոր-
տիվներով, մեջ:

Ծառը խիստ մեծ է, 10 մետր բարձրությամբ, տափակ-
դեղածև սաղարթով:

Տերևները սրածև են, միջին չափի են, — 75 մմ—100 մմ×
65—105 մմ, հաճախ — 85 մմ×88 մմ:

Տերևաթիթեղի եզրերը կլորավուն-ատամնաձև են:

Պտուղները հասունանում են վաղից միջին ժամկետում.
Մեղրու պայմաններում համարվում են ուշ հասունացող — հու-
լիսի 5-ից մինչև 10-ը: Ունեն միջին մեծություն — 39 մմ×
×37 մմ×38 մմ, ու կշռում են 30—36 գր.: Կլորածև են, ոչ
սիմետրիկ, ունեն տափակ դադաթ:

Մաշկն ունի միջին հաստություն, ամուր է, միջին չափով
թափոս, պտղամսից դժվարությամբ է բաժանվում:

Պտուղն ունի կրեմի դուրճի վարդագույն թույլ կարմրու-
թյամբ:

Պտղամիսը միապաղաղ կրեմի դուրճի է, քիչ հյութալի,
ամուր, մսալի: Համը միջակ է, քաղցրաթթու, թույլ բուր-
մունքով, խիստ զբաղվում է ալյուրի համը:

Կորիզը ձվաձև է, սրածայր դադաթով: Մակերեսը ծակոտկեն
է: Որովայնակարի վրա խիստ դուրս է ընկած միջին կողը, բայց
քուրք կողերը սուր են:

Թիկնակարը բացված է կամ ամբողջ երկարությամբ, կամ
միայն հիմքի ու ծայրի մոտ: Կորիզն ունի միջին մեծություն,
կշռում է 1,5 գր. մինչև 2,5 գր., որ կազմում է պտղի ամբողջ
քաշի 6%-ը:

Կորիզը մուգ-դարչնագույն է, մի փոքր կպած է պտղամսին:
Միջուկը քաղցր է, զբաղվում է թույլ դառնություն, միջուկի
քաշը կազմում է ամբողջ կորիզի քաշի 34%-ը:

Այս սորսը բախական տարածված է, առանձնապես դնո-
հատում է բնակչութեան կողմից, որովհետև պտուղները խիստ
քաղցր են: Աճում է Արարատյան դաշտի բոլոր ռայոններում:
Քիչ հեռանկար ունի, որովհետև պտուղները խիստ մանր են և
շատ են վնասում ծակոտիկն բծավորութեանից: Ավելի մեծ
նշանակութեան կարող է ունենալ միայն նրա մի վարկացիան,
որ կոչվում է «նուրի» և աղջանաբաղից տարբերվում է ավելի
խոշոր պտուղներով և մեծ չափով զվանում է ծակոտիկն բծա-
վորութեանը:

Պտուղները պիտանի են չորացման համար, (չորացվում են
առանց կորստելու) և թարմ վիճակում դործածելու համար:

Ծառը խիստ մեծ է, 9,7 մետր բարձրությամբ և բնի
35—38 սմ տրամագծով:

Բաղմամյա ճյուղերի կեղևը կարմրավուն-դարչնագույն է:
Ճյուղերը դարչնագույն են, բարակ, միջին երկարութեամբ: Սա-
ղարթը դեղածև է, 9—12 մետր տրամագծով:

Ծաղիկները խոշոր են, սպիտակ:

Բաժակատերևները կլորավուն են, դեղձոտ, թույլ թափոտ-
լիքը կարմիր են:

Պսակաթերթերը կլոր են, վարսանդը ծալված է, թույլ թա-
փոտ, առեղծնրից կարծ:

Տերևները խոշոր են, կլորավուն, դադաթի մոտ սուր ծալ-
րերով:

Տերևի դադաթը կարծ է, մի փոքր սլորված, դեպի ներքև
ծալված:

Տերևաթիթեղը հաստ է, կոկիկ, վերին մակերեսը բաց-կա-
նաչ է, փայլառ, կողքի շղերը և զվառվոր ջիղը հիմքի մոտ
դունավորված են:

Տերևի եղրերը խոշոր-կլորավուն-առանձնավոր են: Կոթունի
երկարութեանը 20-ից մինչև 50 մմ է և միջին հաշվով հավասար
է 38 սմ:

Պտուղները հասունանում են վաղից միջին ժամկետներում—
հունիսի 27-ից մինչև հուլիսի 10-ը, շատ մանր են. միջին հաշ-
վով— 31 սմ×33 սմ×29 սմ, ու կշռում են 13 գր. մինչև 27
գր. միջին հաշվով— 21 գր.:

Պտուղները տափակ-կլորավուն են:

Պողի դադաթը տափակ է: Չափաբը լայն է (6,5 սմ), տա-
փակ (4 սմ), ուղիղ:

Պտղի դույնը դեղնավուն-սպիտակ է, ալմամորու թույլ կարմրությամբ:

Մաշկը հաստ է, հասունացած պտուղների մաշկը մասամբ անջատվում է պտղամսից, ամուր է:

Պտղամիսը սպիտակ-սպիտակ է, կորեղին չկաձ, հյութալի: Հյութն անդույն է:

Պտղամսի կազմվածքը թույլ-փխրուն է, մսալի, քիչ թե-լալոր: Խիստ քաղցրահամ է, առանց բուրմունքի:

Կորիզը խոշոր է. միջին հաշվով— 18 մմ×16 մմ×10,7 մմ, ու կշռում է 0,7 գր. մինչև 2 գր.: Կորիզը կազմում է պտղի քաշի 5%-ը:

Կորիզը կլորալուն է, մակերեսը կոկիկ: Թիկնակարը բացված է ամբողջ երկայնքով, որ բնորոշ է այս սորտի համար: Մի քանի պտուղների թիկնակարը բացված է միայն դադաթի և հիմքի մոտ: Որովայնակարի բոլոր կողերը դուրս են բնկած, իսկ միջին կողն ավելի շատ է դուրս բնկած, սուր է:

Կորիզը դարչնադույն է:

Միջուկը քաղցր է, կազմում է կորիզի քաշի 39%-ը:



Այս խմբին են պատկանում նաև Միկոյանում աճող սերմնաբույսերը:

Այդ շրջանում առբաժված են բացառապես սերմնաբույսերը— խարջին: Ծնորհիվ այն հանդամանքի, որ շրջանը հեռու է ուղառող կենտրոններից և այնտեղ կոնսերվի գործարան չկա, բնակչութունը բազմացրել է չորացման համար պիտանի սորտեր: Վարիացիաների ճնշող մեծամասնության պտուղները քիչ հյութալի են, քաղցր, փխրուն, զգալի ալյուրահամով: Դրանցից մենք ջուկել ենք առավել խոշոր և քաղցր պտուղներ սենցոզ փոփոխակները, որոնք բազմացվում են այդ շրջանում. դրանք են՝ № 2-ը Միկոյան գյուղում, № 9-ը— Օրդաքյանը գյուղում, № 27-ը Գեոտափ գյուղում և այլն:

ՀԱՍՈՒՆԱՑՄԱՆ ՄԻՋԻՆ ԺԱՄԿԵՏԻ ՍՈՐՏԵՐ

Տեղական ծիրանների ճնշող մեծամասնությունը պատկանում է հասունացման միջին ժամկետների սորտերին: Դրանց պտուղները հասունանում են հուլիսի 10—15-ից մինչև 30-ը:

Այս խմբի մեջ մտնող սորտերը լայնորեն տարածված են ծխ-
լանի մշակութայն համարյա բոլոր ուսյուններում :

Դրանց պտուղները բարձրորակ են, իրենց որակով դիջում
են միայն միակից-միջին ժամկետներում հասունացող սորտերին :

Այս խմբի սորտերի մեծ մասը չոր-մրգային է, բայց դրանց
մեջ կան նաև սեղանի ու կոնսերվի սորտեր :

ԿՈՆՍԵՐՎԻ ՍՈՐՏ՝ Բ

Միջին ժամկետներում հասունացող կոնսերվային սորտերի
թվին են պատկանում խոսրովչահին, նուշ-ծիրանը, թաբարզան,
խոյլին և խարջի № 13-ը :

Դրանց պտուղները խոշոր են կամ միջին մեծություս ունեն :
Տալիս են բարձրորակ կոմպոսներ և քաղցրամիսիք : Ստորև բեր-
վում է այս ենթախմբի մեջ մտնող առանձին սորտերի նկարա-
չրությունը :

ԽՈՍՐՈՎՇԱՀԻ (ԽՈՍՐՈՎՇԱՀԻ ՊՏՈՒՂ)

Այս սորտն ըստ երևույթին ներմուծված է Իրանից, ինչպես
ցույց է տալիս նրա անունը : Բավական տարածված է, բայց
ավելի քիչ, քան շալախը և թաբարզան : Հանդիպում է գլխավո-
րապես Երևան քաղաքի հին աղբիներում, ինչպես նաև Արարա-
տյան դաշտի նորատունի աղբիներում : Կոնսերվի արդյունաբե-
րության մեջ հիմնական հումք է հանդիսանում և իր նշանակու-
թյամբ դիջում է միայն շալախին :

Այս սորտի ծառերը երկարակյաց են և բարձր բերք տվող-
շալախից հետո բերքի քանակությամբ երկրորդ տեղն են բռնում :

Լիակատար պողպերության ժամանակաշրջանում ծառը
տալիս է 90 կիլոգր. մինչև 110 կիլոգր. պտուղ, բարձր բերքի
դեպքում— մինչև 270 կիլոգր. : Ստանամանիքներին և ծակտակեն
բծավորությանը դիմանալու նկատմամբ տեղական սորտերի մեջ
միջին տեղն է բռնում :

Ինչպես և բոլոր տեղական սորտերը, խոսրովչահին ինքնա-
ստերիլ է : Նրա համար լավագույն փոշոտիչներ են հանդիսանում
արուժախիբին, շալախը և դյողջանաբաղը :

Խոսրովչահին կոնսերվի ու սեղանի առաջնակարգ սորտ է
համարվում, տալիս է նաև բարձրորակ չոր միրգ : Չոր մրգի
արտադրանքը կազմում է 18,8% : Կոնսերվի արդյունաբե-
րության դռաիններում զարգացման մեծ հեռանկարներ ունի :

Խոսրովչահին մտցված է Հայկ. ՍՍՍԻ և մի շարք ուրիշ ուս-
պուրիկաների ստանդարտ ասորտիմենաի մեջ :

Ծառը խոտ մեծ է, ուժեղ զարդացած. 60 տարեկանից ա-
վելի ծառերի բարձրութիւնը հասնում է 9,6—10,5 մետրի,
սաղարթի արամագիծը—11,3—12,6 մետրի, իսկ բնի արամագի-
ծը— 1 մետր 10 սմ-ի:

Սաղարթը կլորալուն է, լիոված: Հիմնական ճյուղերը
զարչնազույն են, կամ՝ զարչնազույն-դորչ: Միամյա շիւթը
կարմրալուն-զարչնազույն են, փայլուն միջահասնողույցները
կարճ են:

Ծաղիկները խոշոր են, սպիտակ:

Բաժակատերևները կլորալուն են, դեղձուտ, մերկ: Սմբողջ
բաժակը դուռնալորված է, ներսի կողմից նարնջազույն է, ջղերը
կարմիր են:

Պսակաթերթերը հարթ-կլորալուն ձև ունեն:

Վարսանդն ուղիղ է կանոնած, առեջքներից ալելի երկար է:

Տերևները խոշոր են, տափակ-կլորալուն կամ սրտածև:

Տերևի դադաթը նեղամուտ է մի անդամից, ձգված է դեպի ներ-
քե: Տերևաթիթեղի եղրերը երկահիւ — սուր-խոշոր-ատամնածև
են: Տերևաթիթեղը հաստ է (0,4 մմ): Վերին մակերեսը դեղնա-
դուն-կանաչ է, փայլուն, ջղերի երկարութեամբ մի փոքր խա-
վոտ: Ստորին մակերեսը սպիտակալուն-կանաչ է, փայլատ,
ջղերի երկարութեամբ թափոտ: Գլխավոր ջղը հիմքի մոտ կար-
միր դույն ունի: Կոթունին միանալու անող երկարալուն է: Տե-
րևի մեծութիւնը— միջին հասցիով— 74,4 մմ×80,6 մմ:

Կոթունն ունի միջին երկարութիւն— 33,8 մմ:

Պտուղները հասունանում են միջին ժամկետներում— հունիսի
5-ից մինչև 25-ը, ունեն միջին մեծութիւն, այն է՝ 37 մմ×36
մմ×34 մմ, կշռում են 28 գր., բոտ սրում ամենախոշորները—
55 գր., իսկ մանրերը — 11 գր.:


Պտուղները կլորալուն են, կողքերից մի քիչ ներս ընկած:
Պողի դադաթը կլորալուն է, կամ մի քիչ սեղծ:

Չադարն ունի միջին խորութեան կամ լինում է խորը,—
4,7 մմ-ից մինչև 9 մմ:

Պադակաթը դորչ դույնի է, մի փոքր թափոտ, թույլ է ամ-
րացված պողին:

Պտուղն ունի սուկ-դեղին դույն, լուսափորփող (արևի) կող-
մում ազնոյամորու կարմրութեամբ:

Բաշկն ունի միջին հաստութեան, պարամուկից չի անջատ-
վում, մի քիչ թափոտ է, ամուր: Պաղամիւր սուկեղույն-կար-
մրալուն է, կտրելին կարծ չէ, հյութալի է: Հյութն անուրյն է
կամ սուկեղույն:



Նկ. 8. Խոսրովշահ-պտուղները.

Պողամսի կազմվածքը թիչ թեթևաբար է, մսոտ, միջակ ամրաթխամբ:

Պաղի համը հանելի է, քաղցրաթթու, թույլ բուրմունքով:

Կարիզն ունի միջին մեծություն և կազմում է պողի քաշի 4%-ը: Չվաճն է, փոքրիկ ծալքավոր վզիկով և խորտուրտրա մակերեսով:

Թիֆլիսեցիները բաց է հիմքի և գաղափար մտա :

Ռեզոլյուցիաների վրա խիստ դուրս է ընկած միջին կողմը, իսկ մյուս կողմերը քիչ են դուրս ընկած, հիմքի մաս չքանում են : Կողմերը սուր են :

Կորիզը բաց-դարձնադուրս է :

Միջուկը բացույց է, կշռում է 0,3 գր. մինչև 0,8 գր., միջին հաշվով— 0,49 գր., և կազմում է կորիզի ընդհանուր քաշի 40%-ը :

Ինչպես չարսի, այնպես էլ խոտրովչահու պտուղները հարուստ չեն չարսով և չոր նյութերով :

Աղյուսակ № 22

ԵՌՍՐՈՎՇԱՆԻ ՍՈՐՏԻ ՊՏՈՒՂՆԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԲԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ (0/0 0/0)

| Չուր | Զուր նյութեր | Շաքարներ | Սեղանկղզի- չաքարներ | Սախարոս | Պլուկոզ | Ուսոնոս | Քաղանկե- նյութ | Քիմիկալ | Մոխիր |
|--------|--------------|----------|------------------------|---------|---------|---------|-------------------|---------|-------|
| 77,02— | 15,11— | 9,92— | 3,12— | 5,73 | 2,29— | 0,48— | 0,22— | 0,2— | 0,59— |
| —34,9 | —22,9 | —13,2 | 6,35 | —8,17 | 3,82 | —2,53 | 1,48 | 1,0 | —0,80 |
| 82,11 | 18,36 | 10,69 | 3,77 | 6,67 | 2,94 | 0,91 | 0,99 | 0,51 | 0,65 |

ՆՈՎՐԱՍ—ԵՌՍՐՈՎՇԱՆԻ

Ծիրանի տեղական սորաների ուսումնասիրության պրոցեսում մենք առանձնացրել ենք խոտրովչահի սորտի մի վարիացիան, որը նրանից տարբերվում է պտուղների ավելի վաղ հասունացմամբ և մի քանի մուրֆոլոգիական հատկանիշներով : Նովրաս խոտրովչահու տերևներն ավելի մանր են, քան սովորական խոտրովչահու տերևները, նրանց մեծությունը միջին հաշվով— 69 մմ×66 մմ : Նովրաս-խոտրովչահու տերևներն ունեն ավելի երկար կոթուն (30—56 մմ) : Տերևի եզրերը բարակ-կլորավուն-ատամնավոր են : Տերևներն ավելի մուգ գույն ունեն :

Պտուղները հասունանում են հունիսի 25-ից մինչև հուլիսի 3-ը. նրանք համեմատաբար ավելի խոշոր են — միջին հաշվով 42 մմ×42 մմ×41 մմ, կշռում են 55 գր. մինչև 60 գր. :

Պտուղներն ավելի բաց գույն ունեն՝ կանաչավուն երանդով : Պողամիսը ոսկեգույն է, կտրվելից ոչ բուրբուլիս ազատ :

Կորիզի սրովայնակարը դադարի մոտ ակոսված է, ինչպես սպիտակ նովրասա սորտի կորիզները:

ՆՈՒՇ-ԾԻՐԱՆ (ԳԱՐԱԼԱԳՅԱԶԻ ՕՐԹԱՔՅԱՆԴ ԳՅՈՒՂ)

Այս վարիացիան խիտ բերքատու է, դիմանում է չիլանդուխտունների ու վնասատուների: Պտուղները խոշոր են, բարձրորակ, պիտանի են կոնսերվա արտադրելու և թարմ վիճակում դործածելու համար:

Շրջանում հայտարարված է միայն մի ծառ: Մեր կողմից այն հանձնարարվում է լայն տարածման համար:

Ծառը միջակ մեծուքյուն, խոացած ու փուլած սաղարթ ունի:

Տերևները սրտաձև են՝ սրածայր դադարով: Տերևի եզրերը խոշոր-ատտանայիոր են: Տերևը մուգ-կանաչ դույնի է, ունի հետևյալ մակերեսը, 96 մմ×95 մմ: Կոթունը երկար է— մոտ 47 մմ:

Պտուղները հատուկանում են միջին ժամկետներում— հուլիսի 10-ից մինչև 25-ը, բալական խոշոր են, սրածայր-ձվաձև, երկարավուն դադարով: Որովայնակարը (ակոսիկը) միջին խորություն ունի:

Մաշկը հաստ է, ունի միջին թափուտություն, սպողից դժվարությամբ է անջատվում: Պտուղն ունի հարգա-դեղին դույն, սպիտակորու թեթև կարմրություն, որ բռնում է սպողի մինչև կես մասը:

Պտղամիսը դեղին է, բալական հյութալի, միջին սնդուկությամբ, հաճելի համով, բայց քիչ ալյուրահամ է տարիս: Բուր-մունքն ուժեղ է:

Կորիզն ունի երկարավուն ձև, խորուրբոր մակերես, սրտաձևին կպած չէ, ամբողջովին լցնում է սպողի ներքը, փոքր է, կշռում է միջին չափով 1,6 գր. և կտրվում է սպողի ամբողջ քաշի 4%-ը:

Միջուկը քաղցր է, կշռում է միջին չափով 0,7 գրամ, որ կազմում է կորիզի ամբողջ քաշի 44%-ը:

ԽՈՅԻ ԾԻՐԱՆ (ՍՊԻՏԱԿ)

Այս սորաը լավ բերք է տալիս, դիմացկուն է սնկային հիվանդությունների ու վնասատուների նկատմամբ: Քիչ է տարածված: Հանդիպում է Մեղրու շրջանում, գլխավորապես Կարճևան դյուղում: Ներմուծված է Պոլից (Իրան): Օղտադործվում է դիտավորապես չորացման համար:

Ծառն ունի միջին մեծուքյուն, կորացած սաղարթ:

Տերևները կլորափուն են, սրածայր և դեպի ներքև ծախած
դադաթով:

Տերևաթիթեղն ունի միջին հաստութուն, մաշկանման է,
կոկիկ:

Տերևներն ունեն մուգ-կանաչ դույն, բարակ-սուր-ասամհա-
ձև եղրեր, միջին մեծության, այն է՝ 81 մմ×76 մմ:

Տերևակոթը երկար է, — 33 մմ—45 մմ:

Պտուղները հասունանում են միջին ժամկեաներում— հուլիսի
10-ից մինչև 20-ը, մանր են, երբեմն միջին մեծության են ու-
նենում՝ միջին հաշվով— 36 մմ×35 մմ×33 մմ, կշռում են 22
դր. մինչև 31 դր., հաճախ 25 դրամ:

Պտուղները կլորափուն են, բայց հանդիպում են նաև ձվա-
ձև, ոչ սիմմետրիկ պտուղներ:

Պտղի դադաթը կլորափուն է, հարվադուս դեպքերում՝
սրածայր:

Չաղարը խորն է (8 մմ), լայն (10 մմ):

Պտղակոթն ամուր կպած է պողին, մի բան, որ առանձնա-
պես կարևոր է չոր միջոց տվող սորակերի համար, որովհետև
հնարավորություն է տալիս հենց ծառի վրա չորանալու:

Մաշին ունի միջին հաստութուն, միջին թափոտութուն,
պողամսից դժվարությամբ է անջատվում: Պտղի դույնը կա-
նաչափուն-դեղին է, ազնվամորու կարմրությամբ, որ բռնում է
պողի մակերեսի քառույգ մասը:

Պտղամիսը կանաչափուն-կրեմադույն է, քիչ հյութալի,
նրբահյուս թեղիկներով, ամուր, մտալի, խոթխոթան: Համը
միջակ է, քաղցրաթթու, մի քիչ ալյուրահամ է տալիս:

Կորիզը պողամսին կպած չէ, ձվաձև է, մի քիչ անհարթ
մակերեսով: Որովայնակարի վրա դուրս է բնկած միայն միջին
սուր կողը:

Թիկնակարը բաց է ամբողջ երկարությամբ:

Կորիզը բաց-դարչնադույն է, խոշոր, կշռում է 3 դր., որ
կազմում է պողի ամբողջ քաշի 14%-ը:

Միջուկը քաղցր է, կազմում է ամբողջ կորիզի քաշի 23%-ը:

ԹԱԲԱՐՁԱ

Նկատի ունենալով, որ թաքարզան միաժամանակ լավ չոր
միջոց տվող սորս է, նրա մանրամասն նկարագրությունը սրվում
է չոր-միջային սորակերի ճեթաթամբում:

Այս փոփոխակն աչքի է ընկնում բարձր բերքատուությամբ, համեմատաբար դիմացկուն է պտուղների ու տերևների ծախուկեն բծավորության նկատմամբ: Պտուղների մեծությամբ ու ձևով հիշեցնում է չալախ սորաը, թեև սրակով դիջում է նրան: Մեր կողմից խորհուրդ է տրվում այն բազմացնել թե արդյունաբերական ուսյուններում և թե տեղական սրտաման համար:

Ս Ե Ղ Ա Ն Ի Ս Ո Ր Տ Ե Ր

Այս ենթախմբի մեջ բախական մեծ քանակությամբ սորանք են մտնում: Բայց այդ սորանքը սահմանափակ չափով են տարածված և կենտրոնացված են գլխավորապես Երևանի քաղաքամերձ՝ Բերիայի ուսյունում:

Մի քանի սորանք, որոնք մեծ չափով դիմանում են ստանամանիքներին, ուսյունացման են ենթարկվել՝ Հայկ. ՍՍՌ լեռնային ուսյուններում տարածելու համար:

Ստորև բերում ենք այս ենթախմբի մեջ մտնող առանձին սորանքի նկարագրությունը:

ՆԱԵԻՋԵՎԱՆԻ ՍՊԵՏԱԿ

Այս սորաը համեմատաբար քիչ է տարածված: Ինչպես ցույց է տալիս անունը, ներմուծված է Նախիջևանի ԱՍՍՌ-ից: Պտուղները գործածվում են բազառապես թարմ միճակում և, ինչպես նավթաստները, իրենց համով առանձնապես աչքի չեն քնկնում և սուշադրության արժանի են միայն նրա համար, որ համեմատաբար մաղ են հասունանում: Այս սորաը չի մտել ստանդարտ սորախմբերի մեջ և հետագա տարածման առանձին հետանկարներ չունի:

Պտուղները հասունանում են հուլիսի 8-ից մինչև 29-ը (ուրիշ, ափսոսաբար բարձրորակ սորանքի հասունացման ժամանակաշրջանում): Նրանք մանր են կամ ունեն միջին մեծություն, այն է՝ միջին հաշվով— 42 մմ×40 մմ×38 մմ, կշռում են միջին հաշվով մոտ 35 գր.:

Պտուղները կտրափուն-ձվաձև են, տափակ ու սեղմ գաղաթով:

Մաղաքը ունի միջին խորություն (5 մմ) և յայնություն (6-5 մմ):

Ակուսիկը հասնում է մինչև գաղաթը, սրտակոթի մոտ խորանում է:

Պողի դուչը սպիտակափուն-դեղին է, արևի կողմում ազ-
նրվամորու կաղմբուժյամբ:

Մաշին ունի միջին հաստություն, ամուր է, մի քիչ թա-
փոս, պողամսից չի անջատվում:

Պողամխը սպիտակ է, քիչ կպած է կորիզին, հյութալի է:
Հյութն անդույն է:

Պողամսի կաղմվածքը քիչ թեղավոր է, ունի միջակ պնդու-
թյուն:

Համը քաղցրաթխու է, մի քիչ ալյուրահամ է զդաջվում:
Բուրմունքը թույլ է:

Կորիզն ունի միջին մեծություն կամ լինում է խոշոր, ձվա-
ձև, զաղաթի մոտ նեղանալով: Մակերեսը մի փոքր խորտու-
րբա է:

Թիկնակարը բաց է միայն զաղաթի և հիմքի մոտ: Որովայ-
նակարի վրա բոլոր կողերը դուրս են բնկած, բայց սուր է մի-
այն միջին կողը:

Կորիզը մուգ-դարչնապույն է:

Միջուկը քաղցր է, ամբողջովին լցնում է կորիզի ներսը,
կաղմում է ամբողջ կորիզի ծանրության 42%-ը:

ՕՐՅՈՒՅԱՐԻ

Այս սորոք, ինչպես և արութալիբին, ներմուծված է Օր-
դուրադի շրջանից: Ավելի քիչ է տարածված, քան արութալիբի
սորոք: Պատահում է բացասապես Երևան քաղաքի ալբիներում:
Ըստ երևույթին դա արութալիբի սորոքի մի վարիացիան է,
որովհետև շատ նման է նրան և մի փոքր տարբերվում է պտուղ-
ների ու կորիզների մորֆոլոգիական հատկանիշներով:

Օրդուրադի սորոքի պտուղները, որպես տարբերություն ա-
րութալիբու, հասունանում են միջին ժամկետներում (հուլիսի
20-ից մինչև 30-ը), ունեն միջին մեծություն կամ մանր են:

Նրա պտուղները, ինչպես և արութալիբու պտուղները,
ձվաձև են, կողքերից տափակած: Պողի զաղաթը մի քիչ սուր է:
Պողի դուչը սակե-դեղին է, զաղաթի մոտ կանաչափուն էրան-
դափորումով և ազնվամորու կաղմբուժյամբ:

Մաշկը բարակ է, թույլ, միջին թափոտությամբ, պողա-
մսից չի անջատվում:

Պողամխը սակեպույն է, կորիզին կպած չէ, հյութալի է:
Հյութն անդույն է:

Պողամսի կաղմվածքը քիչ թեղավոր է, միջակ պնդություն
ունի և այդ կերպ տարբերվում է արութալիբուց:

Համը քաղցրաթխու է, հաճելի, անուշաբույր :
Կորեղն աբութալիբու կորեղն տարբերվում է բոլորովին
ծածկված թիկնակարով :

ԽԻԱՐԿԵՆԻ

Այս սորաը շատ քիչ է տարածված, հանդիպում է Երևան
քաղաքի աջլինեկում : Բացառապես սեղանի սորա է, դարձաբան
հեռանկարները հունի :

Ծառն ունի միջին մեծութուն, վուխած սաղարթ՝ 9,5 մետր
տրամադծով : Կեղևը դարձնապուշն է, ճյուղերը բարակ են, ու-
նեն միջին երկարութուն :

Տերևները կլորավուն են, երկարավուն և դեպի ներքև թեք-
ված դադաթույլ :

Տերևաթիթեղն ունի միջին մեծութուն՝ ու բարձր է
(0,16 մմ) : 1

Տերևի դույնը դեղնավուն-կանաչ է, դվտավոր ջիղը դունա-
ղորված է հիմքի մոտ, տերևի միայն վերին կողմից : Կոթունի
միացման տեղը համարյա ուղիղ է :

Պտուղները հասունանում են միջին ժամկետներում— հունիսի
10-ից մինչև 30-ը : Նբանք լայն-ձվածև են, կողքերից տափա-
կած : Հիմքի մոտ ունեն փոքրիկ վիզիկ : Պաղի դադաթի տափակ
է : Զազարը խորը չէ (3 մմ), լայն (5 մմ), ծայրերը ծարձրված
են :

Պտուղը նարնջապուշն է, արևի կողմում ազնվամորու կար-
մըրությամբ :

Մաշկը հաստ է, մե քիչ թավտա : Պողամխը ոսկեպուշն է,
կորեղն ո՛վ բոլորովին անբուս, չոր է :

Պողամսի կազմվածքը մե քիչ թեխավոր է, ունի միջին ոլրն-
դութուն :

Պողի համը հաճելի է, քաղցրաթխու, թույլ բուրմունքով :
Կորեղն տափակ է, սպունդանման մակերեսով : Որովայնա-
կարի վրա միջին կողը խիստ դուրս է ընկած, խի կողքի կո-
ղերը դուրս են ընկած միայն դադաթի մոտ : Կարի բոլոր կողերը
սուր են :

Թիկնակարը բաց է միայն դադաթի մոտ, կարի մնացած
մասը ծածկված է սակավաթիվ ծակոտիներով : Կորեղն մուգ-
դարձնապուշն է, խոշոր :

Միջուկը քաղցր է, բավական նախա կարծում է կորեղն քա-
չի միայն 13%-ը :

Աշտարակի շրջանում Խխարկենի անունով հայտնի է մի ուրիշ սորա: Նրա պտուղները կլորածն են, կողքերից տափակ: Պտղի դույնը կանաչավուն-դեղին է, առանց կարմրության: Պտղամիսը կանաչավուն-դեղին է, կուրիզից ո՛չ բոլորովին ազատ, հյութալի է, անհամ: Ծավալով ավելի փոքր է Երևանի սորաից:

Պարիզը ձվածն է, ունի միջին մեծություն և կազմում է պտղի քաշի 5%-ը:

Միջուկը դասն է:

ՀԱՄԲԱՆ ԳԱՌՆ ՄԻՋՈՒԿՈՎ (ԵՐԵՎԱՆ, ԳԵՏԱՐ)

Այս փոփոխակը պատկանում է խորջինների խմբին: Աճման թափով, սաղարթի ձևով և պտուղների արտաքին տեսքով շատ նման է համբան սորաին, և այս պատճառով մենք այն անվանել ենք համբան՝ դասն միջուկով: Ծառը խիտ բերքատու է, կանոնավոր պտղաբերող, բավական լավ է տանում ձմեռային սառնամանիքները և զարնանային ցրտերը: Պտուղները համեմատաբար քիչ են մնասվում ծակտակեն բժարվորությունից, զիմանում են փոխադրման: Մեր կողմից այն հանձնարարվում է Հայկական ՍՍՌ-ի բարձրագույն լեռնային շրջաններում մշակելու համար:

Ծառը խիտ մեծ է, ղնդածն ու կարծես հասած սաղարթով: Ճյուղերն ունեն միջին հաստություն, ճկուն են, դարչնադույն:

Տերևներն ունեն միջին մեծություն (76 մմ×78 մմ), կլորափուն են, դեպի ներքև ծոված դադաթով: Տերևաթիթեղն ունի միջին հաստություն, կռկիկ է: Տերևի երկու կեսերը զտնվում են զլխավոր ջղի հետ միևնույն մակարդակի վրա: Տերևի եղբերը խոշոր-կլոր-ադամնածն են: Կոթունն ունի միջին երկարություն (32 մմ):

Պտուղները հասունանում են միջին ժամկետներում— հունիսի 15-ից մինչև 25-ը, ունեն միջին մեծություն, այն է՝ միջին հաշվով— 41 մմ×41 մմ×39 մմ, ու կշռում են 30 գր. մինչև 50 գր. հաճախ են հանդիպում 40 գրամանոց պտուղներ:

Պտուղները կլորավուն են, կլոր դադաթով: Պտղի դույնը հարդա-դեղին է, արևով սառնածնապես լավ լուսավորված պտուղները մի քիչ կարմրություն են ունենում:

Մաշկը պինդ է, մի քիչ թավոտ, պտղամսից չի անջատվում:

Պտղամիսը դեղնավուն-սպիտակ է, կուրիզին կպած չէ, ունի միջին հյութալիություն: Հյութն անզույն է: Պտղամսի կազմը վաճճն ամուր է, մուս, խիտ թեղաշատ:

Համը միջակ է, քաղցր, համարյա առանց բուրմունքի:
Կարիզը կլորածև է, կողքերից խխոր տախակամ: Համեմա-
տաբար մանր է, դարչնադույն:

Միջուկը դառն է, լիքը, կազմում է ամբողջ կարկդի քաշի
32%-ը:

ՉՈՐ ՄԻՐԳ ՏՎՈՂ ՍՈՐՏԵՐԸ

Ինչպես արդեն ստիված է, հասունացման միջին ժամկետի
սորտերի մեծ մասը չոր մերդ տախ սորտեր են հանդիսանում:
Դրանց պտուղները մեծ քանակությամբ չոր նյութեր և չաքար
են պարունակում, աչնպես որ, չորացնելու դեպքում մեծ կլանե-
ք են տալիս: Այս սորտերի մեծ մասը տարածված է դլխալորապետ
Երևանի քաղաքամերձ՝ Կերիայի սահմանում: Այս ենթախմբի մեջ
մտնում են հետևյալ սորտերը. սարի-թարաբղա, թարաբղա,
դյոզլանարազ, սարի-բաղամ, դյոզ-բաղամ, դալախ, թղի, № №
21, 25, 27 և 14 ծիրաններ, որոնց նկարագրությունը տալիս
ենք ստորև:

ԳՅՈՂՉԱՆԱՐԱԳ

Այս սորտը համեմատաբար քիչ է տարածված: Հանդիպում
է դլխալորապետ Երևան քաղաքի աջիկներում: Նրա հատ ու
կենտ ծառերը լինում են նաև Հոկտեմբերյան և Ղամարլուխ
չրջանների աջիկներում:

Սառնամանիքներին դիմանալու նկատմամբ տեղական սորտե-
րի մեջ առաջնակարգ տեղ է բռնում: Սաստիկ մնատվում է ծա-
կոտկեն բծավորությունից: Ծառերը բարձր բերք են տալիս,
բայց որովհետև պտուղները շատ մանր են, մի ծառի բերքը
70—80 կիլոգր. ավելի չի լինում:

Գյոզլանարազի պտուղները շատ քաղցր են, որ ցույց է տա-
լիս նրա անունը (դյոզլանարազ— կանաչ չաքար) և չորացնելու
դեպքում տալիս են բարձրորակ չոր մրդի մեծ կլանք (ВЫХОД):

Կոմպոտ արտադրելու համար այն քիչ է պիտանի, իսկ որ-
պես սեղանի միրգ, միջին տեղն է բռնում: Զարգացման մեծ հե-
ռանկարներ ունի չոր-մրդային ուղղություն ունեցող չրջաննե-
րում—Միկոյանում, Մեղրիում և այլուր: Այս սորտն ինքնա-
տուրի է: Նրա համար իբրև լավագույն փոշոտիչներ են ծառա-
յում արութայիբի և չալախ սորտերը:

Գյոզլանարազը մտցված է Հայկական ՍՍՌ-ի ստանդարտ
ասորտիմենտի մեջ:


Ծառն ունի միջին մեծություն, 6,3 մետր բարձրություն և

քնի 36 սմ տրամագիծ : Կեղևը դարչնագույն է, սաղարթը—խոտա-
ցած, դեղածև, 9 մետր տրամագծով : Միամյա չվերը մոխրա-
գույն-դարչնագույն են, միջճանդույցները— կարճ :

Գաղիկները մանր են, սպիտակ : Բաժակատերեխիկները կոնա-
ձև են, երբեմն կլորավուն, դեղձոտ, չթափուման : Ամբողջ բա-
ժակը կարմրավուն գույն ունի : Ջղերը կարմիր են, ներսի կող-
մից կանաչ, բայց լինում են նույն նարնջագույն ջղեր : Պսակա-
թերթիկները կլորավուն են :

Տերևները կլորավուն կամ լայն-ձվաձև են : Տերևի դադարձը
բուլթ է, կարճ, մի քիչ ձգված է դեպի ներքև :

Տերևաթիթեղը բախկան հաստ է (0,26 մմ), կոկիկ,
մուս : Վերին մակերեսը կապտավուն-կանաչ է : Տերևի եզրերը
երկհսկի-մանր-ատամնավոր են : Կոթունի միացման տեղը լինում
է կարճ կամ երկարավուն : Տերևաթիթեղի ծավալը կազմում է
70 մմ × 61,3 մմ : Կոթունը կարճ է— 33, մմ, գունավորված է
միայն վերևի կողմից :



Նկ. 9. Գյուղանարագ պտուղները

Պտուղները հասունանում են ուշից-միջին ժամկաններում
(հուլիսի 10-ից մինչև օգոստոսի 5-ը) : Մասնաբախկան հասունա-
ցումը տեղի է ունենում հուլիսի 20-ից մինչև 30-ը : Պտուղներն
ունեն միջին մեծություն, երբեմն մանր են, միջին հաշվով—

37 մմ×36 մմ×35,5 մմ · կշռում են 10 գր · մինչև 44 գր ·, միջին
հաշվով— 27 գրամ :

Պտուղները տափակ-կլորավուն ձև ու տափակ դադաթ ու-
նեն : Չափարը խորն է (6 մմ) և լայն (6,5 մմ) :

Պողակովի կանաչ է, թափոտ, թույլ է միացված պտղին :

Պտուղը կանաչավուն-նարնջագույն է, արևի կողմում աղնը-
վամբուս կարմրությամբ :

Մաշկը հաստ է կամ ունի միջին հաստություն, պինդ է,
չառ քիչ թափոտ, պտղամսից չի անջատվում :

Պտղամիսը նարնջագույն է, կորիզին կպած չէ, չոր է կամ
սակավ հյութալի, հյութն անգույն է :

Հյութավածքը քիչ թխավոր է, ամուր, կոճիկավոր, մսոտ :

Պտուղը խմբաբազմաբուս է, ուժեղ բուրմունքով : Գյուղջա-
նաբաղը շաքարի և չոր նյութերի պարունակությամբ ծիրանի
տեղական սորտերի մեջ առաջին տեղն է բռնում :

Կորիզն ունի միջին մեծություն կամ մանր է, միջին հաշ-
վով— 21,3 մմ×18,4 մմ×11,8 մմ · կշռում է 1 գր · մինչև 2,7
գր · և կազմում է պտղի քաշի 3%-ը :

Կորիզը կլորավուն է, փոթավոր հիմքով : Մակերեսը համա-
բյա կոկիկ է, հազվադեպ դեպքերում խորուրբա :

Թիկնակաբբ բաց է կորիզի ամբողջ երկարությամբ : Կորիզը
հաճախ ճաքճքում է կարի տեղում : Որոշայնակարի կողերը եր-
կատված են և դադաթի մոտ ծոված, որ բնորոշ է տվյալ սորտի
համար : Միջին կողը մյուս կողերից ավելի է դուրս ընկած,
սուր է :

Կորիզը մուգ-դարչնագույն է :

Միջուկը քաղցր է, կշռում է մինչև 0,65 գր · և կազմում է
կորիզի քաշի 44%-ը :

Տեղական սորտերից գյուղջանաբաղի պտուղներն ավելի հա-
րուստ են շաքարով և չոր նյութերով · դրանում կարելի է հա-
մողվել ստորև բերված աղյուսակից :

Աղյուսակ № 15

ԳՅՈԳՉԱՆԱԲԱԴ ՍՈՐՏԻ ՊՏՈՒՂՆԵՐԻ ԲԻՄԻԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ (‰ ‰)

| Չոր | Չոր նյութեր | Շաքարներ | Ռեզուկցիոն չաքարներ | Մախարդա | Փլուկոզ | Պողալանա | Թաղանթա- նյութ | Թթվություն | Մոխիր |
|--------|-------------|----------|------------------------|---------|---------|----------|-------------------|------------|-------|
| 73,05 | 20,16— | 12,10 | 5,48— | 6,74— | 3,86— | 0,90— | 0,5— | 0,12— | 0,85— |
| —79,84 | —26,95 | —19,09 | —6,85 | —12,93 | —5,86 | —1,78 | —1,16 | —0,5 | —1,01 |
| 74,49 | 25,51 | 18,72 | 6,11 | 11,92 | 4,89 | 1,28 | 1,07 | 0,93 | 0,98 |

Թարարդան շարխից հետո ամենատարածված սորան է: Ամենից շատ հանդիպում է Երևան քաղաքի այգիներում, Ղամարյուրի և Կոտայքի շրջաններում, ինչպես նաև ծիրանի բոլոր նորատունկ այգիներում, ուր այն տնկվում է որպես փոշոտիչ՝ շարխի համար:

Սառնամանիքներին դիմանալու նկատմամբ տեղական սորուների մեջ առաջնակարգը տեղ է բռնում: Այս սորուի հական թերությունն այն է, որ նա սաստիկ մնասվում է ծակոտիկն բծափորությունից: Երբքափորությունը միջակ է: Միջին հաշվով մեկ ծառից ստացվում է 80 կիլոգր. պտուղ, բարձր բերքի դեպքում— 120—150 կիլոգր.: Երևան քաղաքի հին այգիներում մենք հայտարերեք ենք մինչև 70 տարվա ծառեր, որոնք դեռ բերք են տալիս: Պտուղատված սորուերից միայն թարարդան է, որի նրկատմամբ առավել ուժեղ չափով է արտահայտվում պողարերության պարբերականությունը:

Նրա պտուղները բարձրորակ չոր մերդ են տալիս: Գրանք պիտանի են նաև կոնսերվա ու քաղցրավենիք արտադրելու համար: Այս ուղղությամբ թարարդան շարխից ու խոսրովչահուց հետո տեղական սորուերի մեջ երրորդ տեղն է բռնում, տալիս է առաջին տեսակի քաղցրավենիք: Գործ է ածվում նաև թարմ միջակում:

Այս սորան ինքնաստերիլ է: Նրա համար լայտույն փոշոտիչներ են հանդիսանում շարխը, խոսրովչահին և դեվոնդին: Պչն մտցված է ակապուրիկայի ստանդարտ ազդրախմենտի մեջ:

Գոյություն ունեն թարարդայի երկու վարիացիաներ— սպիտակ և կարմիր, որոնք տարբերվում են հետևյալ նշաններով. սպիտակ թարարդան ծաղիկ է սկսում 2 օրով ավելի ուշ, իսկ պտուղները հասունանում են մի քանի օրով ավելի վաղ, քան կարմիր թարարդայի պտուղները: Բացի դրանից, կարմիր թարարդայի պտուղներն ավելի ինտենսիվ կերպով են գունավորված, ևսկ տերևներն ավելի մուգ դույն ունեն, քան սպիտակ թարարդայի տերևները:

Ծառն ունի միջին մեծություն, 7—7,5 մետր բարձրություն և բնի 30—35 սմ արամաղիծ:


Կեղևը դորշադույն—դարչնադույն է:

Սաղարթը փոխած է, կորացած, 8,4—10,5 մետր տրամադծով: Շվերը ճիւղն են, բարակ, դարչնադույն, ծառին լայկան տեսք են տալիս, որով թարարդայի ծառերը խիստ տարբերվում են մյուս սորուերի ծառերից:

Ծաղիկներն ունեն միջին մեծություն, սպիտակ են: Բաժա-
կատերեխիները կոճածե են, պսակաթերթիկները հարթ-կլորա-
վուն, առջքաթերթը վարդապուշ են:

Տերևներն ունեն միջին մեծություն, տափակ-կլորավուն
կամ սրտածե են:

Տերևաթիթեղի երկու կեսերը դլսավոր ջղի երկարությամբ



Նկ. 10. Թարաղայի պտուղները

խիստ ծոված են դեպի վեր, համարյա երկու տակ ծալված, որ թառամած տեսք է տալիս ծառին. այդ նշանով հեշտ է ճանաչել սորաը: Նրանք սիմֆետրիկ չեն: Տերևի դադաթը մի անդամից նեղանում է, ձգված ու ծոված է դեպի ներքև: Տերևաթիթեղը բարակ է (0,17 մմ), մաշկանման, փայլուն, մի փոքր ալեձև: Վերին մակերեսը մուգ-կանաչ է: Ջրերը դունավորված են թե վերևի և թե ներքևի կողմից: Ներքևի կողմից տերևը ջրերի անկյուններում թափում է և ակոսիկներ ունի:

Տերևաթիթեղի ու կոթի միացման տեղը երկարավուն է: Տերևաթիթեղի ծավալը հետևյալն է. 76,6 մմ×64,8 մմ: Կոթի երկարությունը 34 մմ է:

Պտուղները հասունանում են միջին ժամկետներում— հուլիսի 5-ից մինչև 30-ը: Մասնայական հասունացումը տեղի է ունենում հուլիսի 10-ից մինչև 20-ը: Պտուղները միջին մեծություն ունեն կամ մանր են, կշռում են 15 գրամից մինչև 37,5 գրամ, միջին հաշիվով 24 գրամ:

Պտուղները կլորավուն են, կողքերից տափակած: Պտղի դադաթը սեղմ է, տափակ: Չաղարն ունի միջին խորություն, կանոնավոր ձև: Սկոսիկը հասնում է մինչև դադաթը, որոշ պտուղների վրա նաև ավելի հեռու է դնում, պտղակոթի մաս հաղիվ նկատելիորեն խորանում է:

Պտուղը նարնջագույն-կանաչավուն է, ունի մուգ կարմրություն:

Մաշկն ունի միջին հալոսություն, ամուր է, համարյա առանց թափոսություն, փայլուն, պտղամսից դժվարությամբ է անջատվում: Պտղամիսը նարնջագույն է, կորիզից ազատ, միջակ հյութալիություն կամ չոր: Հյութն անուշահամ է: Պտղամսի կազմվածքը թելաչառ է, միջակ պնդություն, խոթխոթան: Մեղուրեկան քաղցր է, յուրահատուկ համով, խիստ ալյուրահամ է տարես, անուշաբույր է:

Թաքարդալի պտուղներն աչքի են ընկնում նրանով, որ շատ քաղցրություն և քիչ թթվություն են ունենում:

Կորիզը համեմատաբար խոշոր է, կլորավուն, սրածայր դադաթով: Նրա ծավալն է՝ միջին հաշիվով — 21,9 մմ×18 մմ×13,2 մմ. կշռում է 1 գր. մինչև 3 գր., միջին հաշիվով 1,6 գր., ա. կազմում է պտղի քաշի համարյա 7%—ը:

Կորիզի մակերեսը մի փոքր խորտուբորտ է, որոշ կորիզների մակերևույթը— ծակծկված: Որովայնակարի վրա դուրս են ընկած բուրբ կողերը, իսկ միջին կողը մյուսներից ավելի շատ է դուրս ընկած, սուր է: Թիկնակարը բացված է հիմքի մոտ,

բայց պատահում են կորիզներ, որոնց կարը բացված է դադաթի կամ հիմքի մոտ: Կորիզը մուգ-դարչնադույն է: Միջուկը քաղցր է, կշռում է 0,2 գրամից մինչև 0,7 գր. ու կազմում է ամբողջ կորիզի քաշի 33%-ը:

Թաքարդայի պտուղներն աչքի են ընկնում չաքարի և չոր նյութերի բարձր պարունակութեամբ:

Աղյուսակ № 16

ԹԱՔԱՐՉԱ ՍՈՐՏԻ ՊՏՈՒՂՆԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԲԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ (% 0/0)

| Ջուր | Չոր նյութեր | Շաքարներ | Ռեզուկցիվոզ չաքարներ | Սախարոզա | Գլյուկոզա | Պտղաչաքար | Թաղանթա- նյութ | Թթվություն | Սոխեր |
|------------------|------------------|------------------|-------------------------|---------------|----------------|----------------|-------------------|---------------|---------------|
| 73,31— —79,52 | 20,41— —26,69 | 11,84— —15,94 | 3,73— —6,28 | 6,84 —9,83 | 3,76— —5,68 | 0,60— —1,27 | 0,75— —1,29 | 0,11— 0,57 | 0,56— 1,05 |
| 76,1 | 22,27 | 13,77 | 4,99 | 8,33 | 4,78 | 0,87 | 0,9 | 0,28 | 0,67 |

ՍԱՐԻ ԹԱՔԱՐՉԱ

Այս սորաը քիչ է տարածված: Հանդիպում է միայն Երևանի այգիներում: Բերքատու է, ծաղկոտկեն բծափորությունից միջին չափով է մնասվում: Չորացնելու համար հիանալի է, սկտանի է նաև թարմ միճակում դործածելու և կամպոսներ պատրաստելու համար: Մեր կողմից այն հանձնարարվում է ծիրանի արդյունաբերական մշակութեան ոռոգումներում, մասնավորապես չոր-մրգային ուղղութեան ոռոգումներում տարածելու համար:

Ծառը խիստ մեծ է, միջին հաշվով 8,5 մետր բարձրությամբ և բնի 41 սմ արամագծով: Կեղևը դորջ դույն ունի: Սաղարթը դնդաձև է, մի փոքր կորացած: Շվերը կանաչավուն-դարչնադույն են:

Տերևը կլորավուն է, երկար, դեպի ներքև դարձած և որուն դադաթով: Տերևաթիթեղը շատ բարակ է (0,14 մմ), խորտուրտրա մակերևույթով: Տերևաթիթեղի երկու կեսերը սիմետրիկ չեն, տերևի եզրերը խոշոր-երկակի-ատամնաձև են: Տերևը մուգ-կանաչ դույն ունի:

Պտուղները հասունանում են միջին ժամկետներում— հուլիսի 10-ից մինչև 25-ը, ունեն միջին կամ քիչ ապիլի մեծություն, այն է՝ միջին հաշվով— 47 մմ×35 մմ×40 մմ, կշռում են 37,5 գր. մինչև 57,5 գր., միջին հաշվով 43 գր.:

Պտուղներն օվարածե են, կողքերից տախակած և հիմքի մոտ՝ շեղ: Պտղի դադաթը համարյա տախակ է, ձապարը լայն (6 մմ), միջին խորությամբ (4,5 մմ): Պազակոթը կանաչ է, թափոս, ամուր կլարած է պողին, որ առանձնապես արժեքավոր է չոր-մրգային սորտերի համար: Պտղի դույնը հարգա-դեղին է, դադաթի մոտ-կանաչ, ակնվամորու թույլ կարմրությամբ, որ բնույթ է պողի մոտ 1/3 մասը: Մաշկը հաստ է, շատ քիչ թափոս, պտղամուկը չի անջատվում:

Պտղամիսը կրեմազույն է, կորիզից ազատ, ունի միջակ հյութալիություն, մի քանի պտուղների միսը հյութալի է լինում:

Պտղամսի կաղմվածքը մի փոքր լիքլալոր է, ունի միջակ ամրություն, բավական մասլի է: Քաղցրահամ է, թույլ բուրմունքով: Թարաքղա խմբի սորտերից սարի-թարաքղայի պտուղներն ամենաքիչ քանակությամբ չոր նյութեր, շաքարներ և թաղանթանյութ են պարունակում և ընդհակառակը, ամենից շատ հարուստ են օրգանական թթուներով:

Կորիզը երկարավուն է, հիմքի մոտ ունի վրիկ: Մակերեսը մի քիչ խորտուրբոտ է:

Որովայնակարի բոլոր կողերը դուրս են ընկած: Միջին կողը սուր է դադաթի մոտ: Թիկնակարը բացված է դադաթի և հիմքի մոտ:

Կորիզն ունի հետևյալ միջին չափը. 30,9 մմ×20,5 մմ×11,4 մմ, կշռում է 2 գր. մինչև 3 գր., և կազմում է ամբողջ պողի քաշի 5,6%-ը: Թարմ կորիզը բաց-դարչնազույն է:

Միջուկը քաղցր է, կշռում է 0,5 գրամից մինչև 1,5 գր., կազմում է ամբողջ կորիզի քաշի 45%-ը:

Սարի-թարաքղան պատկանում է այն սորտերի խմբին, որոնք մեծ քանակությամբ շաքարներ և չոր նյութեր են պարունակում (տես աղ. № 17):

Աղյուսակ № 17

ԵՄՍԻ - ԹԱՐԱՔՂԱՅԻ ՍՈՐՏԻ ՊՏՈՒՂՆԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԲԱՆԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ (0/0 0/0)

| | Ջուր | Չոր նյութեր | Շաքարներ | Սախարոզ | Պրոպիլոզ | Պտուղի մոտեմբ | Ֆեկուլոզ | Մոտեմբ | Քաղցրահամ նյութ | Թեթիվ նյութ | Մոտեմբ |
|---------|--------|-------------|----------|---------|----------|---------------|----------|--------|-----------------|-------------|--------|
| Տառանդ. | 77,73— | 19,55— | 12,88— | 8,96— | 2,50— | 0,64— | 3,14— | 0,28— | 0,56— | 0,83— | |
| | —80,45 | —22,27 | —14,88 | —1048 | —3,04 | —0,76 | —3,80 | —0,54 | —0,80 | —0,94 | |
| միջին | 79,09 | 20,91 | 13,70 | 9,72 | 2,77 | 0,70 | 3,47 | 0,41 | 0,68 | 0,89 | |

Այս սորաը քիչ է տարածված, հանդիպում է Երևանի ալյուրներում, գլխավորապես նախկին մեծառնոտես աղբրեջանցիների ալյուրներում: Ծառը խիստ բերքատու է, հիվանդություններին ու վնասատուներին դիմանալու նկատմամբ միջին տեղն է բռնում, առանձնապես շատ է վնասվում լիխն (ТЛН) վնասատուից: Նրա պտուղները պիտանի են չորացնելու և թարմ վիճակում գործածելու համար (պտուղները հաճախ թառամում (չորանում) են, հենց ծառի վրա): Ունի հեռանկարներ՝ չոր-մրդալին ուղղության ուայոններում զարգանալու համար:

Ծառը միջակ մեծության է կամ ավելի փոքր, ունի զնդաձև սաղարթ: Բազմամյա ճյուղերի կեղևը կարմրավուն-դարչնագույն է: Ծվերը դարչնագույն են, ձկուն, միջին երկարությամբ:

Ծաղիկները միջին մեծություն ունեն, սպիտակ են: Բաժակատերեխիները կլորավուն են, մի քիչ թավոտ: Ամբողջ բաժակը գունավորված է, ջղերը կարմիր են, պտակաթերթիկները կլորավուն ձև ունեն:

Տերևները կլորավուն են: Տերևի երկու կեսերը սխմետրիկ են, գլխավոր ջղի երկարությամբ սաստիկ թեքված են դեպի վերև:

Տերևաթիթեղն ունի միջին հաստություն, մաշկանման է, մակերեսը մի փոքր ալիճև: Վերին մակերեսը դեղնավուն-կանաչ է, փայլուն: Գլխավոր ջղը գունավորված է հիմքի մոտ, կողքի ջղերն ավելի քիչ են գունավորված: Ստորին մակերեսը փայլատ է, ջղերը գունավորված չեն:

Տերևները միջին մեծությանից ավելի խոշոր են, — 84 մմ × 75 մմ:

Տերևակոթը երկար է— 41 մմ:

Պտուղները հասունանում են միջին ժամկետներում — հուլիսի 10-ից մինչև 30-ը, ունեն միջին մեծություն կամ մանր են, 44 մմ × 39 մմ × 35 մմ, ու կշռում են միջին հազվով 34 գր., խոշորները կշռում են մինչև 52 գր., լակ մանրերը— 19 գր.:

Պտուղն օվալաձև է, ունի փոքրիկ, ծալքավոր վզիկ և կողքերից տախակված է: Պտղի դաղաթը սեղմ է: Զտալարը խորն է, փոթավոր: Պտղակոթը մի քիչ թավոտ է, կարմրավուն, բավական պինդ է կտած պտղին:

Պտղի գույնը կանաչավուն-դեղին է, արևի կողմում մուգ կարմրությամբ:

Մաշկը բարակ է, ունի միջին թավոտություն, պտղամսից չի անջատվում:

Պողոմխը կանաչալուծն-ոսկեղուցն է, կորիզից համարյա ազատ, քիչ հյութալի: Կաղմվածքը մի քիչ թեւալոր է, մսոտ, փխրուն:

Պողոմխը քաղցրահամ է, առանց բուրմունքի, ալյուրի համ դրեթե չի գլխացվում:

Կարիզը երկարավուն է, փոքրիկ ու փոթոտ վզիկով: Մակերեսը խորտուրտ է: Համեմատաբար մանր է, — 25,8 մմ \times 16,8 մմ \times 10,6 մմ, կշռում է 1 գր. և կաղմում է պողի քաշի 3%-ը: Որովայնակարի վրա խիստ դուրս է ընկած միջին, սուր կողը, որը դաղաթի մոտ մի քիչ լայնանում է: Կողքի կողերը մի փոքր դուրս են ընկած դաղաթի մոտ, իսկ հիմքի մոտ փորակներ են կաղմում:

Թիկնակարը բաց է միայն հիմքի մոտ: Կորիզը բաց-դարչնագույն է, համարյա դեղին:

Միջուկը քաղցր է, ւեքը, կշռում է 0,6 դրամ և կաղմում է ամբողջ կորիզի ծանրության 60%-ը:

ՍԱՐԻ ԲԱԳՍՄ

Այս սորոը համեմատաբար քիչ է տարածված, հանդիպում է զլխափորապես երևանի քաղաքամերձ՝ Բերխայի ոռայնում: Խիստ բերքատու է, պողաբերում է զլխափորապես միամյա շվերի վրա, ըստ որում պտուղներն այնքան խիտ են դասափորված լինում, որ սղկույղներ են հիշեցնում: Պտուղները պիտանի են չորացնելու, կոմպոսներ (2-րդ տեսակի) պատրաստելու և թարմ վիճակում դործածելու համար: Այս սորան ինքնատերել է, նրա յավագույն փոշոտիչներն են խոսրովահին և շալախը:

Այդեպաղաբուծական կայանի կողմից հանձնարարված է չոր-մրդային ուղղության ոռայններում, ինչպես նաև կոնսերվի արդյունարբության դատում արտադրության մեջ ներդրելու համար:

Ծառը միջին մեծություն ունի, մինչև 8 մետր բարձրություն և բնի 42 սմ տրամագիծ:

Կեղևը դուրչալուծն-դարչնագույն է:

Սաղարթը կորացած է, փոված:

Ծվերը ճկուն են, երկար, համեմատաբար բարակ, դարչնագույն:

Ծաղիկներն ունեն միջին մեծություն, սպիտակ են կամ բաց-վարդագույն: Բաժակաատերիկները կոնաձև են, դեղձոտ:

Պսակաթերթիկներն սպիտակ են, որոշ ծաղիկներինը — բաց-վարդագույն, կլորավուն ձևի:

Տերևները խոշոր են, ձվաձև : Տերևի դադաթը երկարափուն է և ծոված է դեպի ներքև : Տերևի հիմքը համարյա ուղիղ է : Տերևաթիթեղը հաստ է (0,4 մմ) : Վերին մակերեսը վառ-կանաչ է, փայլուն : Զղերը դունավորված չեն :

Տերևի եզրերը կլորավուն-մանր-ստամոնավոր են : Տերևի չափը— 80 մմ×73 մմ :

Տերևակոթն ունի միջին երկարություն— 37 մմ, վերին կողմից մի քիչ դունավորված է :

Պտուղները հասունանում են միջին ժամկետներում— հուլիսի 20-ից մինչև 30-ը : Ունեն միջին մեծություն, այն է՝ 50 մմ×42 մմ×39 մմ, կշռում են 30—45 դրամ : Օվալաձև են, կողքերից տափակած և կարճ, ծալքավոր վղիկով : Պտուղը դադաթի մոտ յայնանում է :

Զաղարն անկանոն ձև ունի, խորն է (5,5 մմ—9 մմ), բա-
վական լայն (5 մմ—6 մմ), փոթոտ : Ակոսիկը հիմքի մոտ դա-
լիորեն խորանում է : Պաղակոթը շատ քիչ թափառություն ունի,
կանաչ է :

Պողի գույնը կանաչավուն-դեղին է, աղնվամորու անընդմեջ
կարմրությամբ :

Մաշկը բարակ է, քնքույշ, մի քիչ թափոտ :

Պողամիսը սպիտակ-նարնջագույն է, կանաչ երանդավորումով,
կորիզից ազատ է, ունի միջակ հյուսվածքություն : Որոշ պտուղ-
ների պողամիսը պինդ է :

Հյուսվածքը քիչ թելավոր է, ունի միջին ամրություն,
մոտ է, բայց հանդիսում են նաև փխրուն միջ ունեցող պտուղ-
ներ :

Համը քաղցր է, աչյուրահամ դեթե չի զգացվում, ունի
թույլ բուրմունք :

Կորիզը երկարավուն է, դադաթի մոտ լայն, հիմքի մաս
փոքրիկ վղիկով : Կորիզը խոշոր է՝ 25,4 մմ—30 մմ×17 մմ—20,8
մմ×11,9 մմ—12,3 մմ. կշռում է 1,8 դր. մինչև 2,3 դր. և
կազմում է պողի քաշի 6%-ը :

Որովայնակարի վրա միջին կողը խիտ դուրս է ընկած, խիչ
կողքի կողերը դուրս են ընկած միայն դադաթի մոտ : Խոլաք
կողերն էլ սուր են : Թիկնակարը բացված է միայն հիմքի մոտ,
երբեմն էլ թե հիմքի և թե դադաթի մոտ : Կորիզը բաց-դարձ-
նադույն է :

Մեջուկը քաղցր է, մեք :

Սարի-բազամի պտուղները մեծ չափով չոր նյութեր են պա-

բունակում, իսկ շաքարի պարունակութեամբ հաշվական ծիրան-ների մեջ միջին տեղն են բռնում :

Աղյուսակ № 18

ՍԱՐԻ-ԲՄԴԱՄ ՍՈՐՏԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ (‰ ‰)

| | Չուր | Չուր նյութեր | Շաքարներ | Ֆեկուլոզիկոլ շաքարներ | Սախարոզ | Քրոմանթանյութ | Քլեյկուլյուսն | Սուխեր |
|--------|--------|--------------|----------|-----------------------|---------|---------------|---------------|--------|
| Տառան. | 83,41— | 24,28— | 12,54— | 5,58— | 7,35— | 1,0— | 1,0— | 1,07— |
| միջին | —77,85 | —16,59 | —10,92 | —4,77 | —5,07 | —0,43 | —0,29 | —0,64 |
| | 80,92 | 20,37 | 11,52 | 4,80 | 6,21 | 0,83 | 0,68 | 0,85 |

ՂԱՅՍԻ

Այս սորաը լայն տարածված է Աշտարակի շրջանում: Տեղա-կան բնակչութեան ասելով՝ ներմուծված է Իրանից: Նրա պտուղ-ները խոշոր են, բարձրորակ, արժանի են ուշադրութեան չոր-մրդալին ուղղութեան ուսյուններում տարածվելու համար:

Պտուղները հասունանում են միջին ժամկետներում— հուլի-սի 20-ից մինչև 30-ը, ունեն տափակ-կլորավուն ձև, խիտ տա-փակած են կողքերից: Պտղի դադաթմն էս տափակ է, մի քանի պտուղների դադաթը՝ կլորավուն: Չաղարը խորն է (6 մմ), բաց լայն է (5 մմ):

Ակոսիկը խորն է, անցնում է պտղի ստբողը երկարութեամբ, պտղակոթի մոտ ավելի շատ է խորանում:

Պտուղը նարնջագույն է. լայլ շուսաթիբով պտուղները նաև կարմրութեան ունեն:

Մաշկը բարակ է, քնքույշ, պտղամակց չի անջատվում, մի քիչ թավոտ է:

Պտղամիսը պինդ է, կորեղին կպած չէ, նարնջի գույն ունի:

Պտղի կազմվածքը քիչ թեխավոր է, փխրուն:

Պտուղն ունի հաճելի քաղցրաթթու համ, ուժեղ բուրբոնք:

Պտուղները մանր են՝ միջին հաշվով— 30 մմ×30 մմ×26 մմ, ու կշռում են 10 գր. մինչև 25 գր., միջին հաշվով 18 գր.:

Կարիզը տափակ է, խորտուրբտ մակերեսով: Որովայնակա-բի վրա միջին կողն ավելի շատ է գուրս ընկած, քան կողքի կո-ղերը. կարի բոլոր կողերը սուր են: Թիկնակաբը բացված է միայն հիմքի մոտ: Կորիզը բաց-դարչնագույն է՝ միջին հաշ-

վով— 19 մմ×15 մմ×11 մմ. կշռում է 0,4-ից մինչև 2,5 գրամ
և կազմում է պողի քաշի 5,5%-ը:

Միջուկը քաղցր է, լիքը, կազմում է կորկոկի ամբողջ քաշի
40%-ը:

ԹՋԻ (ՄԻԿՈՑԱՆԻ ՇՐՋԱՆ՝ ՄԻԿՈՑԱՆ ԳՅՈՒՂ)

Պատկանում է խարջու սորտերին, տեղի է Միկոյանի շրջանի
Ժիրանների համար: Նիստ բերքատու, կանոնավոր պտղաբերող
վարիացիա է: Հիվանդությունների նկատմամբ միջին դիմացկու-
նություն ունի: Պտուղները պիտանի են չորացնելու և թարմ վի-
ճակում դործածելու համար: Մեր կողմից հանձնարարվում է
շրջանում յայն տարածելու համար:

Պտուղները հասունանում են միջին ժամկետներում— հուլիսի
15-ից մինչև 25-ը, ունեն միջին մեծություն, երբեմն ավելի
ճանր են լինում, կշռում են միջին թվով 30 գրամ և ունեն հե-
տևյալ ծախարը. 36 մմ×39 մմ×40 մմ:

Պտուղները տափալի-կլորածև են, պտղակոթի մոտ վոթո-
տած, որոշ նմանություն ունեն թղենու պտուղների հետ և այս
պատճառով ստացել են «թղի ծիրան» անունը: Պողի դաղաթը
տափալ է: Ակոսիկը հաղիվ է նկատվում, հիմքի մոտ մի փչ
խորանում է:

Մաշկն ունի թույլ թափոտություն, միջին հաղտություն,
ամուր է, պտղամսից չի անջատվում:

Պտուղը կրեմադույն է, կանաչավուն երանգավորումով և
աղնվամորու կարմրությունով, որ բռնում է պողի մակերեսի
մինչև քառորդ մասը:

Պտղամիսը կանաչավուն-կրեմադույն է, քնքուլ-թելավոր,
միջին հյութալիությունով: Քաղցրաթթու է, ալյուրահամ է տա-
լիս և ունի թույլ բուրմունք:

Կարիքը կլորավուն է, վրիկով, մակերեսը խորտաբորտ է:
Թիկնակարը բացված է կորեղի ամբողջ երկարությամբ: Որո-
վայնակարի կողերը սուր են, միջին կողը՝ կողքի կողերից ավելի
շատ է դուրս ընկած:

Կորեղն ունի միջին մեծություն, պտղամսին կլած չէ, ամ-
բողջովին չի լցնում պտղամսի ներքը, միջին հաշվով կշռում է
1,4 գրամ, որ կազմում է պողի ամբողջ քաշի 4,7%-ը:

Կորեղը բաց-դարչնադույն է: Միջուկը քաղցր է: Հաճախ
կորեղի մեջ 2 սերմ է լինում:

ՈՒՇ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՀԱՍՈՒՆԱՅՈՂ ՍՈՐՏԵՐ

Այս խմբի մեջ մտնող սորտերը հասունանում են հուլիսի 20-ից մինչև օգոստոսի 10-ն ընկնող ժամանակաշրջանում :

Դրանց ասորտիմենտը բաժանված է, ինչպես և վաղահաս ծիրանների ասորտիմենտը : Ուշ ժամկետներում հասունացողների մեջ կան կոնսերվային, սեղանի և չոր միրգ տվող սորտեր :

ԿՈՆՍԵՐՎԱՅԻՆ ՍՈՐՏԵՐ

Ուշ ժամկետներում հասունացող կոնսերվային սորտերի մեջ չկան կոմպոտի բարձրորակ սորտեր : Միակ սորտը—արուժախիբին օգտագործվում է երկրորդ տեսակի կոմպոտներ պատրաստելու համար, իսկ համբան և դեվոնդի սորտերը — քաղցրավենիք պատրաստելու համար :

ԱՐՈՒԹԱԼԻՒԿ

Այս սորտը համեմատաբար քիչ է տարածված : Ըստ երևույթի նա Հայաստան է ներմուծվել Նախիջևանի ԱՍՍՌ-ի Օրդուբադի ուսյոնից և ամենից հաճախ հանդիպում է Բերիայի ուսյոնի այգիներում : Նրա ծառերը, ինչպես և Թարաբղա սորտի ծառերը, առավել դիմացկուն են սառնամանիքների նկատմամբ, նրանք բաժանված են միասվում ծաղկողներ բծավորությունից, լավ են պողպարելում, բայց պտուղները մանր լինելու պատճառով մնացած կուլտուրական սորտերի համեմատությամբ քիչ բերք են տալիս :

20—25 տարեկան ծառից՝ միջին հաշվով հավաքվում է 36 կիլոգրամ բերք, բարձր բերք լինելու դեպքում— 50 կիլոգրամ :

Արուժախիբին մեկին է այն տեղական լավագույն սորտերից, որոնք օգտագործվում են չորացման համար, տալիս է բարձր որակի արտադրանք — չոր միրգ : Պիտանի է նաև երկրորդ տեսակի կոմպոտ պատրաստելու համար : Որպես սեղանի միրգ, տեղական սորտերի մեջ միջին տեղն է բռնում : Այս սորտն ինքնատեր է : Նրա համար լավագույն փոշոտիչներ են հանդիսանում դեվոնդին և շալախը : Ինքն էլ ունիվերսալ փոշոտիչ է տեղական բոլոր սորտերի համար :

Մտցված է Հայկական ՍՍՌ-ի պաղատու կուլտուրաների ստանդարտ ասորտիմենտի մեջ :


Ծառը միջակ մեծություն ունի, նրա բարձրությունը հասնում է միայն 7,5 մետրի, բնի տրամագիծը մոտ 32 սմ է : Կե-

դէը դարչնադուլն է, մոխրադուլն երանդավորումով: Սաղարթը
դնդածն է, փռված, 9,7—9,8 մետր տրամագծով:

Ճյուղերը բաց-դարչնադուլն են, փայլատ, միջին մեծու-
թյան: միջհանդուլները բավական կարճ են:

Ծաղիկները խոշոր են, սպիտակ: Բաժակառերեխները կլո-
բալուն են: Պսակաթերթիկները նույնպես:

Տերևները լինում են կլորավուն կամ սրտածև: Տերևի դա-



Նկ. 11. Աբու-Յալիբու պտուղները

դաթը ներդրում է մի անդամից, կարճ է, սուր, մի քիչ երկարավուն և դեպի ներքև ծուխած: Տերևաթիթեղն ունի միջին հաստություն (0,2 մմ): Տերևի վերին մակերեսը մուգ-կանաչ դույն ունի, սիստուն է, կոկիկ: Գլխավոր ջիզը հիմքի մոտ դունավորված է: Զղերը ներքևի կողմից դունավորված են հիմքի մոտ, ջղերի երկարությամբ կա թավոտություն՝ մազմզուկի նման:

Տերևի եղբերը երկակի-խոշոր-սղոցած են: Տերևի միացման տեղը ծուխած է դեպի ներս | կամ ձգված է: Տերևի ծախարն է՝ 86 մմ—109 մմ×80 մմ—100 մմ: Կոթունը դունավորված է, երկար, — 40 մմ—50 մմ:

Պտուղները հասունանում են ուշ ժամկետներում — հուլիսի 10-ից մինչև օգոստոսի 5-ը: Պտուղների մասսայական հասունացումը տեղի է ունենում հուլիսի 20-ից մինչև 30-ը: Պտուղները մանր են՝ միջին հաշվով 39,3 մմ×34,7 մմ×33,1 մմ, ու կշռում են 14,5-ից մինչև 30 գր.: Պտուղները մեծ մասը կշռում է 23 գրամ:

Պտուղը ձվաձև է, սուր կատարով: Չաղարը տափակ է (3 մմ), բավական լայն (5 մմ), անկանոն ձևի: Ակոսիկը տափակ է, հասնում է մինչև կատարը:

Պաղի դույնը կանաչավուն-դեղին է, արևի կողմում սղոցած մորու կարմրությամբ: Մաշկը հաստ է, մի քիչ թավոտ, սլոտ-դամից չի անջատվում:

Պողամիսը ոսկեգույն է, կանաչավուն երանդավորումով (դազաթի մոտ), կորիզին կղած չէ, քիչ հյութալի է: Հյութն անցուցն է:

Պողամիսը հյութավածքը սլինդ է, խթխոթան, թեխալատ:

Պտուղները շատ քաղցրահամ են, խիստ անուշաբույր:

Արուժալիբու սպուղները մեծ քանակությամբ չոր նյութեր և շաքար են պարունակում և ունեն միջին թթվություն:

Կորիզը երկարավուն է, սուր դազաթով: Մակերեսը հարթ է: Որովայնակարի միջին կողը խիստ դուրս է ընկած, խի կողքի կողերը դուրս են ընկած միայն կատարի մոտ: Կողերի բոլոր դուրս ընկած մասերը սուր են: Թիկնակարը բաց է կորիզի ամբողջ երկարությամբ: Սա ընտրոջ է ավյալ սորտի համար:

Կորիզը բաց-դարչնագույն է: Միջուկը քաղցր է, լիքք, կըսում է 0,2—0,5 գրամ և կազմում է կորիզի ամբողջ քաշի 21%-ը:

ԱՐՈՒԹԱՒԻՔԻ ՍՈՐՏԻ ՊՏՈՒՂՆԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԲԱՂԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ (2/0 0/0)

| | Ջուր | Նյութեր | Նարմալներ | Ֆեզուկայի շաքարներ | Սախարոզա | Փլյուկոզա | Պտուղներ | Թաղանթա- նյութեր | Թթվաթյուն | Մոխիր |
|------------|-----------------|-----------------|-----------------|-----------------------|----------------|----------------|----------------|---------------------|---------------|---------------|
| Տա- ման | 67,0— —78,77 | 21—23 —39—81 | 10,32 —15,79 | 2,89 —5,95 | 7,05— —1107 | 2,79— —3,45 | 0,24— —1,14 | 0,56— —1,76 | 0,35 —0,88 | 0,54 —1,02 |
| մի- ջին | 71—22 | 26—57 | 13—34 | 3,56 | 5,94 | 3,11 | 0,52 | 1,39 | 0,48 | 0,79 |

Այդեպողարուծական կայանի քիմիական լաբորատորիայի ալկյաների համաձայն, արութալիբու պտուղներն առաջելազույն քանակութեամբ չոր նյութեր են պարունակում, ինչպես նաև հարուստ են շաքարներով:


ՀԱՄՐԱՆ

Այս սորտը լայն տարածված է, մանաթանգ Բերիայի ուայնի-այլիններում: Մեծ նշանակութուն ունի հեռավոր շրջաններին թարմ պտուղներ մատակարարելու համար, որովհետև զխմանում է փոխադրութեան: Նա բարձր բերք է տալիս: Ծակոտիկն բժա-վորութեան նկատմամբ նրա զխմացկունութունը մեծ է, իսկ սթոնամանիքների նկատմամբ — միջակ: Ինչպես և բոլոր տեղա-կան սորտերը, ինքնաստերի է: Նրա համար լավազույն փոշո-տիչներ են հանդիսանում շալախ, սարի-բաղամ, արութալիբի սորտերը: Պտուղները զխմանում են փոխադրմանը, պիտանի են թարմ վիճակում դորձածելու և քաղցրավիենիք պատրաստելու, ինչպես նաև չորացման համար: Այս սորտը զարգացման մեծ հեռանկարներ ունի, որովհետև շատ ուշ հասնող սորտ է, երկա-րացնում է ծիրանների վերամշակման սեզոնը: Մտցված է Հայկ-ՍՍՌ պտղատու կուլտուրաների ստանդարտ ասորախմենտի մեջ:

Ծառն ունի միջակ մեծութուն, 6,3 մետր բարձրութուն և բնի 32 սմ տրամագիծ: Կեղևը դարձնազույն-գորշ է: Ճյուղերը դարձնազույն են, միջին երկարութեան: Սաղարթը զնգած է, 8,6 մետր տրամագծով:

Տերևները կլորավուն են, մի անգամից նեղացող, կարճ և դեպի ներքև ծոված զազաթով: Տերևաթիթեղը մաշկանման է, մի քիչ ալեձև մակերեսով: Տերևաթիթեղի երկու կեսերը սի-

մետրիկ են, գլխախոր ջղի երկարությամբ ծոված են ներքև։
 Տերևի հիմքն ուղիղ է, հաճախ հանդիպում են նաև զնայի ներս
 ծոված հիմք ունեցող տերևներ։ Տերևի վերին մակերեսը դեղ-
 նալուծն-կանաչ է, փայլատ։ Ջղերի երկարությամբ կա թավո-
 սություն՝ մազմզուկի նման։ Տերևի եզրերը խոշոր, սուր-ատամ-
 նախոր են։ Տերևները խոշոր են՝ միջին հաշվով—88 մմ×81,5 մմ։
 Կոթունի երկարությունը 25—40 մմ է, միջին հաշվով— 34 մմ։
 Պտուղները հասունանում են ուշ ժամկետում— հուլիսի 15-ից



Նկ. 12. Համբանի պտուղները

մինչև օգոստոսի 10-ը: Պտուղների մասնայական հասունացումը աղղի է ունենում հուլիսի 20-ից մինչև օգոստոսի 5-ը: Պտուղներն ունեն միջին անծուխյուն, երբեմն մանր են լինում, միջին հաշվով — 48 մմ×46 մմ: Պտուղները կրորավուն են, սրածայր պաղաթով:

Ձաղարը տափակ է, որոշ պտուղների ձաղարն ունի միջին խորություն: Ակոսիկը խորն է, հասնում է մինչև պաղաթը, պողպակոթի մոտ ավելի է խորանում: Պողի դույնը ղեղնավուն-սպիտակ է, արևի կողմում աղնվամորու կարմրություն չափ, որ բռնում է պողի մինչև 1/3 մասը:

Մաշկը հաստ է (0,2 մմ), ամուր, պողամսից չի անջատվում, մի քիչ թավոտ է:

Պողամիսն սպիտակ է, որովայնակարի մոտ քիչ կպած է կորկղին, քիչ հյութալի է, հյութն անդույն է:

Հյութավածքը մսոտ է, խոթխոթան: Պտուղը քաղցրահամ է, առանց բուրմունքի:

Կարիզը երկարավուն-ձվաձև է, սաստիկ խորտուրորտ մակերեսով: Որովայնակարի վրա միջին կողը խիստ դուրս է ընկած, իսկ կողքի կողերը շատ ավելի քիչ են դուրս ընկած և հիմքի մոտ չբանում են: Թիկնակարը բոլորովին ծածկված է: Կորիզը դարչնադույն է, մանր՝ միջին հաշվով— 21,9 մմ×18 մմ ×9,5 մմ, ու կշռում է 1,7 գր. մինչև 2 գր., միջին հաշվով— 1,9 գր., որ կազմում է պողի ամբողջ քաշի 3,7%-ը:

Միջուկը քաղցր է, վիքը, համեղ:

Համրան սորտի պտուղների պարունակած շաքարներն ու չոր նյութերը բարձր տոկոս են կազմում:

Աղյուսակ № 20

ՀԱՄԲԱՆ ՍՈՐՏԻ ՊՏՈՒՂՆԵՐԻ ԲԻՄԻԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ (0/0 0/0)

| Ջուր | Չոր նյութեր | Շաքարներ | Ֆեղուկցվող շաքարներ | Սպիտակուղ | Գլյուկոզ | Պտղաքար | Թաղանթանյութեր | Թթվություն | Մոխիր |
|--------|-------------|----------|---------------------|-----------|----------|---------|----------------|------------|-------|
| 78,46 | 16—95— | 10,85— | 3,53— | 6,95 | 2,77— | 0,75— | 0,55— | 0,13— | 0,71— |
| —83,05 | —21,54 | —18,0 | 6,11 | —11,29 | —4,81 | —1,30 | —1,00 | —0,77 | —0,78 |

Այս սորաբ միջին չափով է տարածված : Սխառ բերքատու է — մի ծառից ստացվում է մինչև 320 կիլոգրամ պտուղ : Այս սորաբի էակնան թերությունը նրա համեմատաբար սակավ դիմացկունությունն է սառնամանիքների նկատմամբ : ՄԵԾ չափով դիմանում է փոխադրմանը : Պտուղները պիտանի են միաճն թարմ միճակում գործածելու և քաղցրալենիք պատրաստելու համար : Ղեկոնդի սորաբ թե իր սաղարթով և թե տերևներով ու պտուղներով շատ նման է համբան սորաբին : Նրա պտուղները հասունանում են համբանի պտուղների հետ միաժամանակի, բայց որովհետև նրա պտուղներն իրենց սրակով խիստ դիջում են համբանի պտուղներին, նա հանված է Հայկական ՄՍՈ-ի պտղատու կույտուքաների ստանդարտ ասորաբիմենսից :

Ծաղիտակեն բծախորտությունից պիտավելու նկատմամբ ղեկոնդի սորաբ տեղական սորաբերի մեջ միջին տեղն է բռնում : Ինքնատերի է, նրա լավագույն փոշոտիչն է արուժխայրին, ինքն էլ իր հերթին լավ փոշոտիչ է վերջինի համար :

Ծառն ունի միջին մեծություն, 7,9 մետր բարձրություն և բնի 34 սմ տրամագիծ : Կեղևը դարձնապույն է : Ճյուղերը կարմրավուն-մսխրապույն են, հասա, կարծ :

Սաղարթը հասած է՝ 8,7 մետր տրամագծով :

Ծաղիկներն ունեն միջին մեծություն, սպիտակ են : Բաժակատերևիկները կոնաձև են, պրակաթերթիկները հարթ-կյորաժուռ են :

Տերևները տափակ-կյորաժուռ են, մի քանիսները սրտաձև են : Տերևաթիթեղը միջին հաստություն ունի (0.2 մմ), մաշկանման է :

Տերևների գաղաթը մի փոքր ձյված ու ծալած է ղեպի ներքև : Տերևի հիմքը սուր է : Երբեմն հանդիպում են նաև բույթ հիմք ունեցող տերևներ : Տերևը ղեղնա-կանաչ գույնի է և դրանով տարբերվում է համբանի տերևներից : Տերևի եզրերը երկպիտուսը, կլոր-առամնափոր են :

Տերևները խոշոր են կամ ունեն միջին մեծություն — միջին հաշվով — 73,9 մմ × 81,5 մմ :

Տերևակոթը գունախորված է վերին կողմից, նրա երկարությունը 22 մմ—47 մմ է, միջին հաշվով — 27,7 մմ :

Պտուղները հանունանում են ուշ ժամկետներում, — հուլիսի 15-ից մինչև օգոստոսի 5-ը : Պտուղների մասնաքանկան հասունացումը տեղի է ունենում հուլիսի 20-ից մինչև 30-ը : Նրանք

ունեն միջակ մեծություն՝ միջին հաշվով— 44 մմ×43 մմ×37 մմ—
կշռում են 24 գր. մինչև 74 գր., միջին հաշվով— 44 գրամ :

Պատույները կլորալուն են, կողքերից մի փոքր տափակած-
պողի դազաթը տափակ է և դրանով տարբերվում է համբանեի
պատույններից :

Պատույն ունի դեղնավուն-սպիտակ գույն, առանց կարմրու-
թյան, որ բնորոշ է տվյալ սորտի համար : Հաղվադյուսու դեղ-
քերում են հանդիպում այնպիսի պատույններ, որոնք արևի կող-
մում կարմրություն են ունենում :

Մաշկը հաստ է (0,2 մմ), մի քիչ թավոտ, պտղամսից չի
անջատվում : Պողամիսն սպիտակ է, կորիզին կպած չէ, հյու-
թարի է : Հյութին անգույն է :

Պողամսի հյուսվածքն ամուր է, խոթխոթան, մսոտ :

Պատույնները քիչ քաղցրություն ունեն, անհամ են և անբույր :

Կորիզը ձվաձև է, ունի խիստ խորտուբորտ մակերես : Որո-
վայնակարի վրա միջին կողն առանձնապես շատ է դուրս ընկած,
կողքի կողերը դուրս են ընկած կորիզի միայն միջին մասում,
իսկ դազաթի և հիմքի մոտ չքանում են : Թիկնակարը բացված է
ամբողջ երկարությամբ, բայց վիճում են նաև այնպիսի կորիզ-
ներ, որոնց կարը բացված է հիմքի և դազաթի մոտ, իսկ կարի
մնացած մասը ծածկված է լազմաթիվ ծակոտիներով : Կորիզը
մուգ-դարչնագույն է :

Կորիզն ունի միջին մեծություն — միջին հաշվով— 24 մմ×
×18,8 մմ—12 մմ. կշռում է 0,9 գր.—ից 3,2 գր., և կազմում
է պողի ամբողջ քաշի 4%-ը :

Միջուկը քաղցր է, մեք :

Ղեկնողու պատույնները ցածր տոկոսով են շաքարներ պարու-
նակում, իսկ չոր նյութերի պարունակությամբ՝ տեղական սոր-
տերի մեջ միջին տեղն են թռնում :

Պ. դյուսակ № 22

ՂԵՎՈՆԳԻ ՍՈՐՏԻ ՊՏՈՒՂՆԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԸ (‰ ‰)

| | Ջուր | Չոր նյութեր | Շաքարներ | Ռեզուկտիվ շաքարներ | Սախարոզ | Գլյուկոզ | Պտղաշաքար | Քաղցր- մսի նյութ | Քլորոթյուն | Մոխիր |
|------------|--------|-------------|----------|-----------------------|---------|----------|-----------|------------------------|------------|-------|
| Ցա- տան | 79,71 | 13,49 | 7,26 | 4,70 | 2,80 | 3,1 | 1,60 | 0,54 | 0,09 | 0,52 |
| մի- ջին | -86,51 | -20,29 | -11,8 | -6,45 | -5,09 | -4,53 | -1,92 | -1,25 | 0,28 | -0,82 |
| | 84,78 | 14,54 | 7,16 | 4,70 | 2,80 | 3,50 | 1,60 | 0,65 | 0,13 | 0,57 |

ՍԵՂԱՆԻ ՍՈՐՏԵՐ

Սեղանի սորտերի ենթախմբի մեջ մտնողները գլխանում են ժողովարման, իսկ այդ հատկութիւնը խիստ հազվագյուտ է ծիրանի սորտերի նկատմամբ:

Այդ սորտերի պտուղները խոշոր են, սպիտակամիւս:

Դրանց թփին են պատկանում համրան, դեղինդի սորտերը, որոնց նկարագրութիւնն արդէն արված է կոնսերվային սորտերի ենթախմբում, և խարջի № 2 սորտը:

ՉՈՐ-ՄՐԳԱՅԻՆ ՍՈՐՏԵՐ

Այս խմբի սորտերին է պատկանում միայն աբութալիբին, որը տալիս է բազիկան լափ՝ որակի և մեծ քանակով չոր միջդ: Տվյալ սորտի մանրամասն նկարագրութիւնն արդէն արված է կոնսերվային սորտերի ենթախմբում:

ԾԻՐԱՆԻ ՍՈՐՏԵՐԻ ՈՐՈՇԵԶԸ

1. Պատուգներ՝ լավ անջատուկ կորիզով (2)
0. Պատուգներ՝ չանջատուկ կամ վատ անջատուկ կորիզով (7)
2. Պատուգներ բաց դուխնի, համարյա սպիտակ (3)
0. Այլ դուխնի պատուգներ (14)
3. Խոշոր և միջին մեծության պատուգներ (4)
0. Մանր պատուգներ (6)
4. Կլորափուն պատուգներ (5)
0. Օվալաձև պատուգներ (6)
5. Պատուգներ՝ կարմիր երանդափորումներով: Պաղամխը սպիտակ է, փխրուն, կորիզը երկարափուն-ձվաձև է, որովայնակարի խնամ դուրս բնկած միջին կողով: Կորիզի գույնը թու սպաղամխը մասամբ կարծ է կորիզին: Պատուգները հասունանում են ուշ ժամկետներում ՀԱՄԲԱՆ:
0. Պատուգները հաղվողեպրեն ծածկված են լինում նրբին-կարմրությամբ: Պաղի գաղաթը ստիակ է: Պաղամխը սպիտակ է: Կորիզը ձվաձև է, թիկնակարը հաճախ բացված է լինում սամբոջ երկարությամբ: Պատուգները հասունանում են ուշ ժամ-կետներում: ՂԵՎՈՆԻԻ
6. Պատուգները ստիակ-կլորափուն են, չլուծափորված: Շատ բացը են: Կորիզը կլորափուն է, թիկնակարը բացված է սամբոջ երկարությամբ: Պատուգները հասունանում են միջին ժամկետներում ԱՂՋԱՆԱՅԱՅԻ
0. Պատուգները գունավորված չեն: Կորիզը երկարափուն է, վիզիկով, բաց-դարչնագույն: Պատուգները հասունանում են միջին ժամկետում: ՍԱՐԻ ԹՍԼԱՐՁԱ
7. Պատուգները բաց-դուխն ունեն (կանաչափուն-սպիտակ դուխնից մինչև կրեմի գույնը) (8)

- 0. Պատուհները նարնջագույն են կամ սպիկի բաց գույնի (13)
- 8. Պատուհները կրքափուն են (9)
- 0. Պատուհները կրքափուն-ձվածե են (11)
- 9. Պատուհները մանր են (10)
- 0. Պատուհները միջին մեծության են (12)
- 10. Պատուհներն ունեն փառ կարմրություն, պողամխար սպիկ-
ուցի է, կորիզը կղած է պողամխին, հակադարձ-ձվածե է,
բաց-դարձնագույն: Պատուհները հասունանում են փաղ ժամկեա-
ներում: ՆԱՆԻՉԵՎԱՆԻ ԿԱՐՄԻՐ

0. Պատուհները գունավորված չեն, պողամխին սպիտակ է: Կորիզը լիովին չի անջատվում, ձվածե է: Թիկնակարը բացված է ամբողջ երկարությամբ, սրտիայնակարը հատարի մաս կարը-
փած է ակոսավորված: Պատուհները հասունանում են փաղ ժամ-
կեաներում: ՍՊԻՏԱԿ ՆՈՎՐԱՍ

11. Պատուհներն ունեն կորիզ կարմրություն: Պողամխին սպի-
տակ է, կորիզը ո՛չ բարբոսին աղաս է անջատվում, ձվածե է,
մուգ-դարձնագույն: Պատուհները հասունանում են փաղեց-միջին
ժամկեաներում: ՆԱՆԻՉԵՎԱՆԻ ՍՊԻՏԱԿ

Պատուհները սիմետրիկ չեն, ունեն կարմրություն: Կորիզը
ձվածե է, սրածայր գագաթով: Թիկնակարը բացված է ամբողջ
երկարությամբ: Կորիզը մուգ-դարձնագույն է: Պատուհները հա-
սունանում են փաղեց-միջին ժամկեաներում: ԽՈՒՐՄԱՅԻ

0. Կորիզը հարթ-կլորափուն է, մուգ-դարձնագույն: Թիկ-
նակարը բաց է միայն հիմքի մաս: Որտիայնակարի վրա խիստ
դուրս է ընկած միջին կողմ: ԲԱՆՅԱՐՄԻՐ

13. Պատուհները լայն-ձվածե են, միջին մեծությամբ, պողա-
մխար սպիկուցի է: Կորիզը տափակ է, սպունկանման մակերե-
սով: Պատուհները հասունանում են միջին ժամկեանում: ԽՈՒՐՄԱՅԻ

0. Պատուհները կողքերից խիստ տափակած են, կրքափուն,
միջին մեծության կամ մանր, ունեն ինտենսիվ կարմրություն:
Պողամխար նարնջագույն է: Կորիզը հակադարձ-ձվածե է: Պը-
տուհները հասունանում են փաղ ժամկեաներում:
ԿԱՐՄԻՐ ՆՈՎՐԱՍ

14. Պատուհները սպիկուցի-դեղին են (15)

0. Պատուհներն առ դուցի են (18)

15. Պատուհներն օվալածե են (16)

0. Պատուհները կրքափուն են (17)

16. Պատուհները շատ խոշոր են, լավ բուսավորվողները կար-
մբուրվում ունեն: Պաղի հիմքը ձգված է, ձաղարի պտուրը
ձաղբափր են: Կորիզը երկարափուն է, վրիկով, կոկիկ մակե-

րեսով, հաճախ ունենում է ճեղքվածքներ: Պատուհները հասունանում են վաղից-միջին ժամկետներում:

0. Պատուհները կողքերից մի փոքր տափակած են, մի քիչ սուր զազաթով, միջին մեծութուն ունեն, կարմրավուն են: Կորիզը երկարավուն է, զազաթի մոտ նեղանում է: Թիկնակարը ծածկված է: Պատուհները հասունանում են միջին ժամկետներում: ՕՐԴՈՒՅԱԴԻ

17. Պատուհները խոշոր են, ծածկված են քնքույշ կարմրությամբ: Պաղամխը բաց-նարնջազույն է: Պատուհները հասունանում են միջին ժամկետներում: Կորիզը ձվաձև է, փոթոտ, փոքրիկ վզիկով: Որովայնակարի վրա խիստ դուրս է ընկած միջին կողը: ԽՈՍՐՈՎՇԱՀԻ

18. Պատուհները կանաչավուն-դեղին են կամ դեղին (19)

0. Պատուհները նարնջազույն են կամ կանաչավուն-նարնջազույն (26)

19. Պատուհները օվալաձև են (20)

0. Պատուհները օվալաձև չեն (22)

20. Պաղամխը ոսկեզույն-նարնջազույն է (21)

0. Պաղամխը ոսկեզույն է, կանաչավուն երանգավորումով. պատուհները խոշոր են. պաղի հիմքը փոթոտ է: Կորիզը երկարավուն է, վզիկով՝ բաց-դարչնազույն է: Որովայնակարի վրա միջին կողը խիստ դուրս է ընկած: ԳՅՈՅ-ԲԱԴԱՄ

21. Պատուհներն ունեն միջին մեծութուն, աչնվամորու ինտենսիվ կարմրութուն: Պաղի հիմքը մի փոքր ձգված է, փոթոտ: Գազաթը լայն է: Կորիզը երկարավուն է, զազաթի մոտ-լայն: ՍԱԻԻ-ԲԱԴԱՄ

0. Պաղի հիմքը ձգված չէ, զազաթը սեղմ է: Պատույը թույլ կարմրութուն ունի: Կորիզը երկարավուն է, վզիկով: Պատուհները հասունանում են վաղից-միջին ժամկետում: ԲԱԴԱՄԻ

22. Պատուհները ձվաձև են կամ երկարավուն-ձվաձև: (23)

0. Պատուհները կլորածև են, կողքերից տափակած, պտղա-կոթի մոտ՝ բշտիկավոր, ունեն միջին մեծութուն կամ մանր են: Պաղամխը սպլտակ է, կանաչավուն երանգավորումով: Կորիզը ձվաձև է, բաց-դարչնազույն: ԳՅԱՄ-ԳՅԱՄ

23. Պատուհները երկարավուն-ձվաձև են, խիստ ձգված, փոթավոր հիմքով. պաղի զազաթը սուր է: Պաղամխը նարնջազույն է, զազաթի մոտ կանաչավուն երանգով: Կորիզը երկարավուն է, երկար վզիկով և խորտուրորտ մակերեսով: Պատուհները հասունանում են վաղից-միջին ժամկետներում: ԲԱԴԱՄ-ԱՐԻԿ

0. Պատուհները ձվաձև են (24)

24. Պատուհները միջին մեծություն ունեն (25)

0. Պատուհները մանր են, սրածայր դադաթույլ, խնտնախիկ կարմրութեամբ: Պողամիսը սակեղուցն է: Կորիզը երկարավուն է, դադաթի մոտ նեղանում է: Թիկնակարը բացված է ամբողջ երկարութեամբ: Պատուհները հասունանում են ուշ ժամկետում: ԱՌՈՒԹԱՒԻՅԻ

25. Պատուհները երբեմն կլորավուն են: Պողամիսը կանաչադուն-կրեմագուցն է: Կորիզը ձվաձև է կամ կլորավուն, կողքերից խիտա տախակած: Թիկնակարը բացված է ամբողջ երկարութեամբ: Որովայնակարի վրա միջին կողը խիտա դուրս է ընկած: Պատուհները հասունանում են միջին ժամկետներում: ԽՈՅԻ

0. Պատուհները կարմրություն չունեն: Պողամիսը դեղնադուն-սպիտակ է: Կորիզը երկարավուն-կլորավուն է: Թիկնակարը բոլորովին ծածկված է, սրովայնակարի վրա բոլոր կողերը դուրս են ընկած: ԱՎԹԱԼԻՅԻ

26. Պատուհները կլորավուն են, կողքերից սափակած: Ծածկված են զորչափուն կարմրութեամբ: Պողամիսը նարնջագուցն է: Պատուհները յուրահասուկ համ են տալիս: Կորիզը կլորավուն է: Թիկնակարը բացված է միայն հիմքի մոտ: Կորիզը մուգ-դարչնագուցն է: ԹԱԲԱՐՉԱ

0. Պատուհները հարթ-կլորավուն են: Պողամիսը նարնջագուցն է, շատ քաղցր: Կորիզը կլորավուն է, ունի հարթ մակերես: Թիկնակարը բացված է ամբողջ երկարութեամբ: Որովայնակարի վրա բոլոր կողերը դուրս են ընկած, դրանք դադաթի մոտ ծոլում են: ԳՅՈԳՁԱՆԱՄԱԴ

(Տես հավելվածներ՝ 1, 2 և 3)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԻՐԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՐՏԵՐԻ ԱՌՅՈՆԱՅԻՆՈՒԹ, ԱՐՐՄԵՆԻ ԿՈՄՄԻՆԵՐ ԵՎ ՏԵՂՄԱՆ ՍՈՐՏԵՐԻ ԱՆՈՒՄԵՆԱԿՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԻ ԵՎ ԱՐՐ. ԸՆԴՈՒՆՎԱԾ ԱՐՐ. ՀԱՍՏԱՆԿԱԾ ԵՎ ՀԱՅՄԱՆ ՍՈՐՏՆԵՐԻ ՀՈՐԴՆԱԿՆԻ ԿՈՐԿՐՑ (1940 թ.)

РАЙОНИРОВАНИЕ СОРТОВ АБРИКОСА В АРМЕНИИ, СОСТАВЛЕННОЕ НА ОСНОВАНИИ ИЗУЧЕНИЯ МЕСТНЫХ СОРТОВ, ПРИНЯТОЕ И УТВЕРЖДЕНОЕ НКЗЕМОМ АРМ. ССР (В 1940 г.)

| | | Աշխարհարկան և վարչական սահմաններ Географические и административные районы | | | |
|-------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------|
| Սորտերի անունները Название сортов | Հայաստ. հարավի դաշտա-վայրերը, Համարտի, Հովանյին ջրան, Կասա-Հովանյան ջրային, Վարդ-բի, Ատարաթի (Կենտրոնական, Վերին, Զանգի-ձախ), Քաղիկի, Կարաբա-բաշարի հարթ. մասերը: | Հայաստ. հարավի հովան-վայրերը, Համարտի, Հովանյին ջրան, Կասա-Հովանյան ջրային, Վարդ-բի, Ատարաթի (Կենտրոնական, Վերին, Զանգի-ձախ), Քաղիկի, Կարաբա-բաշարի հարթ. մասերը: | Հարավ-արևելյան մաս, գեղերի, Ախաթի, Սար-տունտ: | Մեծամորի գոտի, Բասար-տունտ: | Виды использования |
| Название сортов | Низменная зона юго-Ар-мени, Камарлинский, Темберанский, Вагарша-патский, Вединский, Зан-гибасар южная часть. | Предгорная зона юго-Ар-мени Котайкский, Антаракский (центр-патский, Вединский, Зан-часть), Таинский, Кара-бахларский. | Ю-восточная часть Даралагаз, Мегри | Горная зона-Басаргечар-ский, Ахтинский, Марту-нинский | |
| | | Ուղղություններ—Направление | | | |
| | | Աղյուսակային-հարթ առ-Աղյուսակային* Ատարաթի | Աղյուսակային Սեբրեզ | Տեղական սպառման | |
| | | հնդկ կոնսերվի արդյուն. և Կասաթի կոնսերվի հուստի, ինչպես նաև արդյունաբեր. նամար Թարմ մրգերով սպառման համար լու խնդիրը | Աղյուսակային Սեբրեզ կոնսերվի արդ. և չորաց-ման նամար, Միկոյանում չորացման նամար | Մեծամորի սպառման | Местное потребление |
| | | Промышленно с учетом обеспечения юго-про-мысла сырем, а также для северо-потребления | Промышленное в Аста-консерв. и сухо-фрукто-вое в Микояно сузофр. | Промышленное в Мегри консерв. и сухо-фрукто-ное в Микояно сузофр. | |
| 1. Շալախ Шалах | I | I | I | - | Վերաշահում, Թարմ վիճակում գործածելու Переработка, свежее |
| 2. Լոսրովանի Лосровани | I | II | I | - | Վերամշ. չոր և Թարմ перераб. сушка, свежее |
| 3. Համբան Амбан | I | I | I | - | » » » |
| 4. Արտաթախի Абутахлиби | I | I | I | - | » » » |
| 5. Թարաթա Табарза | I | I | I | - | » » » |
| 6. Նախիվ. կարմ. Нахичеван, кр. | I | - | - | II | » » » |
| 7. ԳրոգՆանաբ. Геогдаванбад | I | I | I | - | » » » |
| 8. Սարի-բաղամ Сари-бадам | II | I | I | - | չորացում և Թարմ сушка, свежее |
| 9. Բալ-արիկի Бал-арыки | - | I | I | - | Վերամշ. » » перераб. » » |
| 10. Գրոյ-բաղամ Гол-бадам | - | - | I | - | չորաց. վերամշ. և Թարմ сушка перераб. и свежее |
| 11. Սարի-Թարաթա Сари-Табарза | II | - | I | - | չորաց. » » сушка » » |
| 12. Բնորված կարճիներ Сдобрянные хурджи | II | - | I | - | Թարմ վիճ. և չորացման նա- մար свежее, сушка |
| 13. Խուրիկի Хуриси | - | - | I | - | Վերաշահման և չորացման նամար переработка и сушка |

«ՆԱԲԱԾ» ԱԵՐԲԱԼՄԵՆՏԱԿԱՆ ՊՏՈՒՂՆԵՐԻ ԲԻՄԻՆԱԿԱՆ ԲԱՂԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ (0/0¹⁰)

(Կայանի ըմբ. լարորատորիայի ալյաները 1935 և 1936 թ. թ.)

| №. Ա. Բ. Կ. | Ստորի անունը | Ջուր | Չող նյութեր | Տաճար | Ուղեղիկի շարժումներ | Սախարոզ | Քլոսիդա | Պարմազոա | Քաղանկա- նյութեր | Քլոսիդա նյութ | Սոխիլ |
|-------------|---------------------------------|-------|----------------|-------|------------------------|---------|---------|----------|---------------------|------------------|-------|
| 1 | Ս. Բ. Մ. Ա. 1 | 81,54 | 15,65 | 10,45 | 5,42 | 6,60 | — | — | 1,17 | 2,29 | 0,58 |
| 2 | » » Ա. 6 | 77,77 | 22,23 | 14,46 | 3,98 | 9,95 | 0,73 | 3,25 | 1,35 | 0,98 | 0,70 |
| 3 | » » Ա. 13 | 79,39 | 20,61 | 12,02 | 4,55 | 7,09 | 2,83 | 1,72 | — | 1,30 | 0,77 |
| 4 | » » Ա. 2 | 85,67 | 14,33 | 8,03 | 2,42 | 5,33 | 2,02 | 0,40 | — | 1,85 | 0,72 |
| 5 | » » Ա. 1 | 84,96 | 15,04 | 8,73 | 3,41 | 5,05 | 2,30 | 0,51 | — | 1,03 | 0,62 |
| 6 | » » Ա. 4 | 84,04 | 15,38 | 10,47 | 2,28 | 8,25 | 1,30 | 0,38 | 0,69 | 0,83 | 0,68 |
| 7 | » » Ա. 9 | 84,93 | 15,07 | 9,64 | 2,57 | 6,83 | — | — | 0,84 | 2,68 | 0,59 |
| 8 | » » Ա. 1 | 81,57 | 18,43 | 10,45 | 3,28 | 6,81 | 2,61 | 0,67 | 1,13 | 3,26 | 0,52 |
| 9 | (ալյ. կայ.) » » Ա. 1 | 82,28 | 17,74 | 12,47 | 3,72 | 8,31 | 2,50 | 1,22 | 0,66 | 1,53 | 0,54 |
| 10 | Ուղղ. տան ալ դի» » Ա. 2 | 84,11 | 15,89 | 10,5 | 3,89 | 6,28 | 3,19 | 0,70 | — | 0,24 | 0,68 |
| 11 | (Քանաքեռ) » » Ա. 2 | 81,90 | 18,10 | 12,55 | 2,58 | 9,47 | 2,12 | 0,46 | 0,60 | 2,08 | 0,81 |
| 12 | (Ուղղ. տան) ալյի » » Ա. 1 | 79,95 | 20,05 | 14,06 | 3,19 | 10,32 | 2,46 | 0,73 | — | 0,56 | 0,66 |
| 13 | (Քանաքեռ) » » Ա. 5 | 81,28 | 18,72 | 11,59 | 4,10 | 7,11 | 2,33 | 1,77 | 0,61 | 1,04 | 0,84 |
| 14 | (Ուղղ. տան) ալյի » » Ա. 6 | 78,69 | 21,13 | 10,75 | 3,55 | 6,84 | 1,26 | 2,25 | 0,82 | 1,30 | 1,00 |
| 15 | » » Ա. 2 | 85,39 | 14,61 | 9,31 | — | — | — | — | 0,87 | 1,39 | 0,76 |

ՄԻԿՐՈՅԱՆ ԾՐՋԱՆԻ ԾԻՐԱՆՆԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԲԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ (Պ, Պ₀)

(Կալանի ավարտեր՝ 1938 թ)

| Ստորի անունը | Չոր նյութեր | Ընդհանուր շաբաբներ | Նեղրակցող շաբաբ | Ստանդարտ | Քիմիական | Մակեր | Ծանոթություն |
|--------------------|-------------|--------------------|-----------------|----------|----------|-------|--------------------|
| Միկրոյանի № 1 ծառ | 19,90 | 11,20 | 3,60 | 7,22 | 1,00 | 0,14 | Գեր նասունացած |
| » » № 2 ծառ | 28,40 | 11,00 | 3,60 | 7,03 | 1,70 | 0,65 | |
| » » № 3 | 21,33 | 14,00 | 3,60 | 9,79 | 1,83 | 0,67 | |
| » » № 26 ծառ | 17,59 | 13,00 | 3,55 | 9,74 | 1,38 | 0,45 | |
| » » № 23 | 19,36 | 15,00 | 3,60 | 10,83 | 1,00 | 0,74 | |
| » » Գյուղջան. | 23,66 | 14,70 | 4,45 | 9,73 | 0,94 | 0,67 | |
| » » № 25 ծառ | 22,96 | 12,20 | 3,75 | 8,02 | 0,31 | 0,77 | Քիմի գերնասունացած |
| » » » | 23,28 | 15,50 | 4,10 | 10,83 | 2,01 | 1,02 | |
| » » № 22 | 22,61 | 13,00 | 3,85 | 8,69 | 2,64 | 0,67 | |
| » » № 35 ծառ | 17,92 | 12,00 | 2,55 | 8,97 | 1,22 | 0,78 | |
| » » » | 18,05 | 12,15 | 3,68 | 8,04 | 1,21 | — | |
| Օրվաբայանի գ. շախի | 17,79 | 9,50 | 3,90 | 5,32 | 0,62 | 0,80 | |
| » » № 8 ծառ | 18,39 | 10,70 | 3,85 | 6,50 | 1,69 | 0,56 | |
| » » № 9 | 17,63 | 10,70 | 3,35 | 6,98 | 1,69 | 0,52 | |
| Մալիսիա գ. | 15,50 | 8,30 | 1,95 | 6,03 | 1,51 | — | գերնասունացած |
| » » № 14 ծառ | 24,37 | 14, 2 | 3,75 | 9,93 | 0,88 | 0,85 | |
| » » № 11 ծառ | 15,62 | 8,90 | 2,45 | 6,13 | 1,57 | 0,50 | |
| » » № 10 | 16,51 | 11,00 | 3,10 | 7,50 | 0,63 | 0,71 | |
| » » № 13 ծառ | 14,95 | 9,50 | 2,30 | 6,84 | 1,83 | 0,60 | |
| » » № 12 ծառ | 19,69 | 12,20 | 3,50 | 8,26 | 1,13 | 0,83 | |
| Այսր .գ | 16,53 | 9,85 | 3,13 | 6,38 | 2,10 | — | |
| » » » | 16,40 | 9,22 | 2,23 | 6,65 | 1,57 | — | |
| » » — ծառ № 21 | 24,43 | 14,00 | 5,80 | 7,79 | 0,57 | 0,82 | |
| » » — » № 20 | 17,83 | 12,20 | 2,65 | 9,07 | 1,32 | 0,60 | |
| » » — » № 19 | 16,05 | 10,30 | 3,60 | 7,30 | 1,07 | 0,39 | |
| » » — » № 15 | 18,75 | 10,50 | 4,60 | 5,60 | 2,71 | 0,60 | |
| ԳԼՏԱԻ Գ. № 29 | 21,50 | 14,00 | 4,25 | 9,26 | 1,70 | 0,60 | գերնասունացած |
| ՇԱՏԻԿ Գ. Տ. № 33 | 15,03 | 8,70 | 2,65 | 5,74 | 1,57 | 0,65 | |
| » » » | 18,56 | 10,70 | 4,35 | 6,03 | 1,51 | 0,57 | |
| ՄԻՋԻՆ շախի | 19,35 | 11,69 | 3,51 | 7,8 | 1,45 | 0,65 | |

Р Е З Ю М Э

Работа „Абрикосы Армении“ составлена на основании 8-ми летнего изучения местных сортов как путем экспедиций, так и стационарного изучения. Научным исследованием охвачены в основном районы промышленной культуры абрикоса.

Характеристика сортов составлена на основании изучения их в течение ряда лет в различных районах, причем помологическое описание дано на основании изучения не менее 100 плодов каждого сорта.

Изучена биология цветения стандартных сортов в полевых условиях, результаты подтверждены лабораторными данными. Произведен учет урожая в совхозах и колхозах в течение 3-х лет.

Качественная оценка плодов как в свежем, так и в переработанном виде устанавливалась дегустационными комиссиями станции, Армконсервтреста, а некоторых сортов и Главконсерва.

Абрикос в Армении культивируется с глубокой древности (за 2000 лет до нашей эры). Он здесь сосредоточен главным образом в районах Араратской низменности и прилегающих к ней предгорных районах, поднимаясь до 2100 м. над уровнем моря, а также в районе им. Микояна и Мегри.

Во всех вышеприведенных районах он наряду с персиком является основной плодовой культурой.

В 1940 году абрикосом занята была 16% всей площади занятой плодовыми насаждениями.

По богатству сортового состава и по качествам плодов первое место надо отнести районам Араратской низменности, особенно Берийскому району (близ г. Еревана).

Основная масса продукции абрикоса перерабатывается на консервных заводах Еревана и Мегри, а незначительная часть подвергается солнечной сушке в селе им. Микояна и Мегри. В последние годы в связи с увеличением площадей насаждений—часть абрикоса вывозится в свежем виде в союзные центры—Москву, Ленинград и др.

В Армении большая часть абрикосовых насаждений находится на каменистых склонах, как например, в районе им. Микояна, Мегри и южных склонах Алагеза. Несмотря на вышеуказанные почвенные условия, абрикос у нас достигает мощного развития: деревья среднего возраста имеют высоту от 7 до 10 метров и хорошо облиственную крону, диаметром до 10—11 метров.

Абрикос выносит значительные морозы (27° С). В Армении, в условиях низменной зоны, где весна и осень очень не устойчивы, он страдает от ранних осенних и поздних весенних заморозков.

В северо-восточных районах Армянской ССР абрикосу причиняют довольно большой ущерб атмосферные осадки в период цветения.

Созревание плодов армянских сортов абрикоса, по сравнению с абрикосами др. районов, довольно продолжительное. Оно растягивается на 2 месяца, начиная с 10/VI и заканчивается 10/VIII, в то время как в других районах созревание протекает максимум в течение 1,5 месяцев.

Основная масса сортов созревает в течение июля месяца. Благодаря продолжительности вегетационного периода (до 257 дней) и высокой температуры, в течение вегетации, в низменной зоне абрикос всегда имеет вторичный рост, а в некоторые годы наблюдается даже третий рост.

Характерной особенностью армянских абрикосов, по нашим исследованиям на Плодовиноградной станции, является их практическая самостерильность. Поэтому в посадках для обеспечения урожая они требуют соответствующих опылителей.

Абрикос в Армении рано вступает в плодоношение (на 4—5 году), а с 10-летнего возраста дает уже значительные урожаи.

По нашим наблюдениям продуктивность его повышается до 20-летнего возраста, после чего урожай его бывает относительно стабильными и только после 40 лет урожайность начинает падать. В возрасте 60—70 лет он даст еще значительные урожаи.

В периоде полного плодоношения в зависимости от сорта урожай с дерева достигает от 100 до 400 кгр.

Изучение показало, что абрикосы Армении отличаются исключительно большим разнообразием форм и сортов. По самым основным признакам их можно разбить на множество групп, ценных по тем или другим хозяйственно-технологическим качествам и свойствам.

В пределах этих групп существует множество вариаций и клонов с теми или другими характерными особенностями.

Наличие в Армении большого количества сортов, размножаемых семенами, увеличивает еще больше это многообразие. В основном многообразием отличаются плоды.

По вкусу семени местные абрикосы делятся на сладко-ядерные, к которым относится большая часть местных абрикосов (все привитые и некоторые разновидности сеянцев „харджи“), и с горьким ядром, куда относится основная масса разновидностей „харджи“. По величине плодов встречаются от мелких (весом в 20 гр.) до весьма крупных (весом в 95—100 гр.), большая-же часть плодов среднего-размера (весом в 40—60 гр.).

Форма плодов варьирует от плоскокруглых до удлиненно-яйцевидных. По окраске плодов встречаются от белых до ярко-оранжевых. Подавляющее большинство местных сортов имеют плоды с хорошо отделяющейся от мякоти косточкой, но встречаются также сорта и с совершенно неотделяющейся косточкой.

Косточка у большинства сортов мелкая, составляет от 2,5—4% веса плода, но встречаются плоды и с крупной косточкой, особенно в группе харджи, у которых косточка составляет до 25% веса плода.

Плоды местных сортов абрикоса довольно богаты сахарами и сухим веществом, но бедны кислотами. Процент сахаров колеблется от 7,9 до 15,8%—в среднем 12,24% сухого вещества от 14,06 до 26,7%—в среднем 19,47% а кислот от 1,68—0,23%—в среднем 0,60%.

Все местные сорта абрикоса по хозяйственно-технологическим качествам нами разбиты на следующие группы: ранние (10/VI—25/VI), ранне-средние (26/VI—10/VII), средние (11/VII—30/VII), поздние (25/VII—10/VIII). Каждая из них в свою очередь делится на сорта, годные для переработки (компоты и пюре-повидло), сушки и потребления в свежем виде.

Абрикосы среднего срока созревания наиболее богаты ассортиментом и наиболее высококачественные. Среди них встречаются, как столовые, сухофруктовые, так и сорта годные для переработки. Абрикосы же раннего и позднего срока созревания сравнительно бедны сортиментом. В них, особенно у ранних сортов, мало высококачественных сухофруктовых и компотных сортов.

Ввиду богатства местных абрикосов высококачественными сортами, стандартный ассортимент абрикосов Армении составлен исключительно из местных сортов. Кроме привитых сортов зарайонированы также, отобранные станцией в процессе изучения, некоторые номера сеянцев, отличающиеся относительно большой морозоустойчивостью, устойчивостью к дырчатой пятнистости и высококачественными плодами.

В работе приводится подробное морфологическое описание и химико-технологические и биологические особенности 30-ти местных сортов.

Составлен их определитель по плодам. Приведена таблица районирования сортов абрикоса, проведенная на основании наших исследований и утвержденная Наркомземом Армянской ССР.

ՆԱՅՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

1. ԱԼԻՇԱՆ—Հայրենակի 1885 թ.
2. ԱՄԲԱՐՇՈՒՄՅԱՆ Մ. Ա.—К изучению вопроса морозостойкости плодовых культур (труды по вопросам плодоводства и овощеводства, выпуск 1936 г.).
3. АФРИКЯН Б. Л. и ДЕДУРЯН Г. Е.—Изучение химич. состава местных сортов абрикосов Армении (труды по вопросам плодоводства и овощеводства, выпуск I, 1936 г.).
4. БАБАЯՆ А. и АВАԿՅԱՆ Շ.—Сортоустойчивость местных сортов абрикоса Армении против дырчатой пятнистости косточковых пород (труды плодовоовощев. станции, вып. I, 1936 г.).
5. ԴԻԼԱՆՅԱՆ Գ. Խ.—Стерильность, фертильность и подбор опылителей абрикоса и персика (труды плодовоовощев. станции, вып. I 1936 г.).
6. КОСТИНА К. Ф.—Абрикос (приложение 83-е к трудам по прикладной ботанике, генетике и селекции, 1936 г.)
7. ПАВЛЕНКО О. Н.—Биохимия абрикоса (Биохимия культурных растений, том VII, 1940 г.).
8. РОЛЛОВ А.—Очерк плодоводства Ереванской губернии (сборник сведений по плодоводству в Закавказском крае, выпуск II, 1899 г.).
9. ЭՆԿԻԿԼՈՓԵԴԻԱ ԳՐԱՆԱԾ—том I.
10. ՏԱՆԱԳՅԱՆ Մ. Բ.—Фенологические наблюдения над плодовыми (годовые отчеты за 1934—35 г.г.).
11. ԵՐԵՎԻՏԻՆՈՎ Փ. Վ.—Химия свежих плодов и овощей (2-е доп. издание 1933 г.).
12. WICKSON—California Fruit (перевод отдельных глав. Мелик—Пашаевой Е. А., 1936 г.).
13. WATLY L. H.—The Standard Cyclopedia of Horticulture (перевод Мелик—Пашаевой Е. А.).
14. ԿՄԱՆՅԱՆ Մ. Գ. „ Высотные зоны культурных растений
в Арм ССР.1926.

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|-------------------------------------------------------------------|------|
| Հեղինակի կողմից | էջ 3 |
| Ներածութիւն | 5 |
| Ծիրանի տարածման դոտինները և նրա տնտեսական նշանակութիւնը | 5 |
| Ծիրանի կուլտուրայի պատմութիւնը | 7 |
| Ծիրանի մշակութիւնը ՍՍՌ-ում | 7 |
| Ծիրանի մշակութիւնը Հայաստանում | 8 |
| Մի քանի տվյալներ ծիրանի բիոլոգիայի վերաբերյալ | 12 |
| Հայաստանի ծիրանների բնութագիրը | 23 |
| Կուլտուրական ծիրաններիններէ դասակարգման առթիւ | 28 |
| Հասունացման վաղ ժամկետի սորտեր | 29 |
| Կոնսերվային սորտեր | 33 |
| Հասունացման վաղից-միջին սորտեր | 36 |
| Կոնսերվային սորտեր | 43 |
| Զոր միբզ ավող սորտեր | 46 |
| Հասունացման միջին ժամկետի սորտեր | 51 |
| Սեղանի սորտեր | 52 |
| Զոր միբզ ավող սորտեր | 62 |
| Ուշ ժամկետներում հասունացող սորտեր | 75 |
| Կոնսերվային սորտեր | 75 |
| Սեղանի սորտեր | 83 |
| Զոր մրգային սորտեր | 83 |
| Ծիրանի սորտերի որոշելը | 84 |
| Р е з ю м ы | 93 |
| Նախած գրականութեան ցանկը | 97 |

ՎՋ 00261 Պատկեր 696, Տիրաժ 1000: Տպագրական 61/4 մամ: Մեկ մամուլում 38400 նշան: Հեղինակային 5,6 մամ: Ստորագրված է տպագրութեան 17/1 43 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, 1943



ՆԱԽՏՎԱՆՆ ԿՐԻՊԱԿՆԵՐ
ԿԱՐԳԱՂՈՒՅ ԱՌԱՋ ՌԻՉՂԵԼ

| ԿՅ | Վերեկց | Ներհից | Տպված է | Պեսք է կրճի |
|----|---------------------------------------------------------|--------|--------------------------------------------|----------------------------------------------------------------|
| 4 | 2 | | Սանադոյան | Սանահյան |
| 9 | Ազոլասակի 2-րդ օյրն. 1-ին տողը | 1 | Տեկարկերի նրաց | Տեկարկերի նրաց |
| 18 | | | | |
| 18 | Չեքից 3-րդ-4-րդ աս- ղերը կարգալ 9-րդ աս- ղից հետո | | Խուրճի Խուրճ. 35 ժժ Ծաված է 28 ժժ | Խուրճի Խուրճ, երկարուր. 35 ժժ Ծաված է 28 X 17 X 11 ժժ |
| 29 | Սկեմայում | 4 | | |
| 30 | | 19 | | |
| 30 | | | | |
| 31 | 15 | 16 | Հունիսի 10-ից | Հունիսի 12-ից |
| 34 | | 15 | Ազգենշանցիների | Ազգենշանցիների |
| 38 | | | Էջ 48 | Էջ 38 |
| 38 | | | Անդրեկոկասյան և Ժյուս | Անդրեկոկասյան և ժԻ լաբե |
| 38 | 1 | | | |
| 48 | | | Էջ 48 | Էջ 48 |



ԳԻՆԸ 5 Ռ.

A $\frac{\text{II}}{18637}$

Դ. Խ. ԺԻԼԱՅԱՆ
Աօրիկոսն Արմենի
(Նա արմենիոկոմ լոզնկե)
Արմգիզ. Երևան, 1943